

Հրատարակում
Արտատպարան
Ֆանիտ — Մաքարիա


ՀԱՅԹԱ ՄՈՒՍՏԵՔԱ

Գ. Յ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

1578



Գ Ո Ս Թ Ը Ն
1949



Σημείω

Worms, especially the *Hydrocotyle*.

Копирован 25 февраля 1950

Q. 3. Long Tough Texture

ՀԱՅԹԱՆ ՄՈՒՍՏԵՔԱՆ

Գ. Յ. ԶԱԳՄԱԳՃԵԱՆ

ԿԵԿ
582



«ՀԱՅԹԱՆ» ՏՊԱԳՐԱՆ

ԳՈՍԹԸՆ

1949



ՆՈՒՔԻ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԿՂԲՕՐՈՐԴԻԱ
ԱԼԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԻՆ

KEVORK H. CHAKMAKJIAN

PHIDIAS STREET NO. 11
LARNACA - CYPRUS.

ԶԱՅՆ ՄԸ ՀԱՅՈՑ ԱՏԱՆԱՅԷՆ

Սիրելի Հայրենակիցներս,

Ասանան Կիլիկիոյ փաղաֆներուն մէջ, ամենէն մեծը, ամենէն հարուստը եւ ամենէն Հայաբնակ փաղաֆն էր:

Բայց ափսոս որ հիմա ամենէն տուրք, ամենէն աղփար եւ ամենէն ոչինչը եղաւ:

Մարտը, Ձիւրուն, Այնթապ, Հանքը եւ Սիսի պէս աղփարիկ փաղաֆներուն Հայրենակցական Միութիւնները, մեծամեծ զոհողութիւններով յաջողեցան իրենց հայրենիքին տուտական յիշատակները մեկտեղ հաւաքել եւ անոնցմով կազմեցին մէկ մեկ գիրքեր եւ այդ գիրքերով անմահացուցին իրենց փաղաֆներուն անունները:

Մեղք որ, այս մասին Ասանայի Հայութիւնը անհոգ զտնուեցաւ եւ բոլորովին մոռացման դատապարտուեցաւ Հայոց Ասանան:

Մարտին որ Ասանայի Հայկական յիշատակները անմահացնող ոգին արքննար մեր մէջ ալ, որպէսզի մենք ալ կարենայինք պատրաստել մեր յիշատակարանը եւ անով անմահանար Հայոց Ասանան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ մեծամարտիկ փաղաֆն է:

Այս գործը կ'սպասենք մեր երիտասարդ ուժերէն: Պատմութիւնս այդ Յիշատակարանին մէկ պզտիկ նմուշը բոլոր ըլլայ. ունիմ մի խնդիր անհրաժեշտ գրուածքներ եւս, պատրաստ եմ զանոնք եւս յանձնելու մեր երիտասարդ ուժերուն, երբ կարենան անոնք այս ուղղութեամբ միութիւն մը կազմել:

Ասանայի Հայութիւնը 2 Դրոշմ

Գ. Յ. Զարգարեան

ԴԷՄՔԵՐ ՈՒ ԴԷՊՔԵՐ (ԱՏԱՆԱՅԻ ՅՈՒՇԵՐԻՄ)

Ա.

ՄԵԼՔՈՆ տղէտ էր. ո՛չ հայերէն գիտէր եւ ո՛չ ալ գրել կարդալ սորված էր. միայն թուրքերէն կը խօսէր. բայց անիկա իր ատանացի հայրենակիցներուն մէջ հանրածանօթ դէմք մըն էր. նշանաւոր եղած էր իր քաջութիւնով, արհեստով եւ իր այլանդակ տարազով. այս երեք ձիրքերով օժտուած, անմրցելի ախոյեան մըն էր ան. իր ժամանակակիցներէն եւ ո՛չ մէկը կրցած էր անոր հետ մրցիլ:

Հայերը զայն կը ճանչնային մէկ նախադաս տիտղոսով եւ կը կոչէին «Տօնուզճու Մելքոն». իսկ տաճիկները կ'անուանէին «Տօնուզճու Մելքոն Կեալուր»:

Անոր արհեստը որսորդութիւն էր, զոր սորված էր մանկութենէն. իր արհեստին մէջ այնքան յառաջ դացած էր որ, անոր հաւասարող մէկը տեսնուած չէր, իր հայրենակիցներու մէջ ան եղած է եղական դէմք մը:

Անոր դէնքին առջեւէն չէին կրնար փրկուիլ չորքօտանիներ՝ իրենց արագընթաց վաղքերով, իսկ թեւաւորներ՝ իրենց սուր թռիչքներով. բաւական էր որ Մելքոնին զէնքը մէյ մը գոռար, տեղն է տեղ կ'իյնար որսը. անոր արձակած կապարը անվրէպ էր:

Ատանայի չրջակայ բնակիչները մեծ մասամբ տաճիկ գիւղացիներ էին. անոնց արտերուն մէջ վայրի խոզեր կը վխտային եւ իսլամներու հունձքերուն մեծամեծ վնասներ կը հասցնէին. թէեւ գիւղացիները՝ զանոնք կրնային սպանել, բայց ո՞ր իսլամը պիտի կրնար մօտենալ անոնց

պիղծ գիտկներուն . ո՞վ պիտի վերցնէր եւ կամ ո՞վ պիտի թողէր անոնց ազտոտ մարմինները , դարչահոտութենէ փրկելու համար գիւղերու բնակիչները , քանի որ իրենց կրօնքը սաստիկ կ'արդիւնէր եւ մահացու մեղք կը համարէր անոնց մերձենալն իսկ :

Մահմետական մը , մի' արասցէ , եթէ խոզի մը դպչի , անիկա անօրէններու կարգը կը դասուի . այդ մարդը ո՛չ կրնայ մղկիթ մտնել եւ ոչ ալ նամազի (խաժամական ապթը) կենալ :

Տաճիկ գիւղացիները կ'աղաչէին , կը պաղատէին Տօնուղճու Մեւքոն Կեալուրին , որ իրենց արտերը մաքրէ այդ անիծեալ անասուններէն եւ փրկէ իրենց հունձքերը . այս մասին կը քաջալերէին ղինքը զանազան նուէրներով եւ դործելու բացարձակ ազատութիւն կուտային իրեն :

Մեւքոն առիթէն օգտուելով , անոնց արտերուն մէջ կը գործէր գիշեր ու ցորեկ . զարկած որսերը քաղաք կը ղրկէր մէկ երկու օղնական ընկերներով . քաղաքին Սուրբ Ստեփաննոս եկեղեցիի նեղլիկ փողոցին մէջ , անոնց միսերը կը ծախէր եւ կամ ծախել կուտար քրիստոնեայ հասարակութեան եւ այս արհեստով իր ապրուստը կ'ապահովէր եւ կ'ապրէր :

Ահա այս արհեստին համար է որ , հայերը զայն կը կոչէին «Տօնուղճու Մեւքոն» , իսկ տաճիկները «Տօնուղճու Մեւքոն Կեալուր» :

Տաճիկ գիւղացիները չափազանց կը յարգէին Մեւքոնը՝ իր ըրած այս թանկազին ծառայութիւններուն համար , եւ չափ անդամ հունձքի ատեններ , արմտիքի զանազան նուէրներ կուտային անոր , իրենց երախտիքը յայտնելու մտօք :

Մեւքոն որքան համբաւաւոր վարպետ մը եղած էր իր արհեստին մէջ . նոյնքան եւ աւելի համբաւ չինած էր իր անվեհեր քաջութեամբ :

Անիկա իսկապէս անվեհեր սրտով քաջ մըն էր . ան նաեւ օժտուած էր անյաղթելի զօրութեամբ . մէկ բառով

զիւցազն կրնար համարուիլ եթէ կեալուր չըլլար: Ան քանի՞ քանի՞ անգամներ վայրի դաղաններուն հետ դիր-
կընդիսառն կռիւի բռնուած եւ զգետնած էր ամենէ կեն-
դանիները:

Լեռնային մացառուտ անտառներու, ճախճախուտ
վայրերու մէջ հսկայ դաղաններու որջեր կային, ուր՝
Մեւքոն դիշեր ցերեկ կը պտըտէր, վարապներ որսալու
համար. երկիւղ ըսուած բանը բոյն դրած չէր անոր սրտին
մէջ:

Այդ վտանգաւոր տեղերու մէջ, օր մը՝ Մեւքոն վա-
րադ մը կը դարնէ. կենդանին մէկէն չի մեռնիր, մոլեգին
կատաղութեամբ կը խուժէ իր վրայ. Մեւքոն կը տեսնէ
որ դաղանը իր վրայ կը յարձակի, զէնքը կը նետէ գետին,
անոր ժանիքներէն փրկուելու համար մէկ ոստուժով կը
ցատկէ եւ կ'իյնայ դաղանին ետեւի կողմը. ձախ ձեռքով
կը բռնէ պոչէն, այնքան ուժգին որ դաղանը անշարժու-
թեան կը մատնուի եւ աջ ձեռքով ալ դաշունահար կը
սպաննէ զայն:

Ուրիշ օր մըն ալ, Մեւքոն՝ եղգնուտ վայրի մը քո-
վէն եղերելով որսի կը պտըտէր զէն ի ձեռին. խիտ մա-
ցառներու մէջէն խոճկորի մը ձայնը կը լսէ. քայլերը
կ'ուղղէ այդ կողմը, փշոտ թուփերու իրար անցած ճիւ-
ղերը պատուելով, կամաց կամաց կը մօտենայ ձայնին:

Խոճկորները եւ անոնց մայրը որսորդին հօտը առած,
եւ կամ անոր ոտքի չըլկներէն սարսափած, յանկարծ խիտ
մացառներու մէջէն կը սկսին մըթմըթալով փախչիլ.
Թուփերու մէջէն չեն տեսնուիր. զանոնք հետապնդելու
ատեն խկոյն ժանիքաւոր, հսկայ կիւնճ մը շատ մօտէն
կը յարձակի իր վրայ. հրացան պարպելու ժամանակ չի
մնար. Մեւքոն ոստիւնով մը կը ցատկէ եւ կը նստի դա-
ղանին կռնակը. մէկ ձեռքով անոր ժանիքէն կը բռնէ,
այնպիսի ուժով կը ցնցէ անոր գլուխը որ, դաղանը կը
սարսի, միւս ձեռքով ալ անոր կողորդը կը պատուէ դա-
շոյնով ու դիտապաատ կը փռէ գետին:

Մեկըն իր արհեստին մէջ, այս եւ ասոր նման արհածախնդիր կեանք մը ունեցած է, որուն առասպելանման պատմութիւններէն վերի երկու պատահարը յիշել բաւական կը համարեմ, եւ այս՝ ներկայացնելու համար անոր մարմնական դերիւմեր ուժը եւ սրտի աներկիւղ քաջութիւնը:

Եթէ Մեկըն կայսերական հզօր բանակներու մէջ ծառայող զինուոր մը ըլլար, անպայման անոր առիւծասիրտ տիրողութեան պիտի տային եւ պատմութեան մէջ անմոռանալի էջ մը պիտի դրաւէր:



Ատանայի արեւելեան կողմը, տասը-տասնհինգ մղոն հեռաւորութեան վրայ, Ճիհան դետը կը հոսի. անոր արեւելքի կողմը վայրի կաղնիներու ծառաստան մը կար, որ անմարդարնակ էր, անոր երկայնութիւնը Միսիսի մօտերէն կը սկսէր եւ կը հասնէր մինչեւ Միջերկրական ծով:

Այս անտառը Կիլիկիոյ հայկական իշխանութեանց ժամանակին յատուկ մշակուած ծառաստան մըն էր. այնպէս որ երկրաչափական ուղղութեամբ, այգիի պարաններու պէս, կանոնաւոր կերպով շարուած էին հսկա՛յ հսկայ կաղնիներ. այդ ծառերը իրենց լայն արմատներուն վրայ, ութը-տասը մէթրի չափ բարձրութիւններ կ'ունենային, մզկիթներու բարձր աշտարակներու պէս. տաճիկները այդ վայրը կ'անուանէին «Պող-Աղաճ»:

Մեկընի ժամանակ, այդ տեղերը որսորդութեան համար նշանաւոր վայրեր էին. հոն տեսակ տեսակ վայրի կենդանիներ ու դաղաններ կը վիտային:

Այս դաղանաբնակ անտառին մէջ, ամէն որսորդ չէր կրնար պտըտիլ եւ չէր կրնար գործել. Մեկըն երբեմն հոն ալ կ'երթար ու շարաթներով կը գործէր, ուրկէ վագրի մորթեր բերելով կը ծախէր քաղաքին մէջ:

Հիմա այդ անտառը 70-80 տարի է ի վեր այրելով, բարերեր դաշտի վերածուած է. հոն հաստատուած են

բաղմաթիւ գիւղեր, անոնց շատերը արարախօս իսլամ-
ներ են, որ կը պարապին երկրագործութեամբ:

Մեւքոն իր հայրենակիցներու մէջ անմրցելի ըմբիշ
մըն էր, բայց այդ արհեստով չէր ղրաղեր ան, որովհե-
տեւ կը վախնար մոլեռանդ տաճիկներու չար նախանձէն,
քանի որ ինքը հայ քրիստոնեայ մըն էր:

Միայն թէ երբեմն կատակի համար, ըմբիշի համբաւ
ունեցող երիտասարդներուն կոկիկ դումար մը խոստա-
նալով կ'ըսէր.

— Ինչ որ խոստացայ պիտի տամ քեզի, եթէ ոտքս՝
մատնաչափ մը կարենաս իր տեղէն շարժել. հակառակ
պարագային քեզմէ բան մը չեմ պահանջեր:

Մեւքոնին խոստացած նուէրը գանձող ըմբիշ մը, ո'չ
տեսնուած էր եւ ո'չ ալ լսուած:

Մեւքոն եղական անձ մըն էր նաեւ հազուստի տե-
սակէտով:

Անոր մարմնոյն ծածկոյթը տեղական ճերմակ կտաւէ
չինուած շապիկ մը եւ վարտիկ մըն էր միայն. ուրիշ
բան չէր հագներ. եղանակները կը փոխուէին, բայց իր
հազուստը անփոփոխ կը մնար. ամառ-ձմեռ հագածը այս
էր, միայն թէ իր մայրիկին խնդրանքներուն վրայ, մէկ
երկու ամիսը անգամ մը, լուացքի համար կը հանէր եւ
կը հագնէր յաջորդը:

Հաւած սպիտակ վարտիկը կարճ էր. մէջքէն վար
հազիւ կը հասնէր իր ծունկերուն. անկէ վար մերկ սը-
րունքներուն թաւամաղ բումբերը կը տեսնուէին. իսկ
շապիկը ո'չ օձիք ունէր եւ ո'չ ալ կոճակ. անոր համար
կուրծքը միշտ բաց կը մնար, ուրկէ դուրս կը ցցուէին.
մացառի պէս խիտ բուսած սեփ սեւ մազերը:

Մեւքոն՝ Եսաւի պէս մաղոտ անձ մըն էր. ան իր ման-
կութենէն ի վեր միշտ գլուխը բաց ու ոտքերը բոպիկ
պտըտած էր. ո'չ գլխարկ եւ ո'չ ալ կօշիկ կը հագնէր.
միայն թէ ամուսնացած տարին՝ առ ի քաղաքավարու-
թիւն, շարաթ մը միայն ոտքաման հագեր է, կ'ըսեն
տեսնողները:

Մեկքոնին կրիսամերկ մարմինը, բաց գլուխը եւ բո-
ւիկի ոտքերը՝ ո՛չ ամառուան տաքէն, ո՛չ ալ ձմեռուան
ցուրտէն աղբուած են. տարուան չորս եղանակներուն ալ
նոյն տարազով կ'անցընէր ան :

Անոր բուիկի ոտքերը՝ պտըտելով-պտըտելով, այն-
քան կարծրացեր են որ կոշկոռ կապեր են. այնպէս որ
այդ ոտքերը՝ երկաթի դանդուածներու պէս, հարկ եղած
տտեն, մուրճի տեղ ալ դործածեր է. շատ անգամ տես-
նուած է որ, ոտքի մէկ հարուածով դամը մէկ անդամէն
մխեր է դերանին մէջ, այնքան զօրաւոր ոտքեր եւ այնքան
ալ կարծր ներքաններ ունեցած է :

Այս աւելածասիրտ զիւցաղնը հակառակ իր քաջու-
թեան եւ ունեցած համբաւին, պարթեւ հասակով պատ-
կառելի երեւոյթ մը չունէր. ընդհակառակը, միջահասակ
մարդ մըն էր, լեցունիկէկ մարմնով, բայց լայն կուրծքով
ու կարչնէլ թււերով օժտուած անձ մըն էր. անոր տեսքը
արեւակէզ դէմքով լեռնային մարդու մը երեւոյթը ունէր.
Վերին աստիճանն արադաշարժ եւ շատ անգամներ քառա-
սմբակ վալող ձիերուն հետ ալ մրցակից եղած է :

Այն ատենուան մարդիկ ընդհանրապէս մօրուսաւոր
էին. Մեկքոն այդ օրէնքը չէր յարդեր. ամէն շարաթ կա-
նոնաւորապէս կ'ածիլուէր :

Մեկքոն իր վարք ու բարքին մէջ ալ անբասիր մեծ-
ցող երիտասարդ մը եղած է. իսկ աղքատիւն՝ պարտակա-
նութիւններուն մէջ ալ, հայրենասիրական անչէլ զգա-
ցումներով միշտ ծառայող ուղի մը ցոյց տուած է :

Մեկքոնին ճիշդ ու ճիշդ ծննդեան թուականը չենք
զիտեր, բայց իր տարեկից ընկերներէն գուշակելով,
որոշապէս յայտնի եղած է որ անիկա 1801 կամ երկուքին
մէջ աշխարհ հեւած է Ատանայի մէջ :

Բ.

1832-ին, ամառ իրիկուն մը, քաղաքին արհեստա-
ւորները իրենց խանութները սկսած էին դոցել. Չադ-

մադճը Ուստա Ղուկաս Մանկոյեանն եւս իր վերջին դործը լմնցնելով կը պատրաստուէր խանութը դռնէլ. յանկարծ նշմարեց որ շուկային միւս ծայրէն, Տօնողճու Մեկըն հապճեպ քայլերով դէպի իրեն կուղայ. անոր արագաշարժ քայլուածքէն եւ դէմքի տխուր արտայայտութենէն մտահոգիչ բան մը կռահեց:

Մեկըն մօտեցաւ իրեն, բայց կանգ չառաւ, առանց կենալու բարեւեց Ղուկասը, որուն հետ թէ՛ տարեկից էր եւ թէ՛ մանկութենէն ի վեր բարեկամ. ցած ձայնով — իրիկունը ձեզի պիտի դամ, ըսաւ ու անմիջապէս քովէն հեռացաւ:

Ղուկաս մտահոգութեամբ տուն դնաց, անհամբեր Մեկընին կը սպասէր:

Ղուկասին մայրը՝ Տիկին Թուրֆանտան, իրիկուան սեղանը պատրաստեց ու կերակուրի հրաւիրեց իր զաւակները. բայց Ղուկաս չմօտեցաւ ընթրիքին. երկրին քաղաքական կացութիւնը ծանր կը թուէր իրեն:

Մութը կոխած էր շատոնց, երբ Մեկըն տունէն ներս մտաւ. տնեցիները անմիջապէս շրջապատեցին զայն եւ ան պատմեց հետեւեալը. —

«Երկու օրէ ի վեր Միսիս էի. այսօր կէսօրուան մօտ տեսայ որ, քաղաքին կից քարաշէն կամուրջին վրայէն հեւասպառ ետ կը դառնային դործի գացող բաղմաթիւ մշակներ, կիսատ ձգելով իրենց հերկերը:

«Այդ մշակները՝ աւելի հեռու տեղերէ եկող, կողոպտուրած ճամբորդներէն հասկցած են որ, Կիլիկիոյ եւ Սիւրիոյ սահմանին վրայ տեղի ունեցող պատերազմէն, տաճկական բանակը չարաչար պարտութեան մատնուած է եղիպտական բանակին կողմէ. տաճիկ զինուորները խուճապի ենթարկուելով ցիրուցան եղած, կը նահանջեն անկանոն կերպով:

«Նահանջող տաճիկ զինուորները՝ երկիրը անիշխանութեան մատներ են, իրենց հանդիպած դիւղերու մէջ մտնելով, ամբողջ աւարի տուած են ինչ որ կրցած են

դտնել, դրաւեր են բոլոր ձիերը, ուտելիքները, դրամները եւ այլ արժէքով ծանրագին, իսկ կշիռքով թեթեւ ապրանքները, մետաքսեղէնները, դորդերը, կապերտները եւն. :

Ճնոյնպէս ճամբաներու մէջ, իրենց հանդիպած ուղեւորներուն բոլոր ինչքերը թալլեր են. հակառակողները դանակոծելով կը չարչարեն, իսկ դիմադրել յանդիմողները անխնայ կը սպաննեն, ըլլայ հայ, ըլլայ թուրք. եւ այսպէս ասպատակելով կը փախչին ճակատէն :

Քեզեւ հիմա մեր քաղաքը խաղաղ կը տեսնուի, բայց մի քանի օրէն, այս տեղերն ալ նոյն վիճակին պիտի ենթարկուին : Լսածիս համաձայն եգիպտական բանակը երկու երեք շաբաթէն կը հասնի հոս եւ կը դրաւէ քաղաքը, քանի որ դիմադրող ուժ մը պիտի չըլլայ :

Շատ վտանգաւոր ժամանակի մը մէջ կ'ապրինք, օրերը, ժամերը յղի են, չենք գիտեր թէ վաղը ի՞նչ պիտի ըլլայ. առ ի զգուշութիւն փախայ եկայ. մենքինք մեր ընտանիքներու հետ, ազգի հետ, ապրի՛նք նորէն մեր ընտանիքներու հետ, ազգին հետ :

Մեւքոն իր խօսքը լմնցուց, ունկնդիրները մտահոգութեան մէջ խորասուզուեցան եւ սկսան վրդովալի կացութեան վրայ խորհիլ. վիճակ մը որ ելքի ճամբայ մը չունի :

Ղուկասին մայրը՝ Տիկին Թուրֆանտա, երկու աղ-դականներ ունէր, որոնք ազգին մէջ բարձր դիրք դրաւող, փորձառու ու խելահաս մարդիկ էին :

Առաջին աղապականը Պաղիլիկեան Պաղտիկ աղան էր, որ Տիկին Թուրֆանտային հարազատ մօրեղբայրն էր. թէեւ այժմ ծերացած եւ դործէ ալ քաշուած է, բայց նորէն անոր խորհուրդներէն կրնային օգտուիլ. անոր մասին կ'ըսուի թէ՝ անելին մէջէն ելք մը դնող հանճար մըն է :

Երկրորդ աղապականը Պաղիլիկեան Աւետիք աղան է, այս մարդը տիկիւնին հարազատ մօրաքրոջ ամուսինն էր. հրապարակի վրայ գործող, ճարպիկ, ուշիմ եւ քաղաքական դործերու վրայ հմտութիւն ունեցող անձ մը :

Տիկին Թուրֆանտա Մանկոյեանը իր մօրաքրոջ հետ անուանակից էր, անոր անունն ալ Թուրֆանտա էր, եւ կը կոչուէր Տիկին Թուրֆանտա Ա. Պղտիկեան:

Այս երկու անձնաւորութիւնները այն ժամանակի ազգային ջոջերու պատկանող պատկառելի դէմքեր էին:

Որոշուեցաւ որ Մելքոն եւ Ղուկաս, Պաղիրկեան Պաղտիկ աղային տունը երթան, հոն կանչեն Աւետիք աղան ալ, եւ խորհրդակցին միասնաբար, թէ ի՞նչ կրնային ընել, այս փորձանքի կամուրջէն անվտանգ անցնելու համար: Եւ այդպէս ալ ըրին:

Գացին Պաղտիկ աղային տունը. հոն կանչուեցաւ Աւետիք աղան ալ. Մելքոն վերոյիշեալ տեղեկութիւնները նոյնութեամբ հաղորդեց մեր մեծանուն ջոջերուն:

Օրուան այս տազնապալի վայրկեաններուն ի՞նչ կըրնային ընել մեր անդէն ու անդօր մեծերը. որոշեցին նախ ապաւինիլ Աստուծոյ եւ աղօթել. յետոյ եկեղեցիներու մէջ ծանուցումներ ընել ժողովուրդին, որ արթուն կենայ. մանաւանդ երիտասարդներուն, որ խոհեմ ու ուշիմ ըլլան. դործելու համար՝ քաղաքէն շատ չհեռանան, մինչեւ որ այս փորձութեան ժամերը փարատին իրենց վրայէն:

Տաճիկը՝ պատերազմի ատեն, երբ յաղթէ կը չփանայ, երբ պարտուի կը կատղի. երկու դէպքերուն ալ հայը միշտ տուժած է, եւ շատ անգամ չարաչար տուժած: Կացութիւնը երկիւղալի էր:

Իրաւ, մի քանի օր վերջը, տաճկական կառավարութիւնը քաղաքը լքեց ու փախաւ. կարծուածին պէս երկիրը մատնուեցաւ անիշխանութեան. ճակատէն փախչող դասալիք թուրք զինուորները, աւաղակներու նման, խումբ խումբ կը պտրտէին, կը յափշտակէին ինչ որ գրտնէին, նոյնիսկ առեւանգումներ անպակաս էին. անոնք կատարեալ պատուհասներ եղան գիւղերուն ու քաղաքներուն: Հայերը՝ արհաւիրքի մէջ, ահ ու դողով օրեր կ'անցընէին. բայց բարեբախտաբար շուտ հասաւ եգիպտական բանակը ու անմիջապէս գրաւեց քաղաքը:

Գրաւորմէն օր մը վերջը խաղաղութիւնը վերահաստատուեցաւ :

Նախապէս հայերը այնպէս կը կարծէին թէ, եղիպտական բանակն ալ ճնշումներ պիտի դործադրէ իրենց վրայ, ինչպէս կ'ընէին տաճիկները. մեծ եղաւ անոնց զարմանքը, երբ տեսան թէ անակնկալօրէն հակառակը պատահեցաւ, խաւարին մէջէն լոյս մը ծաղեցաւ իրենց վրայ :

Եղիպտական բանակին ընդհանուր հրամանատար Խպրահիմ փաշան սկսաւ հայոց հանդէս լաւ վերաբերում ունենալ. աւելի վստահեցաւ հայերուն, քան թէ տաճիկներուն. պետական դործերու մէջ կարեւոր պաշտօններ յանձնեց հայերուն. բանակին պարենաւորման դործերը ամբողջութեամբ հայոց տուաւ՝ լաւ վճարումներով :

Պղտիկեան Աւետիք աղան պետական սնտուկին դանձապետը հռչակուեցաւ. անոր մեծ եղբայրը՝ Պղտիկեան Կարապետ աղան, փաշային խորհրդականը եղաւ, վաճառականութիւնը ընդարձակեց, երկրադործութիւնը ծաղկեցուց հայոց միջոցաւ. ասկէ զատ՝ արհեստաւոր դասակարգն ալ դռնացուց լիովին վարձատրութիւններով ու առատաձեռն շնորհներով :

Արհեստաւորներու մէջ կը յիշուի Չաղմաղճը Ուստա Ղուկաս Մանկոյեան, որ իր արհեստի բերումով զոհացուցիչ ծառայութիւններ մատուցել է փաշային եւ արժանացել՝ անոր լիառատ նուէրներուն :

Վերջապէս, հայերը բռնութեան լուծէն փրկուելով՝ ազատ քաղաքացիներու կարգը դասուեցան. թուրք աւատապետներու իշխանութեան ներքեւ տարապարհակ աշխատութիւններէ ազատեցան. այնպէս որ եղիպտական վարչութիւնը հայոց համար օրհնութիւն մը եղաւ :

Հայերը երկրին ամէն կողմերը ազատ երթեւեկութիւններով սկսան ժրջան մեղուներու պէս աշխատիլ. ծաղկեցան ու ծաղկեցուցին երկիրը. որչափ օգտուեցան, այնչափ ալ օգտակար ծառայութիւններ մատուցին իրենց պատկանած պետութեան :

Իսլրահիմ փաշան՝ իր վարչական գործունէութեան մէջ արդար դատաւորի մը դերը կատարելու է միշտ հանդէպ ամբողջ ժողովուրդին, իսկ մասնաւորապէս հայերուն, սակայն իր հակառակորդներուն համար եղած է վայրագօրէն անգութ:

Անիկա ո՛չ զնդակահար կ'ընէր յանցաւորները եւ ո՛չ ալ կախաղան կը հանէր. մասնաւորապէս կացինահարող դահիճ մը ունէր, որ միշտ թիկնապահի պէս կը պտըտօցնէր իր քովը. որուն տեղական լեզուով կը կոչէին «Պալթաճի»: Մէկը որ՝ որ իր կարծիքով աններելի յանցանք մը գործէր, իր ներկայութեան վայրկենապէս կացինահար սպաննել կուտար զայն:

Փաշան այս մասին բազմաթիւ զրուագներ ունի, որոնք կը պատմուէին ժողովուրդին մէջ. հետեւեալ երկու դէպքերը բաւական են ցոյց տալու. անոր անմեղներու հանդէպ ունեցած արդար վերաբերումը, իսկ մեղանշողներու մասին վայրագ օրոշումը:

Իսլրահիմ փաշան քաղաքը դրաւած ատեն, հայերը երկու եկեղեցի ունէին. մէկը՝ Սուրբ Ստեփաննոս եկեղեցին, որուն շինութիւնը նոր աւարտած էր, իսկ միւսը՝ Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ տակաւին կիսաւարտ էր եւ 1837-ին լմնցաւ, թէեւ երկու եկեղեցիներուն հիմնադրութիւնը միասին եղած էր՝ 1830-ին:

Գրաւումէն տարի մը վերջը, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ վերնատան վրայ գործելու ատեն, բանուորներէն մէկը վար կ'իյնայ ու մահը վայրկենական կ'ըլլայ. թուրք մըն էր մեռնող գործաւորը:

Ամբողջ հայերը ահ ու դողով լեղապատառ կը փախչին, վախնալով թէ այս արկածը աղէտալի հետեւանքներ կ'ունենայ իրենց համար. իրաւ ալ տաճիկներուն հայերէն վրէժ առնելու ժամանակը եկած էր, առիթը չփախցնելու համար սկսան ամբոխավարութեան:

Թուրքերը սկսան պոռալով կանչելով աղմուկ հանել.

Ժողովուրդին յայտարարելով թէ կեալուրնեւրը իսլամ մը սպանած են եկեղեցիին մէջ. իսկոյն թուրք խուժանը հեւ ի հեւ կը վաղէ եկեղեցի. քաղաքին մէջ կը տիրէ խուճապ մը. հայերը խանութները բաց ձգելով լեղատառտաւ կը փախչին իրենց տուները: Եկեղեցւոյ թաղը ամբողջ թուրքերով կը լեցուի. ջարդի սպառնալիքներով կ'աղմկեն մթնոլորտը ու սոսկում կը պատճառեն հայերուն:

Լուրը կը հասնի կառավարութեան. Իսլահիմ փաշան անձամբ կուգայ քննութեան. դէպքը լաւ մը կ'ուսումնասիրէ տեղին վրայ. կը քննէ, ուշի ուշով կը զննէ. եկեղեցիները եւ կը համոզուի որ եղածը արկածի մը հետեանք է:

Քաղաքը խուճապի մատնող պարագլուխներէն երկու հոգի կը պառկեցնէ դիակին քով եւ ոտքերէն արիւն դալու աստիճան բրածեծ կ'ընէ ու յետոյ կը բանտարկէ այդ վիճակով:

Իր ներկայութեան կանչել կուտայ եկեղեցւոյ ճարտարապետ Մէյմարեան Յակոբ Գալֆան, եւ անոր հետ միասին վարպետներն ու գործաւորները եւ կը հրամայէ որ շարունակեն իրենց գործը:

Մեռնողին օրավարձն ալ Ժառանգորդին տալով, գլխիւր թաղել կուտայ, այսպէսով խնդիրը կը կարգադրէ՝ հայերը պատուելով, զրոյարտիչները ահաբեկելով:

Երկրորդ դէպքի մասին հետեւեալը կը պատմուի:

Կեսարիայէն հայ վաճառական մը Ատանա զաւով՝ Եէնի խանէն սենեակ մը կը վարձէ ու կը սկսի իր վաճառականական գործով զբաղիլ:

Ձմեռ տաւն, կիրակի օր մը երեկոյեան դէմ, այս պանդուխտ հայը իր սենեակը քաշուած, առանձինն սկըսած է կամաց կամաց օդի խմել, Կեսարիոյ ընտիր պատորման ալ միասին ուտելով:

Մի քանի դաւաթ պարսկէլէ յետոյ, անոր տղեկցութենէն կ'ուզեւորուի ու կը սկսի մեղմօրէն երգել:

Յանկարծ սենեկակից տաճիկ մը բարկութեամբ կուգայ, կը սաստէ ու կը յանդիմանէ հայը, եւ կ'ուղէ արդի-

լէլ անոր երդելը...կը մօտենայ սեղանին, օղիին շիշն ու գաւաթը կը կոտորէ, սպառնալով թէ կեալուր մը ինչ համարձակութեամբ իսլամի մը սենեակին քով այսպէս կը խմէ ու կ'երգէ՝ խանդարելով իսլամներուն հանդիստը. եւ այդ բարկութեան մէջ արտառոց յիշոցներ ալ կ'ընէ, կը հայհոյէ հայու պատիւին, կրօնին, Քրիստոսին ու խաչին...:

Հայ երիտասարդին դուխը տաքցած ըլլալով, ա'լ չի կրնար խորհիլ վերջաւորութեան մասին եւ, տաճիկը ինչպէս կը հայհոյէ, ինք ալ արձագանքի պէս նոյնութեամբ կը փոխադարձէ, «եւ ալ քու...» բառերու յաւելումով:

Հայուն այս անակնկալ յանդգնութեանը վրայ, թուրքը այլալիք ու բորբոքած, կը սկսի ապտակել. հայը աւելի ճարպիկ դռնուկով կրկնապէս կը փոխադարձէ ապտակները, տաճիկն երեսին, քթին, ո'րտեղ որ հանդիպի:

Պարտուող տաճիկը ճարահատ կը դիմէ ամբոխալուծութեան, իսլամներու կրօնական ղեագումները դրդուելով կը սկսի պոռչտուքներով, ոռնոցներով իրեն օգնութեան կանչել իր կրօնակիցները:

Լսող տաճիկները բիրերով կը վազեն դէպքին վայրը. մոլեգին կատաղութեամբ կը պաշարեն հայը, ամէն կողմէն հարուածներ կ'իջեցնեն անոր դիմուն, վերջապէս կը հպետնեն հայը, չուան մը կ'անցնեն անոր վիզը եւ, որպէս անասուն՝ քաշելով քաշքշելով, երբեմն կռիւահարելով, կը տանին դատաւորին մօտը: Իրիկուն ըլլալուն համար դատարանը դոց էր:

Ամբոխը դատաւորէն մահուան պատիժ կը պահանջէ, քանի որ այդ կեալուրը իսլամական կրօնին ու մարդարէին հայհոյած էր իրենց ներկայութեան. հարիւրաւոր ձայներ աղմկելով, օդը կը թնդացնեն ու մեղաւորին համար մահ կը պահանջեն՝ «ի խաչ հան դդա»ի պէս:

Դատաւորը երկու իսլամ վկաներով կրնար հայ մը մահուամբ պատժել, մինչդեռ հիմա հարիւրաւոր վկաներ կային. ի՞նչպէս ալ պիտի փրկուէր հայը:

Դատաւորը անմիջապէս մահուան Վճիռը կուտայ, բայց բարեբախտաբար անոր դործադրութիւնը հիմա իպրահիմ փաշայի վաւերացումէն կախուած էր:

Հետեւեալ օրը փաշան դատարան կուգայ, առաջին անգամ ամբոխավար տաճիկը կը հարցաքննէ. ինչ որ եղած էր՝ յաւելումներով կը պատմէ դատախազը՝ ի բացակայութեան հայուն:

Փաշան ներս կը կանչէ հայը եւ կ'ըսէ ցասումով՝ ծունկին վրայ դրած սուրը պատեանէն թիղ մը դուրս քաշելով:

— Դէպքը ինչպէս որ եղած է նոյնութեամբ պիտի պատմես, առանց խեղաթիւրելու, ո'չ աւելի եւ ո'չ պակաս. հակառակ պարագային դուռիդ պիտի տաս հիմա:

— Տէր իմ, կը պատասխանէ հայը. ես կեսարացի եմ. օտարութեան մէջ պանդուխտին ցաւերը վարատող երկու բան կայ. մէկը օղի խմել, միւսն ալ երգել. ոեւէ մէկուն վնաս մը չունէի. երէկ իրիկուն սենեակիս մէջ նստած, առանձին կը խմէի եւ մեղմ ձայնով ալ պանդուխտի ցաւերէս կ'երգէի. այս եղաւ իմ ամբողջ ցաւս, մեղքս ու յանցանքս: Այդ պահուն դրացիս յանկարծ ներս մտաւ հայհոյանքներով, ուղեց արդիւիւ զիս, կոտրեց շիշս ու դաւաթս. ես ալ տաքցած դուխով իրեն վերադարձուցի հայհոյանքները. յետոյ ապտակեց զիս. ես ալ կրկնապէս զինքը ապտակեցի. ասոր վրայ փայնասուն մը փրցուց, խուժանը հասաւ բիրերով, հարուած հարուածի տալով՝ զիս դետին փռեցին ու այս վիճակին ենթարկեցին մեղաւորս...

Փաշան երկուստեք մտիկ ընելէն վերջը, սուրը պատեանին մէջ դետեղելով կ'ըսէ.

— Ոեւէ մէկը իրաւունք չունի ուրիշին սենեակը մը տնելու եւ անոր հանդիստը վրդովելու. եթէ ինքը դժգոհութիւն մը ունի, պէտք է կառավարութեան դիմէ եւ խաղաղօրէն խնդիրը լուծէ:

— Ոեւէ մէկը քաղաքին անդորրութիւնը խռովող արարքի մէջ դտնուելու չէ:

— Ունէ՛ յանցաւոր պէտք է պետական պաշտօնեայի մը միջոցաւ առաջնորդուի դատարան եւ ոչ թէ՛ ամբօխի մը կողմէ՛ :

— Ունէ՛ դատաւոր իր որոշումներուն մէջ պէտք է արդար վճիռներ արձակէ, եւ ոչ թէ՛ քմահաճօրէն դործէ՛ :

— Հայը հիմա ազատ է. պարտադանց դատաւորն ալ՝ պաշտօնանկ. իսկ երկրին հանգիստը վրդովող, զրպարտիչ դատախազն ալ պէտք է հիմա կացինահար ըլլայ :

Կացինահարող դահիճը դատարանին առջեւ մէկ հարուածով դատախազին դանկը երկուքի կը բաժնէ՝ մոլեղնած խուժանին ներկայութեան : Քաղմութիւնը այս անակընկալ որոշումէն սարսափած, լուռ ու մունջ կը հեռանայ հրապարակէն, իրարու կամացուկ մը փսփսալով. — «Իպրահիմ փաշան իսլամ չէ. ալպանացի կեավուր մըն է ան», կ'ըսեն ու իրարմէ կը բաժնուին :


Թուրքերը ներկայ վարչութիւնը տակաւին առաջուանին պէս կը կարծէին. առաջ խեղճ հայերը տաճկաց բիրտ իշխաններուն քով շատ անգամ անվարձ կ'աշխատէին բռնի կերպով, նոյնիսկ արձակ համարձակ եկեղեցական արարողութիւնները չէին կրնար կատարել, իրենց կիսովին դետնափոր եկեղեցիներու մէջ իսկ. եկեղեցիները հաղիւ փայտէ խեղճուկ կոչնակներ ունէին, հաղիւ կիրակի եւ տօն օրերու մէջ քիչ մը կը դործածէին. բայց անոնք ալ նորէն իշխող թուրք պէյերուն համար տեսակ մը շահու աղբիւրներ էին :

Երբեմն պէյին մէկը, որպէս թէ բանէ մը բարկացած, պաշտօնեայի մը միջոցաւ կը դրաւէր կոչնակը եւ կ'արգելէր անոր դործածութիւնը :

Ո՛վ կը համարձակէր պէյին դիմել եւ կոչնակը ետ առնել ու անոր դործածութիւնը խնդրել :

Ամիսներ կ'անցնին, պէյին բարկութիւնը որպէս թէ իջած կ'ըլլայ. իր մարդերէն մէկը միջնորդի դերով կուգայ եկեղեցականներուն լուր կուտայ թէ՛ երթան կոչնակը ետ պահանջեն պէյէն՝ խնդրագրով մը :

Եկեղեցականները շատ լաւ գիտեն թէ, պէյը բան մը



կ'ուղէ իրենցմէ, եթէ չերթան, աւելի դէշ արգելնք պիտի ախտայ. առ ահի կ'երթան, սիրտը կը շինեն աղաչելով, պաղատելով, կ'ընեն դումար մըն ալ նուիրելով. փայտէ կոչնակը կը փրկեն դերութենէ, կը բերեն եկեղեցի: Եւ ասիկա կը կրկնուի տարին մէկ երկու անգամ:

Փառք Աստուծոյ, այլեւս անցան այդ տխուր օրերը: Բնակիչներ առաջ խաւարի մէջ էին, հիմա լոյսերու մէջ կը պտըտին. առաջ դերի կեպուցներ էին, հիմա աղատ քաղաքացի հայ քրիստոնեաներ եղան, առաջ հայոց համար մահուան պատիժ խնդրողները՝ հիմա մահուամբ կը պատժուին: Այդ փայտէ կոչնակները հիմա պողպատեայ կոչնակներու վերածուած են. այդ վետնափոր եկեղեցիները իրենց դերեղմաններէն յարութիւն առին եւ եղան գետնի վրայ հոյակապ տաճարներ. ամէն օր, առաւօտ թէ երեկոյ, կոչնակները կը զօղանջեն ու հաւատացեալները եկեղեցի կը հրաւիրուին, ուր ժամերգութիւնները անարդէ կը շարունակուին:

Շնորհիւ այս կացութեան, սուղ ժամանակի մը մէջ հայոց նիւթական վիճակն ալ բարեփոխեցաւ, այլեւս հին վախերը փարատեցան, երկրաշարժները աղատ, արհեստաւորները աղատ, վաճառականները աղատ. ամէնքն ալ իրենց հաշտոյն համար արձակ համարձակ կը դործեն ու կը շահին առատ-առատ. երիտասարդները կ'ամուսնանան ու ծնունդները կը շատնան. նորանոր տուններ կը շինուին. հայը ազգովին կը բարգաւաճի ու կը զարգանայ, իր տոհմային ընդունակութեամբ, նոր ոգիով ու նոր եռանդով:

Հայերուն այս դոյզն ինչ յաջողութիւնը արդէն հաբեաններուն նախանձն ու ատելութիւնը կը գրգռէր. մեր երիտասարդներէն շատերը այս իրողութենէն քաջալերուած, առանց վերջաւորութիւնը հաշուելու, լեզուադրութեամբ ուղղակի կամ շեղակի վիրաւորիչ խօսքեր կ'ընէին թուրքերուն, անոնց կառաղութիւնը ա'լ աւելի սառսկացնելով. մեր անխորձ զաւակները կ'ընէին այս բաները հակառակ իրենց մեծերու խրատներուն. անոնք՝

իրենց փորձառու ծնողներու խօսքերէն չէին ուղեր օդ-
տըլիլ, աւելի իրենց կիրքերուն կը հնազանդէին, քան թէ
մեծերու յորդորներուն :

Բայց թուրքերը զիւանազէտ ժողովուրդէն և, ժամա-
նակի պահանջին համաձայն համբերել ու լռելը լաւ զի-
տեն . անոնք կրնան զսպել իրենք զիրենք, աւայթմ անոնք
ոչխարի մորթեր հագած գառնուկներու կը նմանին ու կը
սպասեն ժամանակին :

Եղիպտական բանակին Ատանան գրաւելէն մի քանի
ամիս վերջը, Չաղմաղճը Ուստա Ղուկաս Մանկոյեան
ամուսնացաւ 31 տարեկան հասակին մէջ՝ Օրիորդ Մաննա
Գարուսուղեանի հետ, 1832 զեկտեմբեր ամսոյն մէջ :

1833-ին՝ Ղուկաս անդրանիկ զաւակ մը ունեցաւ՝
Սահակ անունով : 1836-ին՝ Երկրորդ մանչ զաւակ մը եւս
ունեցաւ Յովհաննէս անունով :

Ատանայի հիւսիսային արեւմտեան կողմը, քաղաքէն
8-10 մղոն հեռաւորութեամբ Գարալար Պուճաղը անու-
նով ճանչցուած լայնածաւալ բերրի դաշտի մը տէր եղան
Կարապետ, Ղուկաս եւ Գրիգոր Մանկոյեան եղբայրները :
Նոյնպէս այս երեք եղբայրներուն կը պատկանէր քաղա-
քին արեւմտեան կողմը, երկու մղոն հեռաւորութեամբ
երեք հարիւր արտավար այգեստան մը, ուր կը զրադէին
երկրագործութեամբ եւ այգեգործութեամբ :

Ասկէ դատ Ատանայի հարաւային կողմը Սէյհան գե-
տին եզերքը, Մուրսալ անունով արարական գիւղին մէջ,
Ղուկաս իր անձնականին յստուկ զատէն ագարակ մը եւս
ունեցաւ . Ղուկաս խանութին մէջ իր արհեստով կը զրա-
դէր, բայց ագարակները մասնադէտ պաշտօնեաներու մի-
ջոցաւ գործել կուտար :

Այսպէս նոր վարչութեան շնորհիւ, գործերը օր ըստ
օրէ յաջող ընթացքներ ունեցան, այնպէս որ սուղ ժա-
մանակի մէջ, Ղուկաս եւ իր եղբայրները՝ ունեւորներու
կարգը զասուեցան . եւ այսպէս ամբողջ հայութիւնը աղ-
բովին սկսած էր բարգաւաճիլ, տաճկական ճնշումներէ
զերծ :

Հայաստանեայց Եկեղեցին հանդիսաւորապէս կը տօնէ Աւետումն Սուրբ Աստուածածնի տօնը որ կը հանդիպի միշտ Ապրիլ 7-ին :

Ատանայի հայերը այս տօնի մասին աւելի զօրաւոր հաւատքով նախապաշարուած են . այն օրը Հայրապետաց պատուէրին համաձայն մարդիկ կը դադրին գործելէ եւ կանուխէն ժամ կ'երթան , ուր կը կատարուին հանդիսաւոր արարողութիւններ : Եկեղեցին աւարտելէն վերջը , ա'լ չեն դործեր . օրը սուրբ կը պահեն որպէս կիւրակի :

Եթէ այն օրը պատահամար անձրեւ տեղայ , ժողովուրդին ուրախութիւնը չափ ու սահման չ'ունենար , զիրար կը շնորհաւորեն ցնծութեամբ . այն օրուան անձրեւին գալուստը օրհնարեր Աւետում մը կը նկատուի երկրի բերքերուն համար :

Այնպէս կը կարծեն որ , այն օրուան անձրեւը որ քիչ անդամ կը պատահի , Աստուծոյ մասնաւոր մէկ օրհնութիւնն է որ կ'իջնայ երկրիս վրայ . այդ անձրեւի կաթիլները հողին մէջ տարրալուծուելով , ցանքը՝ ո'չ թէ տառնապատիկ , այլ յիսնապատիկ առաւելութեամբ հասոյթ կուտայ . այն օրուան անձրեւը օրհնուած է՝ Գրիստոսի օրհնած հինդ նկանակ եւ երկու ձուկերու նման :

Կ'ըսեն թէ այն օրը տեղացող անձրեւին արժէքը դնահատել կարելի չէ , ինչպէս որ կարելի եղած չէ դնահատել Սողոմոն իմաստունին շինել տուած Երուսաղէմայ Տաճարին արժէքը :

Այն օրը միայն , ամէն հայ , այդ թէ կին , այդ անձրեւի ջուրէն կը խմեն եւ կը խմցեն իրենց փոքրիկներուն , հաւատարմով թէ այդ ջուրը օրհնեալ է ի վերուստ , մարդոց առողջութիւն , իսկ հիւանդներուն ալ բժկութիւն կը պարգեւէ :

Ընտանիքներ այն օրուան անձրեւի կաթիլներէն դաւաթ մը լեցնելով՝ իրենց կարասներուն մէջ կը թափեն ,

որպէսդի իրենց խմած ամենօրեայ ջուրն ալ այդ օրհնեալ ջուրով մկրտուած ըլլայ:

Հարսնցու օրիորդներ, դեռատի հարսեր, ծերատի կիներ, իրենց բախտերը փորձելու համար, կոշիկ կաթի կ'եռացնեն եւ այն օրուան անձրեւի ջուրով կը մակըդեն՝ առանց մածուն խառնելու ջուրին մէջ: Եթէ այդ կաթը ինքնաբերաբար մածունի վերածուի, յայտնի կ'ըլլայ թէ՝ մակըդդին ուխտը ընդունելի է, եւ բախտն ալ արթուն:

Այս մասին յաջողութիւն գտնողներ շատ կը համրուէին, այդ ժամանակի հաւատացեալ կանանց մէջ. ինչպէս կը յիշուի Ղուկաս Մանկոյեանի կրտսեր քոյրը՝ բարեպաշտ Տիկին «Վարդուհի» Էօճիւրեան, կեանքին մէջ երկու անգամ յաջողեր է. իսկապէս եփած կաթը մածունի վերածուեր է, ապրիլ 7-ի անձրեւի ջուրէն մակըդելով:

Այն տոնները ատանացի ամէն ընտանիք իր տան մէջ կը պատրաստէր, իր հացը. չկար շուկայէն հաց առնելու սովորութիւնը. անոր համար հայ ընտանիքները թէ՛ այդ տարին իրենց սեղանէն հացը պիտի չսլակսէր եւ կամ հացի նեղութիւն պիտի չունենային:

Հին օրերու բռնութիւններէն ազատուող այս բարեպաշտ ժողովուրդը հիմա երջանիկ օրեր կը բոլորէ. եգիպտական կառավարութեան շրջանին մէջ, անոր վարչութեան ներքեւ, անցան վեց խաղաղ տարիներ եւ յաջողեց Եօթներորդը:

1839-ի Ապրիլ ամիսն է որ կը մօտենայ:

Եգիպտական Սուլթանը լիւրջի գահացուցած էր հայերը: Իրենց ազատ աշխատութեանց շնորհիւ անոնք ունեցան բազմաթիւ ագարակներ, լայնածաւալ արտեր, այգիներ, պարտէզներ ամբողջն ալ հերկուած ու ցանուած, մանաւանդ քաղաքին մօտակայ շրջաններուն մէջ անմշակ թիզ մը հող չէր մնացած:

Այս վերջին տարին ալ նախորդներուն պէս լաւ կ'երեւի. բայց աւելի լաւ ըլլալու համոզումը ունենալու համար Ապրիլ 7-ին անձրեւը կը սպասեն:

Եթէ այն օրը ակնկալուած անձրեւը դայ, անոր դա-
լուստը այդ տարուան հունձքերու արտաքոյ կարգի
սոստոութեան եւ երկրի խաղաղութեան Աւետումը ցոյց
կուտայ :

Սպասուած Ապրիլ եօթն եկաւ . բայց դժբախտաբար
այդ սուրբ օրը՝ թուրքոյին երաշտ անցաւ : Այսօր Աւետիք
անունը ունեցող անձերուն անուան տարեդարձի տօնն է .
անոր համար աղբականներ, բարեկամներ այցելութեան
կ'երթան անոր տունը, դայն շնորհաւորելու համար :

Այն իրիկունը Ղուկասին մայրը Տիկին Թուրֆանտա
Մանկոյեան իր զաւակներով ու թոռնիկներով իր մօրա-
քրոջ տունը դնաց այցելութեան, որուն ամուսնոյն Աւե-
տիք Աղա Պղտիկեանին անուան տարեդարձի տօնն էր .
մեծերը բարեմաղթութիւններով, իսկ փոքրիկները անոր
ձեռքը համբուրելով շնորհաւորեցին զինք :

Աւետիք Աղային քով նստած էր մեծ եղբայրը՝ Կա-
րապետ Աղա Պղտիկեանը . ասոնք Ատանայի Սուրբ Ստե-
փաննոս եկեղեցւոյ շինութեան բարերարներն էին :

Հոն էին աղբին երեւելի ջոջերը, ինչպէս քահանաները .
այս տարի ալ, ամէն տարուան պէս, պատկառելի բազ-
մութիւն մը լնցուցած էր տունը :

Աւետիք եւ Կարապետ Աղաները՝ փոխանակ ուրախ
տրամադրութիւնով հաւաքոյթը շէնցնելու, ընդհակա-
ռակն տիուր էին այսօր . մտածկոտ ու մեկամաղձոտ
վիճակ մը կը ներկայացնէին . ներկաները զգալով այս
պարագան կէս դիշերէն առաջ ցրուեցան . անոնց տիւրու-
թիւնը ամէնուն ալ յուզում պատճառեց :

Տիկին Թուրֆանտան տուն վերադառնալէ յետոյ
հարցուց իր տղուն .

— Ղուկաս, տղաս, մօրքեռայրս՝ Աւետիք Աղան,
չառ տիուր էր այսօր, ինչպէս նաեւ եղբայրը՝ Կարապետ
Աղան . մտածումներու մէջ խորասուզուած էին . ի՞նչ կար
արդեօք . դուն բան մը հասկցա՞ր :

— Այո, չառ մտածկոտ էր, պատասխանեց Ղուկաս .

պատճառը ես ալ չեմ գիտեր. միայն թէ բաժնուէլու տ-
տէնը քովը կանչեց զիս եւ պատուիրեց որ վազը կանուխէն
իր քովը երթամ Տօնուղճու Մեղքոնին հետ միասին. ան-
չուչտ բանի մը վրայ խորհրդակցելու համար. դուցէ այն
ատեն կրնանք հասկնալ գաղտնիքը:

Ինչպէս գիտենք, Ղուկաս եւ Տօնուղճու Մեղքոն,
մանկութեան օրերէն ի վեր սրտակից բարեկամներ էին
արդէն. անոնք հարազատ եղբայրներու պէս, սէր ու
գուրգուրանք ունէին իրարու հանդէպ ու ծառայող ուրիշ:

1839 Ապրիլ 8-ին, այս երկու սրտակից բարեկամները
առաւօտուն շատ կանուխէն, Պլտիկեան եղբայրներուն
գուռը թակեցին. դուռը բացուեցաւ ու երկու հաւատա-
րմէնք ներկայացան Աղային:

— Աւետիք աղան հիւրանոց առաջնորդեց զիրենք ու
ըսաւ.

— Այսօր Տատիկս անհանգիստ է, շատ ընկճուած
վիճակ մը ունի. գրեթէ ամբողջ գիշեր չքնացանք. այժմ
քիչ մը կը մրափէ. թող հանգստանայ. չուտով միասին
կուղանք ձեզի հետ խորհրդակցելու:

Չմոռնանք ըսել որ, այն ատենները ատանացի հայերը
իրենց մեծ եղբայրներուն Տատիկ, իսկ իրենց մեծ քոյ-
րերուն ալ ձէճէ կ'ըսէին:

Ղուկաս եւ Մեղքոն հիւրասենեակին մէջ նստան. այդ
պահուն սենեակին մէջ տիրեց խոր լուսթիւն մը, այս
անձանօթ տաղնապը անոնց ալ սիրտը կրծեւ սկսաւ:

Այս երկու բարերար եղբայրները մեծ գոհուութիւն-
ներով Սուրբ Ստեփաննոս եկեղեցին շինել տուած էին
իրենց ծախսերով եւ մեծ դժուարութիւններու կուրծք
տալով, պայքարելով. անոնք հիմա ներքին ինչ վտան-
գաւոր պայքարներ ունին արդեօք որ այսքան վշատու-
թեան մէջ ինկած են. մանաւանդ Կարապետ աղան՝ որ
պայքարներու մէջ պարտուիլ չէր գիտեր եւ հիմա անըս-
պառ կորովը բոլորովին կորսնցուցած կ'երեւի. հակառակ
որ մինչեւ հիմա իր կեանքին մէջ, ոչ մէկ դժուարութեան

սողնու ընկճուած էր, միշտ դիւցադնօրէն պայքարած ու
յաղթանակներ չահած էր:

Ի՞նչ էին Կարապետ Աղա Պղտիկեանին նախապէս
չահած յաղթանակները, կ'արժէ որ այս մասին լուսա-
բանուինք հետեւեալ պատմական տեղեկութիւններէն:

* * *

Ատանայի մէջ հայերը երկու եկեղեցիներ ունէին.
մէկը Սուրբ Աստուածածին, իսկ միւսը Սուրբ Ստեփան-
նոս անուանով, երկուքն ալ կ'իսովին զետնաւոր մատուո-
ներ էին, որովհետեւ հայոց արգիլուած էր, զետնի վրայ
եկեղեցի ունենալ:

Յունական յեղափոխութեան շրջանին թուրք կառա-
վարութիւնը հայոց վրայ ի դործ դրած խստութիւնները
բաւական թուլցուցած էր. հայերը այս առիթէն օգտուե-
լով աշխատած են այս երկու եկեղեցիները կառուցանել
զետնի վրայ. այս ուղղութեամբ դիմում ըրած են կառա-
վարութեան արտօնադիր առնելու համար, բայց տեղացի
թուրքերը ճնշիչ մեծամասնութեամբ հակառակած են եւ
կրցած են արդիւնէլ անոնց շինութիւնը:

Մի քանի տարիներ այսպէս պայքարելէ յետոյ, վեր-
ջապէս Կարապետ աղա Պղտիկեան անձամբ Պոլիս կ'եր-
թայ, եւ հոն Պալաթցի Կարապետ Պատրիարքի շնորհիւ
եւ Պէդճեան Յարութիւն Ամիրայի միջնորդութեամբ կը
յաջողի Սուլթան Մահմուտէն երկու եկեղեցիներու ֆէր-
մանները առնել՝ 1828 թուականին:

Կարապետ Աղային այս յաղթանակը մեծ զայրոյթ կը
պատճառէ հակառակորդ տաճիկներուն:

Սուրբ Աստուածածին եկեղեցին պիտի շինուէր Ժո-
ղովրդային հանգանակութեամբ. իսկ Սուրբ Ստեփաննոս
եկեղեցին պիտի շինուէր Կարապետ եւ Աւետիք Պղտիկեան
եղբայրներու արդեամբք, որոնք այս եկեղեցիին բարե-
րարները եղան:

Հակառակ որ ֆէրմանները առնուած էին, նորէն
դժուարութիւններու մատնուեցան. բայց Կարապետ Ա-

ղան, մեծ զոհողութիւններով այդ դժուարութիւններուն ալ յաղթեց եւ վերջապէս 1830-ին երկու եկեղեցիներու հիմերը բացուեցան եւ հիմնադրութիւնները կատարուեցան հանդիսաւոր արարողութեամբ, շուտով լեցուեցան հիմերը եւ պատերը գետնէն վեր ելան մարդահասակ բարձրութեամբ :

Օր մը երբ դործաւորները կ'աշխատէին Սուրբ Ստեփաննոսի շէնքին վրայ, յանկարծ մզկիթներուն հոճանները, սօֆտանները, մոլլանները, իմամները եւ ասոնց ետեւէն քանդիչ խուժանը ահագին բաղմութեամբ, կանճոխներով, բիրերով, բահերով ու բրիչներով զինուած, պաշարեցին շէնքը :

— Ամբոխը կատաղի բարկութեամբ սպառնալով՝ կը պողար ու կ'ըսէր :

— Պիտի քանդենք այս շէնքը, չենք ուզեր որ կեանքի եկեղեցին շինուի գետնի վրայ. ատիկա հակառակ է մեր կրօնքին, մեր շէրիաթին :

Ամբողջ հայերը սարսափելի վիճակի մը մատնուեցան. պաշարուած էին, չէին կրնար փախչիլ : Ամբոխին պետը քովը կանչեց ճարտարապետ Քիրէճճեան Յովհաննէս Գալֆան եւ հրամայեց որ անմիջապէս ցրուէ դործող բանուորները :

Հրամանը կատարուեցաւ իսկոյն :

— Ո՞ր է Ղարապիտ չօրպաճըն, հարցուց Դենպետը ցասումով :

— Ձեմ դիտեր, տէր իմ, պատասխանեց Գալֆան ահաբեկած. երէկ եւ այսօր չեկաւ մեր քովը :

Ամէն կողմ պահակներ ղրկուեցան՝ կանչելու համար Կարապետ Աղան, բայց չկրցան գտնել. երեկոյեան դէմ մի քանի հակիչ պահապաններ մնացին շէնքին վրայ, որպէսզի դադրի շինութիւնը, մինչեւ որ վախստականը գտնուի :

Ամբոխապետին նպատակն էր, շէնքը քանդելու համար, նախ Կարապետ Աղային հրամայել որ առաջին բրիչը ինքը զարնէ եւ յետոյ իր մարդոց ձեռքով հիմնայա-

տակ կործանէ Սուրբ Ստեփաննոսի կիսաչէն պատերը :

Կարապետ աղային բացակայութիւնը երկիւղ տուաւ ջարդարարներուն , եւ միայն շինութիւնը դադրեցնելով գոհացան . բայց միւս կողմէ ամենախիստ խուզարկութիւններ կը կատարուէին գտնելու համար փախստական կեալուրը :

Եկեղեցւոյ բարերարը նախապէս դուշահած էր դալիք ահաւոր վտանգը ու խոյս տուած էր քաղաքէն . եօթը օրէն հասած էր Պոլիս , ամէն օր կայանէ կայան եօթը ձի փոխելով . ներկայացած էր Պեղճեան Յարութիւն Ամիրային , եւ կացութիւնը պարզած էր անոր :

Երկու երանելի Յարութիւն Ամիրան , պէտք եղած գործողութիւնը խկոյն կատարելով , յաջողած էր Սուրբան Մահմուտի հրամանով , Շէյխ Իսլամի եւ մեծ եպարքոսի միջոցաւ յանդիմանադիր մը ղրկել տալ Ատանայի Միւֆթիին եւ կուսակալին , որպէսզի շարունակուին եկեղեցիներու շինութիւնները անյապաղ . անսաստողներուն մահուան պատիժ կը սպառնար դրութիւնը : Գրքուածքը վատէն կը յանձնուի սուրհանդակին :

Երկու ամիս վերջը , Պոլսէն Ատանա վերադարձաւ Կարապետ Աղան , հեղ ու խոնարհ վարմունքով առանց ցոյցի , չդրվելու համար հակառակորդներուն ցասումը : Իմացաւ որ խուզարկութիւնը դադրած է , իսկ շինութիւնները կը շարունակուէին եւ պատերը կը բարձրանային :

Հակառակ Պոլսէն եկող այդ սպառնալից հրամաններուն , թշնամիները դանաղան պատրուակներով վերստին քանդել ուղեցին շէնքերը , բայց Սուրբ Հոգիով քաջալերուած դիւցաղներ , նոյնպէս երեք անգամ Պոլիս դացած էր , եւ սպառնացող վտանգներուն առջեւը առած , եւ մեծ դժուարութեամբ Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ շինութիւնը աւարտած էր . երկու տարիի մօտ չարաչար աշխատանքներ զոհելով :

Այսպէս դիւցաղնական քաջութեամբ , ճակատամարտի մը վրայ դալնեպսակներ շահող հերոսի մը պէս յաղթանակներ շահեցաւ եւ պարտութեան մատնեց իր հակա-

ռակորդները: Սուրբ Ստեփաննոս եկեղեցիի շինութիւնը աւարտեցաւ. իսկ Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ ժողովուրդին ճակտին քրտինքով կը շինուէր, եօթը տարիէն լմնցաւ, այսինքն 1837-ին:

«Թէեւ այն ատեն այդ բարբարոս խուժանը չկրցաւ այդ եկեղեցին քանդել, բայց անոր յաջորդ արժանաւոր սերունդները՝ 1909, Ապրիլ 14-ին, սկսած ջարդին մէջ, կոտորեցին բլւրաւոր հայեր, կրակի տալով մոխիրի վերածեցին հայկական թաղերուն մեծ մասը, իսկ Սուրբ Ստեփաննոս եկեղեցին ալ՝ յաջողեցան հիմնայատակ կործանել»:

Այսքան պայքարներէն պարտուիլ չզիտցող անձը, ազդային հերոս մը եղաւ եւ հիմնադիր բարերարը Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ:

Յետոյ շուտով հասաւ եղիպտական բանակը, փառք Աստուծոյ անվնաս աղատեցաւ ժողովուրդը, Կարապետ Աղան եղաւ Իպրահիմ փաշային խորհրդականը, իսկ Աւետիք Աղան պետութեան դանձապետը: Այս յաջողութիւններուն, այս փառքերուն մէջ, ինչո՞ւ այսքան տըխրութիւն, ու այսքան յուսահատական վիճակ, անպատճառ քաղաքական ծանրակշիռ տաղնապ մը կայ:

• • •

Ղուկաս եւ Մելքոն մտատանջութեամբ կը սպասէին հիւրասրահին մէջ:

Վերջապէս եկան երկու եղբայրները, բայց Կարապետ աղան իսկապէս ընկճուած էր եւ քիչ մըն ալ կարծրւածէն աւելի:

Ղուկաս եւ Մելքոն յոտնկայս ընդունեցին աղաները ու սովորական մեծարանքներով բարեւելէ վերջ, Ղուկաս իր խօսքը Կարապետ աղային ուղղելով, յուզումով ու հետաքրքրութեամբ հարցուց.

— Բարի ըլլայ, Աղա՛. ի՞նչ է ձեր այս տաղնապին շարժառիթը, որքան ընկճուած էք ու կը տառապիք ներքնապէս:

— Խնդիրը պիտի պարզեմ ձեզի, բայց դադարնիք է ան, մեր խօսակցութիւնը այս շրջանէն դուրս պիտի չտարածուի առայժմ:

— Այս մասին անհոգ եղէք, Աղա', սլատասխանեցին երկու բարեկամները:

Աղան կացութիւնը պարզեց հետեւեալ բացատրութիւնները տալով.—

— Գիտնեք թէ, ըսաւ Աղան, եօթը տարիէ ի վեր խաղաղ ու աներկիւղ կեանք մը կ'անցընէինք, ներկայ բարեխնամ կառավարութեան հովանիին տակ. այժմ կացութիւնը փոխուելու վրայ է եւ վտանգաւոր օրերու մէջն է որ կ'ապրինք: Ամիսէ մը ի վեր տաճիկներու շրջանին մէջ աննպաստ փոփոխութներ կը տանջէին իմ միտքս. այդ դրոյցները հեղհետէ կը զօրանան. մռայլ ամպերը վերստին ծածկել կը սպառնան հայոց արեւը: Կ'ըսուի թէ եղիպտական բանակը պիտի նահանջէ քիչ օրէն, եւ երկիրը պիտի յանձնուի վերստին տաճիկներուն. այժմէն թուրքերուն նախաձեռնութիւնը նետի պէս կը ծակեն կուրծքս. եթէ տարածաշրջանը լուրերը մի' արասցէ իրականան, հետեւեալքը աղէտալի պիտի ըլլայ, ինչպէս մեր անձին, նոյնպէս մեր աղբին համար:

— Ներեցէ՛ք, Աղա', անպաշտօն շրջած զրոյցներու մէջ երկիւղալի ի՞նչ հաւաստիքներ կան, որ այսքան ահ ու դողի կը մատնէ ձեր մեծութիւնը: Ես գիտեմ որ Խպրահիմ փաշային բանակը նահանջել չի գիտեր, ինչպէս չգիտցաւ մինչեւ հիմա: Կիւվլէկի եւ Պօղանթիի ամենհի կիրճերը՝ Կիլիկիոյ անխորտակելի դուռներն են. այդ տեղերը հիմա ահաւոր ամրոցներու վերածուած են, ուրկէ անցնիլ անկարելի է: Կրնայ ըլլալ որ դէպի Գոնիա յառաջացող եղիպտական բանակը պիտի նահանջէ, եւ պիտի հաստատուի Պօղանթիի ամրոցներուն մէջ: Տաճկական բանակը չի կրնար Կիլիկիոյ ամրացած սահմանը պատռել. ես այդ տեղերը գիտեմ եւ քայլ առ քայլ պտըտած եմ. այդ դրոյցները կարծուածին չափ երկիւղ աղբելու չեն մեր վը-

րայ, ըսաւ Տօնուդճու Մեւքոն վստահօրէն ու քաջ զինուորականի մը պէս :

— Այո՛, ճիշդ էն քու ըսածներդ, տղա՛ս, ըսաւ Կարապետ Աղան, բայց կան կէտեր, որոնք կը տանջեն մեր մտքերը :

— Որո՞նք են այդ կէտերը, հարցուց Մեւքոն, վտանգը արհամարհող քաջի մը պէս :

— Կ'ըսուի թէ՛ Սուլթան Մահմուտ, եգիպտական բանակին յաղթանակներէն ահաբեկած ու անճրկած, անդլիական կառավարութեան դիմելով օգնութիւն խնդրած է անկէ : Որպէս թէ հիմա ալ անգլիական զրահաւորները Եգիպտոսի առջեւ խարսխած են, տորմիզին ամիրալը պայմանաւաճիւ պերճնազիր մը տուած է Եգիպտոսի փոխարքայ Մէմէտ Ալի վաչային, որպէսզի բոլոր ուժերը ետ քաշէ Թուրքիայէն. հակառակ պարագային պիտի ռմբակոծէ Երկիրը : Եթէ ճիշդ է այս լուրը, եգիպտացիք ստիպեալ պիտի քաշուին, ու տաճկական բանակը դիւրութեամբ պիտի զբաւէ իր Նախկին հողերը. ահա այս պարագան է որ մեզ կ'ահաբեկէ, ըսաւ Կարապետ Աղան :

— Ի՞նչպէս կ'ըլլայ այդ. Անգլիա՞... քրիստոնեայ կառավարութի՛ւն մը... ինչո՞ւ պիտի օգնէ անօրէն տոճիկին ու քրիստոնեայ ազգերուն կեանքը պիտի վտանգէ. ես այս լուրին չեմ հաւատար, ըսաւ Մեւքոն, միամիտ քրիստոնեայի մը հաւատքով :

— Այո՛, ես ալ այդ ըմբռնումով չեմ հաւատար. բայց կա՛յ խնդիր մը որ չհաւատալ անկարելի է. մարդոց բարոյական վարքն ու բարքը, քրիստոնէական զգացումը, սիրտը խիղճը սպանող, մահացու թոյն մը կայ աշխարհի վրայ : Եթէ մէկը, մի՛ արասցէ անկէ վարակուի, այլեւս այդ անձը կ'ըլլայ պատուհաս մը իր նմաններուն համար, ալ անկէ բարիք մի՛ սպասեր :

— Ո՞րն է այդ թոյնը, հարցուց Մեւքոն՝ զարմացական նայուածքով :

— Այո՛, անձերուն, նոյնիսկ ազգերուն բարոյականը սպանող ամենահզօր թոյնն է կաշառքը : Եթէ մէկը յան-

դըզնի անոր մերձենալ ու մատովը դպիլ հպանցիկ կերպով իսկ, վայրկենապէս անոր խիղճը կը շանթահարուի ու կը մեռնի. եւ այդ անձէն կամ աղէքն խոյս կուտան քրիստոնէական դեացումն ու մարդկային բարոյական սկզբունքները:

— Ուրեմն Անդլիան կաշառուե՞ր է, հարցուց Մելքոն, աւելի դայրացած ձեռով:

— Ես չեմ դիտեր, բայց այլադիւնները կ'ըսեն թէ՝ 1837 Յունիս 20—ին, Վիքթորիան հաղիւ տասնութամեայ աղջիկ մը, երբ Անդլիոյ դահուն վրայ բարձրացաւ եւ եղաւ թաղուհի, Սուլթան Մահմուտ խորթմատ տեսուեցեալ, երիտասարդ թագուհիին սիրտը դրաւելու համար, թանկարժէք նուէրներով օժտեր է դայն եւ անոր արքունիքը, ու տակաւին կը շարունակէ անսպառ ընծաներով ողողել անոր դահլ ու արքունեաց պալատը. դրեթէ Օսմանեան դանձարանը պարպելու աստիճան: Մի՞թէ արտաքին կարգի նուէր, կաշառքի դերը չեն կատարեր, ըսաւ Կարապետ Աղան:

— Այս լուրերը արդեօք ստո՞յգ են:

— Լուրը՝ լուր է. բայց անոր ստուգութիւնը ժամանակը պիտի յայտնէ. մի՛ արասցէ, եթէ իրականանան այս զրոյցները, հետեւանքը աղէտալի պիտի ըլլայ մեզի համար. եթէ Ղադաղ Ամիրան ողջ ըլլար, այսքան երկիւղ պիտի չունենայինք. ան ալ երբէք տարի առաջ իր յաւիտենական հանդիստը դտաւ. հիմա Աստուծոյ դատ պաշտպան չունինք:

— Ուրեմն ի՞նչ կրնանք ընել հիմա հարցուց Ղուկաս:

— Ներկայ պայմաններու մէջ, բան մը չենք կրնար ընել. միայն նախադիւշական միջոցներու պիտի դիմենք որքան որ կրնանք: Այս խնդրին համար, Պողոսեթ դուռնուղ եղիպտական բանակին, պարենաւորման յանձնախումբիս քարտուղարը, պրն. Մկրտիչ Գասպարեանին նամակ մը գրած եմ: Այս նամակս շատ կարեւոր է. Մելքոնէն դատ ուրիշ ոեւէ մէկուն չեմ կրնար վստահիլ. մի միայն Մելքոնին. պէտք է անձամբ ինքը տանի եւ պա-

տասխանը բերէ մեղի . զինուորական կեդրոնը հոն է , ստոյգ տեղեկութիւնները այդ աղբիւրէն պիտի կրնանք քաղել , եւ ըստ այնմ ալ գործել :

— Այո՛ . այս նամակը ուրիշ մէկուն չենք կրնար վստահիլ , ըսաւ Կարասկետ Աղան , կրկնելով իր խօսքը եւ միմիայն մեր աղբային հերոսին , ըսելով նամակը յանձնեց Մելքոնին :

— Աղային այս փաղաքական խօսքը , ցոյց տուած այդ վստահութիւնը , Մելքոնին ազգասիրական զգացումները աւելի բոցավառեցին , հպարտութեամբ լեցուցին անոր կուրծքը : Իր ազգին աւելի մեծ ծառայութիւններ ընելու նպատակաւ , պատրաստակամութիւն ցոյց տուաւ ան , ոտքի ելաւ , առաւ նամակը , նախ ճակտին տարաւ բարեւի կեցող զինուորի մը պէս , ապա համբուրեց աղային ձեռքը եւ հրաժեշտ առնելով ըսաւ :

— Մնաք բարով Աղա՛ . աղօթեցէք ինձի համար ու սպասեցէք վերադարձիս բարի լուրերով :

Ե .

Քաղաքը արտաքին երեւոյթով հանդիստ էր . մարդիկ խաղաղօրէն իրենց անձնական գործերով կը զբաղէին . բայց թուրքերը ներքնապէս լարուած վիճակ մը կը ներկայացնէին հայերու հանդէպ :

Բարեբախտաբար , եգիպտական կառավարութիւնը տեղեակ էր այս կացութեան . անոր աջալուրջ հսկողութեան շնորհիւ , ուեէ միջադէպ տեղի չէր ունենար :

Մելքոնին մեկնելէն մի քանի օր վերջը , քաղաքական աննպաստ լուրերը հայ ժողովուրդին մէջ ալ տարածուիլ սկսան . տաճիկները շրջան ընող թրքանպաստ լուրերէն քաջալերուած , խեթիւ կը նայէին հայերուն . երբեմն այնպիսի նայուածքներ կ'ուղղէին , որ այդ նայուածքներու մէջէն որոշապէս թշնամութիւն մը կ'երեւար :

Անթեղուած կրակին մէջէն բռնկող կայծերուն պէս, ատելութեան հրթիռներ կը ժայթքէին անոնց ցասկոտ աչքերէն:

Գառապեղի մէջ բանտարկուած դայլերու վոհմանները ինչպէս կը նային ոչխարաց հօտին՝ այնպէս ալ կը նայէին թուրքերը հայերուն:

Աստուած չընէ, եթէ Գառապեղին դռները անդամ մը բացուին, ի՞նչ պիտի ըլլայ հայոց վիճակը:

Հայերուն մեծ մասը այնպէս կը կարծէր որ լսուած աննպաստ տարածայնութիւններուն շատերը՝ թուրքերու կողմէն չափազանցուած յերկրածոյ լուրեր էին. միեւնոյն ատեն եզրիպտական բանակին անպարտելի ուժին վրայ արդէն մեծ հաւատք ունէր. ատոր համար ալ չրջող աննպաստ զրոյցներուն եւ այդ թունաւոր նայուածքներուն շատ ալ կարեւորութիւն չէր տար:

Իսկ փոքրամասնութիւնը՝ որ մօտէն տեղեակ էր կաղութեան, ծանր մտահոգութիւններու ներքեւ ճնշուած, երկկողմանի վիճակի մը մէջ կ'ապրէր: Այս փոքրամասնութեան մէջ էին Պղտիկեան եղբայրները եւ անոնց մօտիկ պարապանքները, որոնք անհամբեր կը սպասէին Մելքոնի վերադարձին:

Մելքոն շատ շատ հինգ վեց օրէն վերադարձած պիտի ըլլար, բայց տասներորդ օրն ալ իրիկուն եղաւ եւ ան չեկաւ: Անոր այսքան յապաղումը աւելի սրտնեղութիւն կը պատճառէր անոր սպասողներուն, որոնք անորոջ կաղութեան մէջ կը տատանէին, փոթորիկէ երերող նաւու մը պէս:

Թուրքերու կողմէն դուժուած բօթաբեր լուրերը ալիք-ալիք կը տարածուէին հայկական լայն չրջաններուն մէջ. մտահոգութիւնները օր ըստ օրէ կը սաստկանային. հարեալներու վրէժխնդիր ոգին, քէնն ու ատելութիւնը անոնց դէմքերուն վրայ որոշ դժերով կը փայլէին այլեւս զսպուած բարկութեամբ:

Տասնըհինգերորդ օրն ալ իրիկուն եղաւ. Ղուկաս

սպասելէն յուսահատ ուշ ատեն դոցեց խանութը. մութ ատեն եկաւ տուն. ցաւատանջ մտմտութիւնք մը կը հիւժէր անոր մարմինը, խարտոյններէ մաշող երկաթի մը պէս : Ընթրելու ախորժակ չունէր, անոր համար բան մը չէր առնու. կը խորհէր ու կը խորհէր, անորոջ կացութենէն փրկուելու ելք մը կը փնտռէր, յանկարծ դուռը թակեց մէկը. թակողը Մելքոնն էր :

Ընդոստ ոտքի ելաւ Ղուկաս, դուռը բացաւ, ողջադուրուեցաւ Մելքոնին հետ եւ առանց ժամանակ կորսնցընելու դացին Պղտիկեան եղբայրներուն ապարանքը. արդէն անոնք ալ մեծ մտահոգութեամբ կը սպասէին Մելքոնին :

Երկու եղբայրներ անյուսութեան մատնուած վիճակով, լուռ ու մունջ կը նստէին սրահին մէջ, փոթորկալի մտմտութենէն տարուած : Յանկարծ սպասաւորը ուրախութեամբ ներս մտաւ. աւետեց Մելքոնին եւ Ղուկասին դալուստը. այս աւետումը խեղճ բարերարներուն խոս-վախոյժ մտքերը հանդարտեցուց ու կասկածները փարատեց եւ հրաման ըրին որ դան :

Երկու ընկերներ ներս մտան, բարեւեցին աղաները եւ յետոյ Մելքոն դրպանէն հանելով ականկալուած նոս-մակը յանձնեց Կարապետ Աղային :

Աղան անհամբեր հետաքրքրութեամբ բացաւ նամակը ու կարդաց : Բանակի պարենաւորման հաշուեցուցակները մէկզի ընելով, ըրաւ անոր ընթերցումը եւ անոր տխուր ազդեցութեան ներքեւ, թեր ու դէմ կարծիքներով խոսակցութիւններ տեղի ունեցան տիրող մռայլ կացութեան շուրջ : Ուշ գիշերին երկու ընկերները հրաժեշտ առին Աղաներու ապարանքէն :

Կիւրիկիոյ կացութիւնը պարզուած էր :

Մելքոն երկու օրէն հասած էր Պօղանթի եւ Պղտիկեան Կարապետ Աղային նամակը յանձնած պրն. Մկրտիչ Գասպարեանին :

Երրորդ օրն էր, յանկարծ կացութիւնը կը փոխուի :

Այդ տեղի զինուորական իշխանութիւնը՝ վերէն ստացած հրահանգներուն համաձայն, կը սկսի անակնկալ դործունէութեան:

Մէկէն ճամբաները կը դոցուին, երթեւեկութիւնները կը դադրին. շրջակայ բոլոր գիւղերու միւթարներուն հրամաններ կը տրուին թէ՝ որեւէ մէկը իր գիւղի շրջանակէն դուրս պիտի չելլէ. անհնազանդները մահուամբ պիտի սպառօուին. միայն երկու հայաբնակ գիւղերու՝ Կիւվլէք եւ Գոլղուլքի բնակիչները բացառաբար պիտի կրնան երթեւեկիլ զինուորական անցադիրերով:

Պողանթիի կիրճերուն վրայ շինուած անառիկ մարտ-կոյններուն մէջ հսկողութիւնները կը կրկնապատկուին. ղետեղուած ծանր թնդանօթներուն քով, ռազմամթերքներ կը սկսին բարդուիլ:

Բանակի բոլոր զինուորները իրենց գէնքերով, կազմ ու պատրաստ խրամներու մէջ կը սպասեն, իսկ ձիաւորները Կիլիկիոյ սահմաններուն շուրջ, անընդհատ պտտելով աշալուրջ հսկողութիւններ կը կատարեն:

Զինուորական այս փոյթեռանդ շարժումը, ռազմական վիճակ մը կը ներկայացնէ եւ վայրկեանէ վայրկեան կը սպասուի թշնամական յարձակումի մը:

Զինուորական իշխանութիւնը ստուգած է որ Սուլթան Մահմուտ հզօր բանակ մը պատրաստած է, որով մօտ օրէն պիտի յարձակի Կիլիկիոյ վրայ:

Այս պատճառով ուշացած է Մելքոնը եւ հազիւ կրցած է վերադառնալ տասնեւհինգ օր վերջ, ան ալ զինուորական անցադիրով:

Պզտիկեան եղբայրները՝ իմացած լուրերէն զատ, նամակի պարունակութենէն եւ բանքերին տուած ահանատեսի տեղեկութիւններէն որոշապէս հասկցան թէ՝ վտանդը մօտալուտ է եւ պատերազմը անխուսափելի:

* * *

1839 Ապրիլ ամսուան հետ միասին կը վերջանայ քաղաքիս խաղաղութիւնը. կառավարութիւնը չափազանց

ղբաղած է զինուորական դորժերու կարգադրութեամբ :

Իսլրահիմ փաշան դադար չունի , արծիւի թեւեր հաղած գիշեր ցերեկ կը սուրայ ճակատէ ճակատ՝ Կիլիկիոյ սահմանները հսկող բանակներու քննութեան համար :

Տաճիկները այս առիթէն ֆաջաւերուած , ունայն սպարուակներ կը փնտռէին հայերու հետ կռուելու . տեղ տեղ անհանդստութիւններ , վէճեր սկսան սլատահիլ . հայերը քաղաքէն դուրս չեն կրնար ելլել . թուրք լաճերու բերաններէն կը լսուէին այլեւս հայոց հասցէին ուղեալ հայհոյանքներ , յիշոցներ , ջարդի վերաբերեալ սպառնալից բառեր , եւ բացէ ի բաց կը խօսէին՝ « հայերը պիտի ջարդենք (կեալուրլարը քէսէճէյիլ) » :

Որոշ էր որ այդ անչափահաս մանուկներուն խօսքերը իրենց մեծերուն բերաններէն ելած ձայներուն արձաղանքներն էին :

Այսպէս երկիւղալի վայրկեաններով Մայիս ամիսը վերջանալու վրայ էր . խլրտումները սաստկացան , յանկարծ կը լսուին հաղանդի ձայներ : Պատերազմը սկսած է , թնդանօթները կը դռան...

Սուլթան Մահմուտ Բ. ի կողմէ սպարաստուած տաճկական բանակը կը յարձակի Կիլիկիոյ վրայ :

Յունիս ամսուան առաջին օրերուն կը լսուին սրտաճմլիկ ձայներ , սարսափազդու լուրեր : Տաճկական բանակը՝ առաջին հարուածով կը խորտակէ Կիլիկիոյ սահմանի ամրոցները ու կը սկսի անարգել յառաջանալ :

Յարձակող թուրք բանակի ընդհանուր հրամանատար Հաֆըզ փաշան կը հալածէ եղիպտական զինուորները . իսկ Իսլրահիմ փաշան ուժաթափ եղած անընդհատ կը նահանջէ :

Այսպէս , սրտատրոփ լուրեր ետեւէ ետեւ կը յաջորդեն... Մարաշ սլաշարուած , Այնթապ վտանդի տակ... Հալէպ անկումի ենթակայ... ամբողջ Կիլիկիան սլարտութեան մատնուած... Եղիպտական զինուորները գերութեան դատապարտուած են . են :

Թէեւ Ատանան խաղաղ է տակաւին , բայց անուղղակի

կերպով ըստած այս ահարեկիչ տեղեկութիւնները կը սարսէին հայ ժողովուրդը եւ կը ջլատէին անոր կորովը: Կիլիկիոյ հայութիւնը ճշնաթամերու մէջ կ'ապրի:

Վեհափառ Տ. Տ. Միքայէլ Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Սիւէն մասնաւոր Կոնդակով իր հօտը ազօթքի ու հսկումներու կը հրաւիրէ, որպէսզի այս արիւնայի օրերը անմիտս անցնեն իր զաւակները եւ զերծ մընան չար փորձանքներէ ու աղէտալի արկածներէ եւ սըրտարուխ մաղթանքներով խնդրեն Աստուծմէն, որ տայ աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց սէր միութիւն:

Սրբազան Հայրապետին հրամանը կատարուեցաւ. իրարու վրայ երեք օր երեկոյեան հսկումի ազօթքներ եղան երկու եկեղեցիներու մէջ. ժողովուրդը դունդադունդ կը վազէր ժամ, ուր ջերմեռանդ երկրպագութեամբ, արտասուալից աչքերով ամէն ոք կը մասնակցէր «Եկեայէ» սրտալոյզ ազօթքներուն:

Հսկումի առաջին դիշերն էր, ժամերգութենէն վերջ Առաջնորդարանի սրահը կը հաւաքուին ազգին մեծամեծները, ուր օրուան հրատապ խնդիրներուն վրայ խօսակցութիւններ տեղի ունեցան:

Հաւաքուող ժողովականներու մէջ կը յիշուին Սուրբ Ստեփանոս Եկեղեցիի բարերար երկու եղբայրները՝ Կարապետ եւ Աւետիք Պղտիկեան Աղաները. ասոնց հետ միասին նոյն Եկեղեցիի շինութեան ճարտարապետ Քրիշճեան Յովհաննէս Գալֆան:

Կը յիշուին նաեւ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ շինութեան նախաձեռնարկ եղող Թադիրոս եւ Նահապետ մեծ Աղաները, որոնք մեծադոյն դոմարներով ժողովըրդային հանդանակութեան մասնակցող բարերարներ եղած են, եւ թէ շինութեան յանձախումբի պետեր. այս մեծանուն դէմքերուն յաջորդ սերունդները կոչուեցան Թադիրոսեան եւ Նահապետեան զերդաստաններ:

Այս հաւաքոյթին մէջն էր նաեւ Սուրբ Աստուածածին Եկեղեցին շինող ճարտարապետ Մէյմարեան Յակոբ Գալֆան. այս մեծանուն ճարտարապետը ժամանակին Թա-

դաւորէն նշան առած էր, զոր կը կրէր գլխարկին վրայ. ան հայ ճարտարապետներու մէջ համբաւաւոր դէմք մըն էր: Յակոբ Գալֆան ուրիշ եկեղեցիներ ալ շինած է, որոնց մէջ կը յիշուի Գրիլիսի հայոց եկեղեցին:

Ժողովը նկատեց որ կացութիւնը լուրջ է, մի՛ առասցէ եթէ տաճիկները երկիրը գրաւեն, հայոց համար ընդհանուր վտանգ մը անխուսափելի կը դառնայ. բայց այդ վտանգը աւելի կը սպառնար Կարապետ Աղա Պղտիկեանի անձին քան թէ ուրիշներուն, քանի որ տաճկաց աւադանին ռիսկալուութեամբ լեցուած վրէժ մը ունէր վաղուց ի վեր անոր անձին դէմ:

Ներկայ վարչութեան օրով ալ, Կարապետ Աղան ամենամեծ վստահութիւնը շահեցաւ եղիպտական կառավարութենէն, եւ ամենահաւատարիմ խորհրդակիցը եղաւ Իպրահիմ փաշային եւ արժանացաւ անոր շնորհներուն. ոչ մէկ տաճիկ հաւասարեցաւ անոր բարձրութեան:

Վտանգը ակներեւ էր, որով ժողովը միաձայնութեամբ խնդրեց որ Կարապետ Աղան պէտք է հեռանայ քաղաքէն քանի որ ուշ չէ, ու երթայ Հալէպ կամ ուրիշ տեղ, մինչեւ որ այս արկածալից օրերը անհետանան:

Բայց Կարապետ Աղան մերժեց այս առաջարկը եւ ըսաւ.

— Եթէ ճակատագիրս մահ է, կ'ուղեմ մեռնիլ ձեր մէջ. եթէ կեանք է, կ'ուղեմ ապրիլ ձեզի հետ. կը ցաւիմ որ մեր իրաւունքները պաշտպանող Յարութիւն Ամիրան ~~հիսն Լոսթ~~ տարիէ ի վեր ոչ եւս է. պէտք է ապաւինիլ Աստուծոյ խնամքներուն:

2.

Վտանգը հետզհետէ կը մեծնար. Հաֆլը փաշային բանակը յաղթանակէ յաղթանակ կը քալէր. քաղաքներ, գիւղեր ետեւէ ետեւ կ'իյնային. այս յաղթանակներէն չը փացած թուրքերը ցնծութեան մէջ կ'ապրէին, զիրար կը

չնորհաւորէին, շատ անգամներ կ'ողջագութուէին, իրարու խնդակցութիւններ կը յայտնէին առանց քաշուելու՝ ըլլայ թաղերու մէջ, ըլլայ բանուկ շուկաներու մէջ, արձակ համարձակ, անվախ ու աներկիւղ, սարսափ ազդելու համար, բարոյալքուած հայերուն վրայ, որոնք սըրտատրոփ վայրկեաններ կ'անցընէին ահուդողի մէջ:

Թուրքերը՝ ժանիքները սրած դայլերու պէս կը նայէին հայերուն:

Խեղճ հայերը այս դժոխքէն փրկուելու համար, որո՞ւ դիմէին, որմէ՞ օգնութիւն խնդրէին: Հաճելի փաշային յաղթութենէն դիմովցած տաճիկները՝ իրենց յետին մտքերը հրապարակաւ կը յայտնէին. չնչին բաներու մէջ իսկ աղմկալի վէճեր կը յարուցանէին եւ իրենց թունաւոր մալձը կը թափէին ցասումով ու կ'ըսէին ակռայ կճրտելով. — Կեալուրնե'ր, քիչ մնաց, օրերնիդ համբուած եմ:

Կառավարութիւնը այս ամբողջ սպառնալիքները կը լսէր ու կը տեսնէր, բայց չլսել ու չտեսնել կը ձեւացնէր. այս թուրքութենէն կը հասկցուէր որ եդիպտական իշխանութեան անկումը շատ մօտ է. այս վիճակը կենաց մահու խնդիր էր հայոց համար, որոնք ճշնաթամու վայրկեաններ կ'ապրէին Գողգոթայի ճամբուն վրայ:

Յուսահատութիւն մը կը տիրէր հայոց մէջ. ուրիշ ճար չկար, հրաշք մը պէտք էր, այս մահափտանդ արկածներէն փրկուելու համար. եւ իրաւ այդ հրաշքը չուշացաւ:

Յունիս ամսուան առաջին շաբաթը հաղիւ անցած էր, կարծես իսաւարի մէջէն լոյս մը ծագեցաւ: Յանկարծ ճակատամարտի բախտը կը փոխուէր. այդ յաղթանակներ շահող տաճիկական բանակը՝ պարտութենէ պարտութեան կը մատնուէր, իրար յաջորդող աւետարեր լուրեր պաշտօնական աղբիւրներէ հոսիլ կը սկսին արագահոս առուակներու պէս:

Պետական մունետիկներ հրապարակներու վրայ բարձրադադակ կը յայտարարէին.

«Հաճելի փաշայի բանակը ծուղակի մէջ, հաղարաւոր

ղինուորներ մեռած, զինուորներուն մեծ մասը դերի, բաղ-
մաթիւ վիրաւորեալներ, Հաֆըզ փաշան նահանջի մէջ,
բանակը ջախջախուած, Խալաֆիմ փաշան արծիւի պէս կը
սուրայ Հաֆըզ փաշայի ետեւէն, ռազմադաշտին մէջ ա-
ւար կը մնան հաղարաւոր զինուորական վրաններ, կոյտ
կոյտ ռազմամթերքներ, դէնքեր, թնդանօթներ, բանակի
սլարենաւորման սլաշարներ, փոխադրութեան անասուն-
ներ, — դրաստներ, ձիեր, ջորիներ, կառքեր, ցիրուցան
ձղած դաշտերու մէջ, լեղապատառ կը փախչի Հաֆըզ
փաշան, հազիւ սահմանը կ'անցնի, կը փրկէ իր անձը, ե-
տին ձգելով խորտակուած զօրաբանակը իր ամբողջ կադ-
մով», եւայլն, եւայլն:

Մունետիկներ այսպէս, առանց քաջուելու, անդադար
չարունակեցին իրենց յայտարարութիւնները:

Ատանան կը շարժի, ամէն կողմէն կը լսուին ցնծու-
թեան աղաղակներ. «Կեցցէ՛ եգիպտական կառավարու-
թիւնը, կեցցէ Մէմէտ Ալի փաշա, կեցցէ Խալաֆիմ փա-
շա»:

Այս աղմակալի ձայները կը թնդացնեն օդը. մէկ կող-
մէն մարդիկ շարունակ կը պոռան, միւս կողմէն թնդա-
նօթները անդադար կը դռան, մթնոլորտը կը դղրդի ու
Յաղթութեան Աւետիսը կը տարածուի ամէնուրեք:

Պետական շէնքերու առջեւ կը սարքուին զինուորա-
կան հաւաքոյթներ, կը կատարուին տողանցքներ, մին-
չեւ. կէս դիշեր տեղի կ'ունենան լուսավառութիւններ, տօ-
նախմբութիւններ, նուագներ, համերգներ, սլարեր եւ
խրախճալի հանդէսներ կը շարունակուին այսպէս երեք
օր եւ երեք դիշեր:

Տուներու մէջ հայոց պառաւ մայրերը, ծերուկ հայ-
րերը Մեմէ Է գօրութիւնը Քրիստոսի ըսելով ծնրադիր
կ'աղօթեն ու փառք կուտան Աստուծոյ, որ այս փրկու-
թեան օրն ալ տեսան:

Իսկ չարամիտ թուրքերը տեղին համեմատ, ի-
րենց դոյնը փոխող ղետնառիւծներու պէս դոյն կը փոխեն
հիմա. ինչպէս կը փոխեն գոյներնին՝ այնպէս ալ խօսքեր-

նին. պիծակիլ պէս խայթող լեզուները՝ մեղրի պէս անուշ բառեր կը թափեն հիմա ու կ'ըսեն.

— Մենք հայերուն հետ հայրենակից եղբայրներ ենք, միեւնոյն օգէն, միեւնոյն ջուրէն, միեւնոյն արեւէն սնած ու մեծցած հարապատներ ենք. միեւնոյն մօր խնամքներու մէջ հասակ առնող զաւակներու պէս, եղբայրներ ենք մենք... եւն. եւն.:

Մեծերը այսպէս կ'արտայայտուէին հրապարակներու վրայ, այսպէս կը քարոզէին հոճաներն իսկ մզկիթներու մէջ: Գաղաններն իսկ կը խոնարհին ուժին առջեւ, կ'ըսէ առածը:

Այս սրտաբեկ լուրերէն Օսմանեան Կայսրութիւնը կը սարսի, Պոլիս տակն ու վրայ կ'ըլլայ, արքունիքին մէջ իրարանցումներ տեղի կ'ունենան, զինուորականներ կը շփոթին, նախարարներ կը շուարին, ահաբեկիչ վլովուկ մը կը սարսէ ամբողջ պալատականները:

Շղիալտական բանակին այս մահացու հարուածը կը չանթահարէ կայսրը, եւ Սուլթան Մահմուտ Բ. արքան յանկարծամահ կ'ըլլայ ու կը մեռնի 1839 Յունիս 30-ին:

Առածը կ'ըսէ. — Բախտին հարուածը որքան ալ ծանր ըլլայ, խեղճ մարդը ուղէ չուղէ դայն կը տանի. եթէ չտանի, հարուածը զինքը կը տանի: Այսպէս ալ այս հարուածը չկրցաւ տանիլ Սուլթան Մահմուտ եւ ինքը տարուեցաւ այս ունայն աշխարհէն:

Հետեւեալ օրը, Մեծ Եպարքոս Խուսրէվ փաշա, իր նախարար ընկերներով Խալիլ ու Սայիտ փաշաներուն հետ Սուլթան Մահմուտի որդին, Սուլթան Ապտիւլ Մէ-ճիտ Ա. ը դահ կը նստեցնեն՝ տասնեւվեց տարեկան հասակին մէջ, 1 Յունիս 1839-ին:

Ատանան իադաղ է, խռովութիւնները փարատեցան, այժմ վտանգ չմնաց. հայն ու թուրքը եղբայրացած են այլեւս. ամէն մարդ՝ ըլլայ քաղաքի մէջ, ըլլայ դաշտերուն մէջ, իր անձնական զործով կը դբաղի, ամէն կողմ ապահովութիւն կը տիրէ. հայերը լայն շունչ մը առին. եւ Լզաւ խաղաղութիւն ամենեցուն:

Բայց այս խաղաղութիւնը հազիւ շարունակեց երկու ամիս, Յուլիս եւ Օգոստոս: Սեպտեմբերին վերստին ծայր տունին նորանոր խռովութիւններ ու անհաբեկիչ դէպքեր: Խեղճ հայուն ցերեկը շատ կարճ է, իսկ գիշերը չափազանց երկար:

Այդ տեսնուող լոյսը՝ արեւու լոյս չէր, այլ խաւատին մէջ փայլող ասուս մըն էր միայն, որ շուտով մարեցաւ:

Միջերկրական ծովու մէջ միշտ կը շրջէր անդլիական նաւատորմիդը, պաշտպանելու համար տաճկական ծովեղերեայ սահմանները:

Անդլիական ղրահաւորներուն Ամիրալը՝ Սըր Գոմմատոր Նաբիէ, իր քով Թարգման առած էր Ձմիւռնիոյ հիւսկատոսարանին առաջին Թարգման պարոն Յովհաննէս Խումարեանը:

Եգիպտացի Իսլրահիմ փաշային այս յանդուգն քայլին ու վերջին ծանր յաղթանակին վրայ, անդլիական Ամիրալը սաստիկ հրամաններ ստացած էր իր պետութենէն՝ դրաւելու համար Սիւրիոյ եւ Պաղեստինի մէջ գտնուող ծովեղերեայ բոլոր քաղաքները:

Մէկ Սեպտեմբեր 1839-ին անդլիական նաւատորմիդը սկսաւ ռմբակոծել Պէյրութը, ցամաքային զորարանակներ հանեց Թուրք եւ անդլիացի զինուորներով ու դրաւեց քաղաքը, ռմբակոծման պահուն սպանուեցան 1500 հոգի:

Օսմանեան դրօշակներ սկսան ծածանիլ Պէյրութի չէնքերուն վրայ, անդլիացի ցամաքային զինուորներուն հրամանատարն էր Չարլս Սմիթ, իսկ տաճկական բանակին հրամանատարն էր Իզզէթ Մէհմէտ փաշա, որոնք եղբայրական սիրով լեցուած, այսպէս սլիտի դրաւէին Սիւրիայէն մինչեւ Պաղեստինի ծովեղերեայ քաղաքները:

Նաւատորմիդին Ամիրալը՝ Սըր Գոմմատոր Նաբիէ Աղեքսանդրիա դնաց, ուր եգիպտական կառավարութեան արտաքին գործոց նախարար Եւսոսֆեան Պօղոս պէյին հետեւեալ վերջնադիրը տուաւ.

— Եթէ Մէհմէտ Ալի փաշան Կիլիկիայէն, Սիւրիայէն,

Իրաքէն , Պաղեստինէն եւ Արաբիայէն իր զինուորները ետ
չքաշէ , Բորթ Սայիտ եւ Աղեքսանդրիան ալ ռմբակոծելով
զինուոր պիտի հանեմ ու պիտի դրաւեմ ամբողջ Եգիպտոսը :

Անգլիական այս ամեհի ուժին առջեւ խոնարհեցաւ ,
արքայական փառքերու արժանացող Մէմէտ Ալի փաշան
ու ստիպուեցաւ ետ կանչել իր զինուորները՝ պարսկերով
բոլոր դրաւուած վայրերը :

է.

Քաղաքական այս անցուդարձերէն Կիլիկիոյ ժողովուրդը լուր չունէր . ամէն մարդ ապահով կերպով իր անձնական դործերովը կը զբաղէր :

1839 Հոկտեմբերի առաջին օրերուն մէջ եգիպտական բանակի սլարենաւորման յանձնախումբի քարտուղարը՝ պրն . Միրտիչ Գասպարեան , անակնկալ կերպով Պողանթիէն Ատանա եկաւ , ներկայացաւ Պզտիկեան Կարապետ Աղային , հաշիւներու ամբողջ տետրակները յանձնեց դանձրած դրամներու հետ միասին ու ըսաւ .

— Աղա' , եգիպտական բանակը պիտի նահանջէ այլեւս , մեզի դործ չմնաց . երկու օրէ ի վեր զինուորները սկսան Կիւլէկի ու Պողանթիի ամրոցները քանդել . զետեղուած թնդանօթները անդործածելի դարձնելու համար կը խորտակեն . փոխադրութեան ծանր առարկաները կը վառեն . շրջակայ գիւղերու բոլոր զինուորները հոն կը հաւաքուին , երկու կամ երեք օրէն պիտի դան հոս , ասկէ ալ Եգիպտոս անցնելու համար : Երկիրը տաճիկներուն կը յանձնուի :

Շանթով լուրը անմիջապէս տարածուեցաւ քաղաքին մէջ , ու յուզեց համայն հայութիւնը . իսկապէս երկու օր վերջը Տարսոսի ու Պողանթիի կողմերէն զինուորները դունդադունդ սկսան դալ ու քաղաքին եղերքը վրաններու տակ բնակիլ . այնպէս որ երեք չորս օր վերջը լայնածաւալ դաշտը լեցուեցաւ բաղմահաղար զինուորներով :

Ատանայի արեւելեան կողմը, Սէյհան գետին վրայ, քարաշէն հսկայ կամուրջ մը կայ. բոլոր զինուորները անկէ պիտի անցնին. կամուրջին մէջտեղ պղտիկ չէնք մը կար. Իպրահիմ փաշան հոն նստած աջ ու ձախ հրամաններ կ'արձակէր:

Հոկտեմբերի հինգերորդ օրուան արշալոյսին, պատուէրի մը համաձայն, բանակը ոտքի կանգնած, կարդերու շարքով, կազմ ու պատրաստ կը սպասէր հրամանի:

Արեւը չծագած՝ քալելու հրամանը տրուեցաւ, ու զօրագունդը շարժեցաւ. մարդկային դուռները ծովի կողմէն փակուեցան:

Իպրահիմ փաշան կամուրջին մէջտեղ կեցած, սուր աչքերով կը դիտէր ու կը քննէր անցնող բոլոր զինուորները:

Յանկարծ չորս-հինգ կիներ տեսաւ, որոնք զինուորներուն քովէն կ'երթային, մէյ մէկ երախաներ շալկած: Փաշան կանչեց զանոնք, հարցաքննութենէն հասկեցաւ որ, անոնք թուրք աղջիկներ էին, ամուսնացած եղբայրացի զինուորներու հետ, զաւակներու տէր եղած են, կ'ուզեն իրենց ամուսիններուն հետ Եդիպտոս երթալ:

Փաշան ցատկով ու վայրագ սրտմտութեամբ երախաները կանանց դիրկերէն յափշտակիչ բաղէի մը պէս խլելով, մէկիկ մէկիկ կամուրջէն վար, ջուրին մէջ ձգեց. կիները սկսան սուր վայնասուններով, սրտաճմլիկ ճիչեր արձակել. իսկ զինուորներէն մէկը յանկարծ իր շարքէն ելլելով, հաղուստով միասին կամուրջէն վար նետուեցաւ, գետին յորձանքները պատուելով երախային մէկը բռնեց ու ազատեց խեղդուելէն. այդ զինուորը երախային հայրն էր:

Այս յուզիչ տեսարանէն զառնուկի սիրտ առաւ փաշան, զինուորին կեանքը ներեց ու ազատ արձակեց, որպէսզի անձնազոր հայրը ապրի իր կնոջ ու զաւակին հետ:

Կ'ըսուի թէ Իպրահիմ փաշան առաջին անգամ է որ, ներում կը շնորհէ իր ըմբոստ զինուորին, ընդհանրապէս ան այդպիսիները թողա՞մա՞ս կը սպաննէր:

Բայց տաճիկները կը կասկածէին այս նահանջէն, եւ կը կարծէին թէ՝ այս ալ առաջուան պէս, տարբեր կերպով խաբուսիկ ծրագիր մըն է, թշնամին ծուղակի մը մէջ առնելու համար, որով թերահաւատութեամբ կը դիտէին այս նահանջը:

Քաղաքը պարսպուեցաւ դինուորներէն:

Կէս օր էր, յանկարծ խուճապ մը ինկաւ տաճիկներու մէջ, տեսնուեցաւ որ ամայի թաղերէն, փողոցներէն, շուկաներէն, մարդիկ լեղապատառ կը փախչէին. այրեր իրենց խանութները բաց ձգելով, կիներ իրենց տունները լքելով, մանուկներ, ծերեր, խառնիխուռն ետեւէ ետեւ կը վազէին քաղաքէն դուրս, աղմկալի պոռչոտութներով կը պոռային ու կ'ըսէին.

— Փախէ՛ք քաղաքէն դուրս, Իսլրահիմ փաշան օդը պիտի հանէ պետական բոլոր շէնքերը, բերդերը, կամուրջը. պիտի ուժրակոծէ բոլոր քաղաքը եւն.:

Ժողովուրդը սարսափահար, կը վազէր հեւ ի հեւ քաղաքէն դուրս. դէպի բացօդեայ վայրեր. հայերն ալ միեւնոյն վիճակին մատնուեցան:

«Հողելոյս հայրս՝ Յովհաննէս, ականատես այս խուճապին, կը պատմէր թէ հաղիւ երեք տարեկան էի, մեծ մայրս Թուրփանտան, զիս կռնակը չալկած, եղբայրս՝ Սահակ հաղիւ վեց տարեկան անոր ձեռքէն բռնած, բազմութեան մէջէն, արտորանքով կ'երթայինք, չեմ յիշեր թէ ո՞ր կ'երթայինք»:

Ը.

Այսպէս, Կիլիկիոյ մէջ Նզիրպոտսի հայախնամ վարչութիւնը վերջ կը գտնէ, ու վերստին կը բացուի տաճկական թատերաբեմին տխուր վարադոյրը:

Կ'ըսուի թէ Ժողովուրդին մեծ մասը, մէկ ղիշեր եւ երկու ցերեկ դուրսը բացօդեայ վայրերումէջ ապրեցաւ. քաղաքը ուժրակոծուելու երկիւղը տակաւին փարատած չէր: Փախուստի երկրորդ օրն էր, քաջութիւն ունեցող

անձեր կամաց կամաց սկսան վերադառնալ իրենց բնակարանները:

Երրորդ օրն էր, առտուն տաճկական թաղերէն, յանկարծ վլվլուկ մը կը փրթի. ժխորը հետզհետէ կը մեծնայ. դէնքի ձայներու նման որոտալուր աղմուկներ ալ կը լըսուին, դուռում դռններէն քաղաքը կը գլրղլ:

Հայերը ահաբեկած, կարծեցին թէ ջարդը սկսած է:

Նորէն երկիւղալի սուգ մը կը պատէ հայկական թաղերը. շուկաներու մէջէն խանութը գոցող հայր անապարանքով կը վազէ տունը. տուններուն դռներն ու պատուհանները խփոյն կը դոցուին ու հայոց թաղերը ամբողջութեամբ լուռթեան կը դատապարտուին:

Ուշ առնէն հասկցուեցաւ որ եղիսլական կառավարութեան ահաբեկ մթերանոցները, ապրանքներով լեցուն մնացեր են. այդ ապրանքները փոխադրել կարելի եղած չէ, նոյնիսկ նահանջող փաշան անապարանքէն չէ կրցած հրդեհակ այդ չէնքերը:

Տաճիկ խուժանը հոտառութեամբ կ'իմանայ այս բանը. կը յարձակի մթերանոցներուն վրայ. լախտերով, բահերով, բրիչներով, կացիններով, վայրկեանի մը մէջ ջարդ ու փշուր կը կոտրէ չէնքերուն դռներն ու պատուհանները, ներս կը մտնէ ու կը սկսի թալանի տալ դռներ:

Աւարի կը տրուին հետեւեալ պետական ապրանքները, ասուիի ընտիր կերպաններ, բամպակէ կտաններ, գլխարկներ, կօշիկներ, պղնձէ ամաններ, սաներ, կաթսաներ, զինուորական վրաններ, ընդեղէններ, դարի, ցորեն, ալիւր եւն., որոնք դատ-զատ մթերանոցներու մէջ ամբարուած էին:

Հաղարաւոր թուրք երիտասարդներ, չափահաս պատանիներ, մանուկներ, ծերուկ այրեր, նոյնիսկ պառանդներ զանազան ապրանքներ կռնակնին շալկած, հեւալով, տքալով կը փոխադրեն իրենց տունները. երթեւեկութիւնները մըջիւններու բանակներու պէս կը կատարուէին. մարդիկ մէկ կողմէն լեցուն կ'երթային իրենց տունը ու սարապ կը վերադառնային:

Այս ալան թալանի մէջ, կողոպտող աւաղակները երբեմն իրարու ձեռքերէն ալ կը յափշտակէին սպրանքները, ատեն ատեն արիւնալի կռիւներ ալ կը պատահէին իրենց մէջ. նոյնիսկ տեղի ունեցան սպանութիւններ. տնիշխանութիւնը սկսած էր:

Երեք չորս օր շարունակ, պետական սպրանքներու առևտուրով զբաղեցան տաճիկները. անոնք ձրիակեր պիծակներու պէս մաքրեցին, աւելցին տասնէն աւելի պետութեան հսկայ մթերանոցները, տեղափոխեցին ամբողջ սպրանքները եւ պահեցին զանոնք իրենց տուններուն մէջ. այս խառնաշփոթ կացութեան մէջ կողոպտեցին նաեւ հայապատկան մի քանի վաճառատուներ ու խանութներ:

Այս շարաթ մը տեւող անիշխանութեան շրջանին մէջ, փառք Աստուծոյ, հայօց հաճար կոտորածի դէպք մը չպատահեցաւ. եւ անձի կորուստ մը իսկ չունեցաւ հայութիւնը՝ հետեւեալ պատճառներով:

Նախ՝ տաճիկները կարծեցին որ, Խալրահիմ փաշային այս փախուստը առաջուան եղածին պէս խաբուսիկ նահանջ մըն էր, ղինուորական խաղ մը եւ կամ լարուած ծուղակ մը, իր թշնամին հարուածելու համար. այդ վախով քաջութիւն չունեցան հայոց հետ զբաղելու:

Երկրորդ, անսպառ հարստութեան մէջէն, մեծ մեծ բաժիններ առնելու մարմաջով, երեք չորս օր չարաչար աշխատեցան եւ պատահութիւն չունեցան այդ մասին մըտածելու եւ դործելու, այլ հարուստն ու աղքատը՝ անյադ ախորժակով իրենց սեփական շէնքերուն մէջ ամրաբեւ աշխատեցան պետական մթերքները:

Հաճեղ փաշային բանակը ջախջախուէին յետոյ, Պուսոյ եպարքոսի հրահանգով նոր զօրաբանակ մը կազմուած էր, Տիգրանակերտի կուսակալ Միւշիւր Զէքէրիա փաշային հրամանին ներքեւ:

Միւշիւր Զէքէրիա փաշան, նախապէս իր զօրարանուկը մասերու բաժնեց, որոնք կամաց կամաց պիտի գրաւէին պարպուած բոլոր քաղաքները:

Կողոպուտի վերջին օրն էր, յատուկ Ատանայի հա-

մար բաժնուած զօրքերուն յառաջապահներէն պղտիկ խումբ մը եկաւ քաղաք. հետեւեալ օրուան դալիք ղինուորներուն տեղեր զտնելու համար. ասիկէ զատ պէտք էր որ ժողովուրդն ալ պատրաստուէր արժանաւոր հանդէսով զիմաւորելու զբաւոյլ բանակը, ղէթ քաղաքէն մէկ ժամ հեռաւորութիւն ունեցող վայրի մը մէջ:

Յառաջապահ խմբակին ղալէն վերջը, տաճիկները աննախընթաց խանդավառութեամբ դործի սկսան. անմիջապէս Օսմանեան դրօշակներ, մեծ ու պղտիկ ծաւալով, բարձրացան պետական ու անհատական բոլոր շէնքերուն վրայ. դրօշակներ՝ որոնք վաղուց ի վեր դադրած էին ծածանելէ Կիլիկիոյ շրջանին մէջ:

Տաճիկները գիշերն իսկ քնանալ չգիտցան. ամէն փողոցի գլուխ խարոյկներ կը վառէին, մարդիկ խումբ խումբ մոմերով, ջահերով կը պտըտէին ու զիրար կը շնորհաւորէին անբացատրելի խնդութեամբ, ամէն կողմ լուսավառութիւններ տեղի կ'ունենային. փողոցներու մէջ, տանիքներու վրայ, բաղմութիւնը կը վիտար. այրեր, կիներ, մեծեր ու պղտիկներ խելայեղ հրճուանքներով բարձրադադակ կը պոռային ու կ'ըսէին.

— Կեցցէ՛ Սուլթան Ապտիւլ Մէճիտը... Կեցցէ՛ Միւշիւր Զէքէրիա փաշա:

Եւ այսպէս մինչեւ առաւօտ խմեցին, երգեցին, պարեցին ու այդ բաղմահադար ժողովուրդին աններդաշնակ ձայներովը, պոռչտութիւններովը, ամբողջ քաղաքը կը զգըրդէր:

Հետեւեալ օրը արեւածաղին Ատանայի ու մօտակայ գիւղերուն բոլոր տաճիկները ոտքի վրայ էին. խաժամուժ բաղմութիւն մը կը շարժէր երկիրը:

Քաղաքիս մղկիթներուն, մէտրէսէներուն, մէսջիտներուն բոլոր իմամները, մուլաները, սօֆիտաները, հոճաները եւ շէյխերը, իրենց դէնպետի նախադահութեամբ հսկայ թափօր մը կազմած էին:

Թափօրին առջեւ շարուած կը կենային երկու կարգի վրայ տասնեակ մը թմրկահար մուլաներ, ձեռքերնին մէյ մէկ մաղաճեւ դափեր. իւրաքանչիւր դափի եղերքին վրայ

անցուած էին 20-ի չափ երկաթէ օղակներ. դաւիը քանի շարժէին, այդ օղակները աղմկալի ձայներ կը հանէին:

Ետեւէն նոյնպէս տասնեակ մը սօֆտաներ, սրբադան դրօշակներով՝ (Սաննադը Շէրիֆ) կանդնած էին. այդ դրօշակներուն լայն շերտերուն վրայ Գուրանէն համարներ սլարունակող վերտառութիւններ դրուած էին, կարմիր, կանաչ, դեղին դոյներով զարդարուած:

Ասոնց կը յաջորդէին՝ նոյն շարքով տասնեակ մը շէյ-խեր. անոնք ալ իրենց ձեռքերուն մէջ բռնած էին Մուհամմէտի դարերէն մնացած պատերազմական դանազան զինական դործիքներ:

Աւելի վերջը կուգային Օսմանեան դրօշակներ կրող կարգ մը երիտասարդներ. անոնց կռնակէն յառաջապահ զինուորներ. ասոնցմէ վերջ քաղաքիս մեծամեծները, յետոյ խուժանային ամբոխը:

Թաւիօրը կը շարժի հաղարաւոր շրթունքներէն ցայտող «Լա Իլահէ Իլլալահ» աղօթքը երդելով. այդ ձայներուն կը խառնուէին մեծ ու պղտիկ թմբուկներու, դափերու աղմուկները. այդ թաւիօրին մէջ երկար մաղերով կարգ մը շէյխերուն, տէրվիշներուն վայրի երեւոյթները, անոնց խոչափողերէն արձակուած կոշտ ձայները, խուժանին աններդաշնակ եղանակները, պոռչտութիւնները՝ հեռուէն հեռու իսկ սոսկում կը պատճառէին ունկնդիր հանրուն:

Թաւիօրը հեռացաւ, կարծես թէ քաղաքը օր ցերեկով հանդիստ քունի մը մէջ մտաւ. ամենուրեք խոր լռութիւն կը տիրէր. միայն խուժանին շատ հեռուններէն արձակած խփալուր ձայները օդին մէջ պար բռնող մփեղներու բըղղիւններուն պէս հազիւ կը լսուէին:

Հայերը իրենց տուներու մէջ փակուած, ահ ու դողով ժամեր կ'անցնէին՝ սպանդանոցներու մէջ բանտարկուած դառնուկներու պէս: Յայտնի չէ թէ, Հայոց Առաջնորդարանէն, բարի դալուստ մաղթելու համար, դէթ երկու երեք հոգիէ բաղկացեալ մարմին մը քաջութիւն ունեցա՞ւ բանակը դիմաւորելու թէ ոչ. այս կէտը մութի մէջ կը մնայ:

Խափօրի մեկնումէն մէկ երկու ժամ վերջը, յանկարծ բարկաճայթ պայթիւններով որոտումներ լսուեցան՝ ճարձատող ամպերու պէս. զինուորական թնդանօթները կը դռսային, դիմաւորող բազմութիւնը բարեւելու համար:

Կէս օր էր, խուժանը վերադարձաւ հրէշային թափօրով. ետեւէն կուգային փողահար նորեկ զինուորները, իրենց շնփորները թունդ թունդ հնչեցնելով. անոնց ետեւէն կը քալէր բանակը:

Բանակին առջեւ զօրագունդին պետը, նժոյգի մը վըրայ նստած, մերկ սուրը ձեռքին, աջ ու ձախ կ'ողջունէր բարեւի կեցող բազմութիւնը. իսկ մարդիկ խելայեղ ցընծութեամբ կը բարեւէին զօրագունդի սպան՝ բացագանչելով.

— Կեցցէ՛... Հայթա Պաշը Մուսթաֆա պէյը...

Թ.

Չեմ գիտեր ուրիշ տեղերը, բայց այդ օրերուն ատանացիները զինուորներուն Հայթա կ'ըսէին. տեղական բարբառով «Հայթա Պաշը՝ կը նշանակէ զօրապետ, այսինքն զինուորներուն պետը:

Այն օրը ու այդ վայրկեանին՝ Ատանայի զինուորական հսկողութիւնը բացարձակապէս յանձնուած էր Հայթա Պաշը Մուսթաֆա պէյին. ամէն բան անկէ կախեալ էր:

Մինչեւ իրիկուն զինուորական բոլոր կարգադրութիւնները կատարուեցան. արեւը մարը մտաւ, ամբողջ քաղաքը Հայթա Պաշը Մուսթաֆա պէյին հսկողութեան տակ էր. դիշեր է, անիմանալի լուծիւն մը տիրեց, երթեւեկութիւնները դադրած էին:

Ձոյգ զոյգ զինուորական ձիաւոր պահակները սկսան պտըտիլ թաղերուն մէջ. այդ ձիաւորներուն թամբին առջեւի կողմը՝ զետեղուած կ'ըլլային փոքրիկ թմբուկներ. զինուորները բարակ ոստերով՝ «թըմպըր թըմպըր» կը թմբկահարէին թմբուկները. եւ անոնց ձայներէն կը հասկըցուէր որ Հայթաները պահակ կը պտըտէին:

Անպաշտօն պտըտող ձիաւորներ չէին կրնար թմբկա-

հարել. այդ դործը միմիայն պաշտօնով պտըտող հայթա-
ներուն իրաւունքն էր, ըլլայ զիշեր, ըլլայ ցերեկ:

Հետեւեալ օրն ալ, առաւօտէն մինչեւ իրիկուն, պա-
հալ հայթաները պտըտեցան քաղաքին մէջ. բայց հայերը
քաջութիւն չունեցան տուներէն դուրս ելլելու, կարծես
ստրջացող նինուէցիներու պէս քուրջեր հաղած կ'ապաշ-
խարէին, փակուած իրենց բնակարաններուն մէջ, որոնց
բուխերիկներն ալ մարած էին, որոնցմէ ոչ ծուխ, ոչ մուխ
կ'ելլէր:

Այն օրը երեկոյեան դէմ, մունետիկներ քաղաքին ա-
մէն կողմը պտըտելով սկսան յայտարարել զինուորական
հետեւեալ հրամանը թէ՝ այսօրուէն սկսեալ զիշերները
փողոցները պտըտիլը արգիլուած է, անսաստողները ծա-
նըր պատիժներու ենթակայ պիտի ըլլան:

Այդ զիշեր ձիաւոր հայթաներուն մեղմ թմրկահա-
րումներէն վատ, ուրիշ ձայն չլսուեցաւ: Քաղաքին մէջ
պատերազմական վիճակ յայտարարուած էր:

Երրորդ օրն էր, առաւօտ մունետիկները վերստին ե-
լան հրապարակներու վրայ ու հետեւեալ ծանուցումը ը-
րին.

— Հայրենակիցներ. մեր վեհափառ կայսր Սուլթան
Սալիւլ Մէճիտ Ա.ը իր առաջին ողջոյններով կը բարեւէ
ձեզ, անոր աստուածապարզեւ շուքը պիտի հովանաւորէ
ձեզ եւ պիտի պաշտպանէ իսլամ եւ ոչ-իսլամ հպատակնե-
րուն իրաւունքները՝ անխտիր: Նորին վեհափառութեան
չնորհիւ, քաղաքիս մէջ ու դուրսը, ամէն տեղ անդորրու-
թիւնը կատարեալ է: Այս վայրկեանէն սկսեալ վաճառա-
կաններ, խանութպաններ, արհեստաւորներ, դործաւոր-
ներ եւ երկրագործներ ամէն մարդ պէտք է իր դործով
դրաղի հրապարակներու վրայ. հակառակ ընթացք ցոյց
տուողները յաջս կառավարութեան պիտի նկատուին մէյ
մէկ ըմբոստներ, ու պիտի պատժուին որպէս երկրին խա-
ղաղութիւնը վրդովող յանցաւորներ:

Մունետիկներուն այս յայտարարութիւնը աւելի հա-
յերուն համար էր, որովհետեւ հայերն էին հրապարակի

վրայ տիրող վաճառականները, արհեստաւորները, խա-
նութպանները. քաղաքին առևտրական կեանքը մեծ մա-
սամբ հայոց ձեռքն էր :

Հայերը ստրկուած, երկչոտ աղուէսներու նման,
մեծ զբուշութեամբ կամաց կամաց իրենց թաքստոցներէն
դուրս ելլելով սկսան իրենց խանութները բանալ. եւ
այսպէս մէկը միւսէն քաջալերուելով մինչեւ կէսօր հրա-
պարակը շէնցաւ :

Կամաց կամաց, մէկ շարթուան մէջ անդորրութիւնը
դոհացուցիչ վիճակ մը ստացաւ. չքակալ զիւղերէն եր-
թեւեկութիւնները ապահով կերպով շարունակուիլ սկը-
սան. երկրին տնտեսական կացութիւնը բարւոքեցաւ ըստ
բաւականին :

Աւերակ եղած պետական մթերանոցներուն կոտըր-
ուած դուռներն ու պատուհանները նորոգուեցան կատա-
րելապէս :

Ութերորդ օրն էր. մունետիկները վերստին հրապա-
րակ ելան եւ հետեւեալ կարծ, բայց ազդու ծանուցումը
ըրին ժողովուրդին .

— Հայրենակիցներ՝ ր. անոնք որ Իպրահիմ Փաշային
մթերանոցներէն եւ կամ այլ տեղերէ ապրանքներ փախ-
ցուցին, պէտք է որ անմիջապէս վերադարձնեն այդ կո-
ղպտուած ապրանքները եւ յանձնեն իրենց տեղերուն :
Ձեզի տասնըհինգ օր պայմանաժամ. ապրանքները վերա-
դարձնողները թաղաւորին ներման պիտի արժանանան .
պայմանաժամէն վերջ չբերողներուն տունները պիտի
խուղարկուին, ուր որ գտնուի թալանուած ապրանք,
անոր վրէժը պիտի կտրուի ու ստացուածքներն ալ պիտի
ղրաւուին. «Պաշը պէյլիք, մալը եաղմա» :

Հայթա Պաշը Մուսղաֆա Պէյին այս յայտարարու-
թիւնը՝ լախտի հարուածի մը պէս իջաւ յափշտակիչնե-
րու գլխուն. զողօնները ետ տանիլ կամ չտանիլ կենաց
եւ մահու մէջտեղ տառանիլ պիտի նշանակէր անոնց հա-
մար. հայերը զերծ էին այս յանցանքէն եւ այդ մասին
մտահոգութիւն մը չունէին :

Հայթա Պաշը Մուսղաֆա Պէյի մասին տարաձայնը-
ւած լուրերը սարսափ ազդեցին կողոպտիչներուն վրայ :

Կը լսուէր թէ անիկա հեղ ու խոնարհ էր օրինապահ-
ներուն հանդէսը , իսկ վսլրաբօրէն անդուծ՝ օրինազանց-
ներուն եւ աւաղակներուն հանդէսը :

Մուսղաֆա Պէյ , որքան հեղ ու խոնարհ , այնքան ալ
դիւրաբորբոք ու բարկաճայթ ընաւորութեամբ օժտուած
դինուորական մըն էր , իր սլաշտօնին մէջ ուղղամիտ ,
բայց չսփէն աւելի խստապահանջ էր :

Անոր տեսքը պատկառազդու երեւոյթ մը ունէր .
մարմնով բարձրահասակ , յաղթանդամ եւ գեղադէմ էր .
բայց աչքերը՝ ցասկոտ դոմէշի աչքերուն պէս ահարկու
էին . անոր չսփ ալ ուժի տէր էր . աչքերուն ճեմկուցը
կիսովին կարմիր էր . կարծես բոցափառ կրակ մը կը
փայլէր հոն . ով որ կը նայէր այդ աչքերուն , ակնահար
ըլլալու երկիւղը կը զգար . սեւ ու երկայն մօրուքը տա-
րածուած էր լայն կուրծքին վրայ , առիւծի բաշերուն
պէս :

Տարիքով հազիւ քառասունի կը մօտենար . այդ հըս-
կայ մարմինը՝ կռուի ժամանակ , արաբաշարժ առիւծի
մը պէս , ճկուն ու դիւրաշարժ էր . իսկ իսաղաղ ժամանակ
անոր քալուածքը հսկարտ ու դանդաղ . կայսերական
վէշիւրի մը հովերով ուռած ու սոնքած կը պտըտէր՝ վե-
հատեսիլ շուք մը տարածելով իր շուրջը ու իր փառքով
կը լեցնէր ճանապարհը :

Անիկա , եղիպտացի Խպրահիմ փաշային պէս՝ կայի-
նակիր դահիճներ չի պահեր իր քով եւ ոչ ալ կախաղան
կը դործածէր մահապարտ մը սպաննելու համար :

Ան՝ ընտիր կաշիէ շինուած , ռակեճամուկ դօտիւն
մէջ պատրաստ կը պահէ խաչածեւ դետեղուած զոյդ մը
երկփող ատրճանակներ , որոնք տեղական բարբառով կը
կոչուին Ղուպուրլու Տապանչա :

Այդ ատրճանակները պատերազմէ դուրս ալ կը գո-
ռան . միմիայն օրինապաններու , լրտեսներու , գողերու

ու աւազակներու վրայ եւ կը սպաննեն տեղն ու տեղը, ուր որ գտնուի կամ տեսնուի մահապարտը:

Մէկ խօսքով կ'ըսուի թէ՝ Մուսղաֆա Պէյ, չարագործներու համար արինարբու ռիսկալ մըն էր, որոնց հանդէպ ներողամիտ ոգի մը ցոյց տուած չէ երբեք:

Անիկա առայժմ հրապարակի վրայ չի տեսնուիր. իր գրասենեակին մէջ, օրուան ծանր հոգերով ու գործերով զբաղած էր. քաղաքը բարեկարգելու ու անդորրութիւնը վերահաստատելու տենչով:

Մուննտիկի վերջին յայտարարութենէն օր մը յետոյ, ամբողջ կողոպտուած միջերանոցներուն դռներն ու սլատուհանները բացուած էին. ամէն մէկ դրան առջեւ զինակիր Հայթա մը պահակ կը կենար, իսկ ներսը մասնաւոր պաշտօնեաներ կը սպասէին դալիք ապրանքները ընդունելու եւ իրենց տեղերը ղետեղելու համար:

Երկչոտ յափշտակիչները կամաց կամաց իրենց գողօնները կը բերէին ու կը յանձնէին ներսի պաշտօնեաներուն. բերողներուն համար ունէ պատիժ չկար. արծակ համարձակ կը վերադառնային իրենց տունները ու կը ստըտէին ազատօրէն. անոնց համար, մասնաւորապէս կայսերական ներում չնորհուած էր: Այս ներումէն օգտուիլ ուզող կողոպտիչները հետզհետէ կը բերէին ապրանքները ու կը յանձնէին մասնաւոր պաշտօնեաներու:

Տասնըչինգ օրուան պայմանաժամը լրացած էր, գողօններուն կէսէն աւելին յանձնուած էր պետութեան, մնացած ապրանքները կը սպասէին օրինադանց ըմբոստներուն քով:

Մուսղաֆա Պէյ կատաղի ցասումով ոտքի ելաւ. առիւծ մըն էր ան որ կը մռնչէր...

Օրինադանցներէն ու գողերէն աւելի, նախապէս մահուան պատիժ որոշուած էր այն լրտեսներուն, որոնք տաճկական բանակի զինուորական զաղտնիքները հալորդած էին եգիպտական պետութեան, եւ անոր հաւատարիմ լրտեսները եղած էին կաշառքներով. պէտք էր զանոնք ձերբաւիակել ու տեղն ու տեղը սպաննել: Այս գոր-

ծին մարդն էր Հայթա Պաշը Մուսղաֆա Պէյ :

Հետեւեալ օրը Հայթաները սկսան ձերբակալու-
թեանց , բռնուողները նախ կը տարուէին պատերազմա-
կան տտեան . հոն առենապետող զատաւորը նոյն ինքն
Մուսղաֆա Պէյն էր . մանրակրկիտ հարցաքննութիւն-
ներէ յետոյ կը վրկէր զանոնք բանտ . օր մը վերջը կը
խուզարկուէին անոնց տունները . եթէ բան մը չգտնուէր
անմիջապէս ազատ կ'արձակէր բանտարկեալը . եթէ
գտնուէր , հրապարակի մը մէջ կը տարուէր , հոն Պէյին
ատրճանակները կը դուռային անոր կուրծքին ու դիտա-
պաստ կ'իյնար զոհը . դիակը մէկ օր մէկ գիշեր մնալէ
վերջը կը վերցուէր՝ թաղուելու համար :

Մուսթաֆա Պէյ աւելի կատաղի էր դաւաճան լըր-
տեաներուն համար . այդպիսիները բանուկ շուկաներու
մէջ կը գնդակահարէր եւ դիակը մէկ երկու օր կը մնար
հոն , ի ցոյց մարդկանց : Այսպէս շարունակուեցաւ մէկ
երկու շաբաթ ու ժողովուրդը սարսափի մատնուեցաւ :

Առտունները փողոցներու մէջ , մայթերու վրայ , պե-
տական ասրանքները ցիրուցան նետուած կ'ըլլային , ո՞մ
կրնար մօտենալ անոնց . յափշտակիչները՝ գիշերուան
խաւարէն օգտուելով , դուրս կը նետէին զանոնք՝ իրենց
կեանքերը փրկելու համար :

Դատարանէն ազատ արձակուողներ կը պատմէին
թէ՝ դատարանէն ներս մտնող ամբաստանեալ մը , Մուս-
ղաֆա Պէյին սարսափազդու երեւոյթէն կը սկսէր դո-
ղալ . շատ անգամ կը պապանձէր իսկ եւ խօսելու առեն
կը թոթովէր վախէն . ոեւէ մէկը անոր հրեղէն աչքերուն
չէր կրնար վայրկեան մը նայիլ . նուաղում կուգար
դիտողին վրայ :

Առաջին երկու շաբթուան մէջ , ասրանք յափշտա-
կողներէն զատ , երեք լրտեսներ բռնուեցան ու բանուկ
շուկայի մը մէջ գնդակահարուեցան :

Հայերը մինչեւ հիմա հանդիստ մնացին . բայց լըր-
տեսական խնդիրը անոնց ալ հանդիստը վրդովեց . հայե-
րուն մէջ կային այնպիսի դէմքեր , որոնք մտերմիկ յա-

լարերութեան մէջ էին Խորահիմ Փաշային հետ. չըլլայ որ այդ մօտիկ տեսութիւնները լրտեսական յանցանք մը նկատուէին կառավարութեան կողմէ։ Այս կէտը չարա-
չար մտածել կուտար ենթականերուն եւ սարսափ կ'աղ-
դէր անոնց։

Օր մը, Երկու ղինակիր Հայթաներ, յանկարծ կայ-
նեցան խանութի մը առջեւ ու հարցունքին վարպետին։

— Դո՞ւն ես, չաղմագճը Ուստա Ղուկաս Մանկոյ-
եանը։

— Այո՛, պատաւխանեց վարպետը, բայց դորժիքը
ձեռքէն ինկաւ ու դոյնը նետեց։

— Հրամեցէ՛ք, Մուսղաֆա Պէյը քեզ կ'ուզէ ըսին,
եւ ստանց ժամանակ կորսնցնելու աօրն տարին զայն։
Խանութին մէկէ աւելի աշակերտները դողալ սկսան։
Հայերուն մէջ վախ մը, վլվլուկ մը ինկաւ։

Այն օրը ձերբակալուողը միայն Ղուկասը չէր, ուրիշ
հայեր ալ կային. ժողովուրդին մէջ սուղը տարածուե-
ցաւ։

Ղուկասին մայրը Տիկին Թուրֆանտան խանութի
աշակերտներէն մէկուն միջոցով լուր առնել ուզեց. ա-
շակերտը դնաց բանտ, բայց ապարդիւն վերադարձաւ.
բանտարկեալներուն հետ տեսակցութիւնը արդիւրեւած
էր։

Երկուդը մեծ էր. օրը մէկ կամ Երկու մահաւճիւռ
ստացողները կը գնդակահարուէին, բայց ոչ հայերէն.
միւսնոյն ատեն ասոնց մասին ալ չատ վախ կար, քանի
որ լրտեսական խնդիր մը մէջտեղ ելաւ։

Բանտարկեալ հայերուն ընտանիքները, մահաւճտանդ
սարսուռներու մէջ էին. ամէնուն տունը սուղ ու շիւան,
լաց ու կոծ կը տիրէին։

Երեք օր վերջը Ղուկասին տունը, խանութը, նոյնիսկ
աւարակին մէջ խուղարկութիւններ կատարուեցան. ո՛չ
միայն Ղուկասին տունը, այլ անոր եղբայրներուն ու
քոյրերուն տուներն ալ խուղարկուեցան, մանրակրկիտ

ղինութեամբ. Իրաւք Աստուծոյ, խուզարկող պաշտօնեաները ձեռնունայն վերադարձան:

Հինդերորդ օրը Ղուկաս աղատ արձակուեցաւ. բանտէն ելաւ. կարծես թէ Ղաղարոսի պէս դերեղմանէն յարութիւն առաւ. բարեկամներ աչքի լոյսի. եկան, իրենց խնդակցութիւնները յայտնելու, որոնք հետաքրքիր էին լսելու անցուցած ահաւոր փորձանքին պատմութիւնը:

Ղուկաս հետեւեալը պատմեց:

Ձերբակալուած օրս, կեանքիս յոյսի թելերը կտրուեցան. մեծ վտանդի մը մէջ էի. երբ պատերազմական ատեան ներկայացայ, տեսարանը ահաւոր դտայ. Մուշաֆա Պէյը իսկապէս պատկառաղդու երեւոյթ մը ունէր. երբ աչքերս անոր աչքերուն հանդիպեցան ցնցուեցայ, զգացի թէ մարելիք մը կուգար վրաս: Անմիջապէս դետին նայեցայ, ծունկերս սկսան կթոտիլ, բայց ինքզինքս չուտով ժողվեցի. մարդը զգաց վրձակա թէ ընկճուած եմ, անոր համար իր հարցումներուն շեշտերը մեղմացուց. անկէ քաջալերուելով կըրցայ պատասխանել իր հարցումներուն՝ հետեւեալ կերպով.

— Այո՛, անունս Ղուկաս է. արհեստս զինադործութիւն է, Չալմաղճը.

— Մայրս ատանացի է, անունը Թուրֆանտա. Պաղիրկեան Պաղտիկի քրոջ աղջիկն է.

— Հայրս Ծովեցի է, անունը Մանկօ.

— Երեք եղբայրներ ենք. ինձմէ մեծ է Կարապետ եղբայրս, իսկ Գրիգոր աւելի սղտիկ է.

— Երկու քոյրեր ունիմ, որոնք ամուսնացած են. Տիկին Ճուհար Էնֆրիյէճեան, իսկ միւսը Տիկին Վարդէ էօճիւրեան.

— Ես ալ ամուսնացած եմ, երկու զաւակներ ունիմ, Սահակ եւ Յովհաննէս:

— Իսրահիմ փաշան զիս ճանչցաւ արհեստիս բերումով. բանակի աւրուած զէնքերուն նորոգութիւնները կը յանձնէր ինծի, չէի կրնար ոչ ըսել, վարձքս ալ կը վճարէր:

— Այո՛, Կիւմլէէի կիրճը «Կիւմլէէ Պօղապոլ» ամրացնելու համար, Պօղանթը տարաւ զիս, այդ տեղի մարտկոյցներուն մէջ թնդանօթները զետեղող վարպետներէն մէկն ալ ես էի :

— Իպրահիմ Փաշան շատերուն համար մշակելի հողեր տուաւ, նոյնպէս ալ մեր երեք եղբայրերուն. Զադըթ պետին եղբրքին՝ Գարալար Պուճաղը անունով ընդարձակ բայց բոլորովին խոսպան հող մը տուաւ. նոյնպէս Եղներ. հոն երկրագործութեամբ զբաղեցանք, մշակեցինք երկիրը, հունձքը առատ կ'ըլլար. հասոյթին տասանորդը կ'առնէր, մնացածը մեզի կը մնար :

— Խանութիս դործերն ալ յաջող էին, լաւ կը շահէի, այդ շահով ագարակ մը առի :

— Այդ ագարակս Սէյհան գետին եղբրքը «Մուրսալ» կոչուած գիւղին մէջն է :

— Խանութիս մէջ դտնուած որսի հրացանները իմ ասլրանքներս են եւ ինծի կը պատկանին :

— Պատրաստ դրամ չունիմ հիմա, բայց ոեւէ մէկուն պարտք ալ չունիմ :

— Այո, այդի մըն ալ ունինք, «Ելլանլը Մէլէրէսի» կոչուած դաշտին մէջ. երեք հարիւր արտավար է, մէկ մասը անմշակ է տակաւին. այս կալուածը մեր հօրմէն մնացած է եւ կը պատկանի մեր ամէնուն :

— Ուրիշ բան չունիմ, ունեցածներս ասոնք են. իրաւ է Զեր ըսածը. մեծ մասամբ Իպրահիմ Փաշային գործերէն շահած եմ, բայց ճակտիս քրտինքով ու տքնաջան աշխատութեամբս :

— Այո՛, Տէր իմ, ըսածներս ճիշդ են. ստուգեցէք, եթէ արդար եմ՝ աղատ արձակեցէք ձեր ծառան. եթէ մեղաւոր եմ՝ պատժեցէք, Զեր օրէնքին համաձայն :

Հարցաքննութիւնը լմնցաւ. զիս բանտ ղրկեց. կացութիւնս անորոշ էր, գնդակահարուելու երկիւղը միշտ կը փոթորկէր հոգիս. հինդ օր անթաղ դերեղմանի մէջ ասլրեցայ, սոսկումներու մէջ էի. բայց մէկէն աղատ արձակուեցայ. երբ լոյս աշխարհը տեսայ, փառք տուի

Աստուծոյ. հիմա իսկ երբ մտաբերեմ այդ վայրկեանները, տախաւին դող կուգայ վրաս:

— Միւս բանտարկեալները ի՞նչպէս են, հարցուցին հետաքրքրութեամբ ունկնդիրները:

— Անշուշտ անոնք ալ ինծի պէս պիտի արձակուին մի քանի օրէն. քանի որ ո՛չ կողոպտողներ եղած ենք եւ ոչ ալ լրտեսներ: Միայն թէ Պլտիկեան Աւետիք Աղայի մասին ծանր ամբաստանութիւններ ըրած են թուրքերը, որպէս թէ պետական դանձին դրամները ամբողջութեամբ կողոպտած ըլլայ. թէեւ հակառակորդները զօրաւոր փաստեր չունին, բայց այսու հանդերձ վիճակն ալ անորոշ կը մնայ առ այժմ:

Ղուկասին այսպէս անվնաս կերպով բանտէն ազատ արձակուիլը՝ բարեպատեհ նշան մը եղաւ աղջին համար ու կը սպասուէր միւս բանտարկեալներուն ազատութիւնը:

Ղուկաս հետեւեալ օրը կանոնաւոր կերպով իր դործին սկսաւ. քաղաքին յուղումնալից կացութիւնը օր ըստ օրէ կը խաղաղէր. ղինուորական իշխանութիւնը իր խըստութիւնները կամաց կամաց կը թուլցնէր. անոր համեմատ ալ ժողովուրդին հոգեկան տաղնապները բարւոքիլ սկսան. հետզհետէ մահապատիժներուն թիւը կը նուազէր:

Հայ բանտարկեալները ազատ արձակուեցան. իսկ ամիս մը վերջը Պլտիկեան Աւետիք Աղան իր երկու ընկերներով Պոլիս դրկուեցաւ ղինուորական հսկողութեամբ, որպէսզի իր հաշիւները հոն ներկայացնէ:

Քաղաքային պաշտօնեաներ կամաց կամաց իրենց աթոռները դրաւել սկսան Մուսղաֆա Պէյի կարգադրութեամբ, պետական դանձապետ Աւետիք Աղա Պլտիկեանին յաջորդեց Պրն. Մկրտիչ Գասպարեանը, որուն պաշտօնը տեղական բարբառով կը կոչուի «Սանտը Էմինի»՝ տախինքն պետութեան վստահելի դանձապետը:

Մկրտիչ Գասպարեանին այս պաշտօնը բարեչնոր-
նչան մը եղաւ հայոց համար եւ անոնք ըմբռնեցին թէ
իրենք երեսէ ինկած չեն, այլ պետութեան վստահութիւ-
նը կը վայելեն եւ հաւատարիմ աղբ մը կը նկատուին՝
յաչս կառավարութեան. այս բարեշրջումը՝ ժողովուրդի
մտքին մէջ տիրող փոթորկալի կասկածները եւ կամ
ջարդի երկիւղները կերպով մը փարատեց ու խաղաղու-
թիւնը վերահաստատեց աղբին մէջ:

Մեր պատմութենէն քիչ մը շեղելով, կ'արժէ որ այս
երիտասարդ գանձապետին եւ անոր գերդաստանի շուրջ
հետեւեալ կարեւոր տեղեկութիւնները հաղորդենք:

Այդ թուականին, հայոց մէջ բարձր մտաւորական
մը կը նկատուէր պրն. Մկրտիչ Գասպարեանը. Ատանայի
թրքախօս հայերուն մէջ բացառիկ դէմք մըն էր: Ան հը-
մուտ էր հայերէն եւ թուրքերէն լեզուներուն, միեւնոյն
ատեն ուսողութեան մէջ նշանաւոր հաշուագէտ էր. հաշ-
ուագիրտութեան մէջ ոչ ոք կը հաւասարէր անոր, տա-
ղանդաւոր, հազուադիւտ անձ մըն էր. Պոլսէն հայերէն
թերթ կը ստանար:

Ան երկար տարիներ շարունակեց իր պաշտօնը, դու-
ցէ մինչեւ իր մահը եւ իր գործի բերումով բոլոր ատա-
նացիներու մէջ նոր մակդիրով կոչուեցաւ Սարաֆ
Մկրտիչ:

Սարաֆ Մկրտիչը, ընդհանուր ժողովուրդին ամէ-
նածանօթ մարդը եղաւ. դրեթէ մականունով ալ չէր յիշ-
ուեր. նոր մակդիրը մականունի տեղ անցաւ, նոյնիսկ
իր զաւակները վերջէն կոչուեցան Սարաֆեան:

Մկրտիչ Գասպարեան ունէր կրտսեր եղբայր մը եւ
կը կոչուէր Յարութիւն Գասպարեան: Յարութիւն երր
հասակ առաւ ու մեծցաւ, առեւտուրի մարդ. եղաւ, լաւ
դիրք մը շինեց ու հարուստներու կարգ անցաւ. դրել
կարգալ դիտէր, բայց հայ լեզուին շատ հմուտ չէր:

Ատանացիներու այն ժամանակի հազած հազուստը

չալիւար կամ էնթարի էր․ Ըլլայ հայ, Ըլլայ Թուրք, ուրիշ ձեւ հադուստ չէին հադներ :

Յարութիւնն Գասպարեանը, բացառիկ Ըլլալով իր հայրենակիցներու մէջ, առաջին անգամ եւրոպական հադուստ հադած էր, անոր համար Ժողովուրդը վինքը անուանեց Սինետր Արթին :

Սինետր Արթին՝ Ատանայի քաղաքապետ ընտրուեցաւ 1880-ին եւ չորս տարի շարունակեց . հայերուն մէջ առաջին եւ վերջին քաղաքապետ եղող անձը Սինետր Արթինը եղաւ :

Սինետր Արթին ունեցաւ շնորհալի զաւակ մը որ կը կոչուէր Արիստակէս Յ. Գասպարեան . կատարեալ մտաւորական մըն էր ու քաջ դիտէր հայերէն եւ տաճիկերէն լեզուները, ինչպէս նաեւ Փրանսերէն :

Արիստակէս Գասպարեանը երբ 20 քսան տարեկան պատանի էր, Ատանայի Արշարեան վարժարանի հոգաբարձութեան պաշտօնը ստանձնեց, իր ընկերներով կիրակնօրեայ լսարան հաստատեց . քաղաքական արդէնքներու հանդիպելով երկար կեանք մը չունեցաւ լսարանը, բայց դպրոցին համար օգտաւէտ շրջան մը բոլորեց :

Արիստակէս էֆ. Գասպարեանը 1890-ին ամուսնացաւ, ընտանիքով Պուլիս դնաց . ինքը իրաւարանական վարժարանէն շրջանաւարտ էր եւ քաջ օրէնսգէտ :

Պուլսոյ մէջ ալ, իր արհեստին մէջ համբաւաւոր դէմք մը եղաւ . Մէճէլլէին կանոնադիրքը դիւրուսոյց եղանակով բարեփոխեց . այս դործը վատական նախարարութեան կողմէ չափազանց դնահատուեցաւ եւ արժանացաւ Սուլթան Համիտի երրորդ մէճիտիյէ պատուանշանին :

1908, տաճկաց Սահմանադրութեան տարին, Արիստակէս էֆ. Գասպարեան «Բիւզանդիոն» Թերթին մէջ «Դէպի Կիլիկիա» վերնադրով շարք մը յօդուածներ գրեց :

1915-ին հայակեր Թալէթ փաշան, այդ յօդուածներուն համար, սպաննել տուաւ, տարադրութեան շրջանին, յիսունեւհինգ տարեկան էր :

Արիստակէս Յ. Գասպարեան զգացումով որքան

հայրենասէր, հողիով ալ նոյնքան բարեպաշտ քրիստոնեայ մըն էր. ան իր աղբին, իր հայրենակիցներուն պատիւ բերող մարդ մըն էր: Արքայական Յ. Գրասպարեանը երկար տարիներ նշույն Գաւառական Ժողովի անդամ եղած էր:

ԺԱ.

Ձինուորական խստութիւնը շարունակուեցաւ գրեթէ երեք ամիս, անկէ յետոյ մեղմացաւ եւ քաղաքը հանդարտեցաւ, փոթորիկէն վերջ խաղաղած ծովու մը պէս:

Մուսղաֆա Պէյ իր դործերէն թեթեւացած, երբեմն ժամանակ կ'ունենար ու կը շրջադայէր քաղաքին մէջ, իշխանավայել վեհութեամբ, իր թիկնապահ Հայթաներով միասին:

Ան կը փայլէր զինուորական ոսկեճամուկ զլեւտներուն մէջ, խրոխտ ու հպարտ քալումքով կը ճեմէր. բարձր հասակին ու թիկնեղ ուսերուն վրայ ցլց կը բռնէր իր դուլիւք. սեւ ու երկայն մօրուքը՝ քայլերուն համաձայն ալիք-ալիք կը տատանէր լայն կուրծքին վրայ. հըպարտ էր ան. հրափայլ աչքերէն ժողովուրդը մազնիւսացնող հոսանք մը կը տարածէր իր շուրջը. զինքը զիւճ թողները կ'առնէին. զինուորական սուրը մէջքէն կախուած, իսկ երկփող դոյզ ատրճանակները դօտիին մէջ խաչաձեւ դետեղուած, աջէն ձախէն բարեւի կեցող ժողովուրդը կ'ողջունէր. իսկ մարդիկ երկրպագելու աստիճան կը խոնարհէին ու տաճկավայել ձեւերով կը բարեւէին զինքը:

Մուսղաֆա պէյ՝ շուրջի թիկնապահներով, իր զինուորական փառքերով, քալելու ատեն կարծես կ'ուռէր, կը փքար, շողշողուն փետուրներու մէջ ուռած սիրամարդի մը պէս:

Այլեւս երկիրը խաղաղ, մտքերը հանդիստ ու կեանքերը ապահով էին. հայերը հանդիստ սրտով 1840-ի Սր. Ծնունդը աներկիւղ ասնեցին. ցնծութեամբ կը շնորհաւորէին զիրար Գրիստոսի հրաշափառ Ծնունդը աւետե-

լով ու «փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» աղօթքը երդեալով :

Այսպէս, Ծննդեան երեք օրերուն, հայերը դործէ դադարած, ուրախ ու զուարթ բարեկամներուն այցելութիւններ տալով, խրախճանքներ կ'ընէին՝ անմեղ ժամանցներով. իսկ քահանաները աղատօրէն տունէ տուն երթալով «Խորհուրդ Մեծ»ը կ'երդէին, խնկաբոյր քաղցրութեամբ :

Մահուան դատաստարտուած բանտարկեալ մը, երբ հրաշքով աղատի իր կապանքներէն, ո՞ր կրնայ նկարագրել անոր բերկրալի կեանքը. ճիշդ այդպէս է հիմա հայոց վիճակը, որ անամպ երկինք ու լոյս աշխարհ կը տեսնէ, մահէ աղատուող կալանաւորի մը պէս : Այդ կեանքը ասլորողը դիտէ, անիկա միայն կը դժայ աղատութեան լոյսին արեւահամ քաղցրութիւնը :

Այո՛, պետութեան թաղաւորը փոխուեցաւ, անոր հետ միասին երկրի վարչական ձեւն ալ փոխուեցաւ. նախկին աւատական դրութիւնը վերցուեցաւ, որով քահանա իշխաններուն քով ձրի աշխատութեան օրէնքներն ալ վերջացան, դահակալող նոր թաղաւորի նոր օրէնքին համաձայն. ամէն մարդ ուղած տեղը եւ ուղածին քով կ'աշխատի, իր անձին համար, իր օգտին համար :

Ղուկասին խանութը՝ Ատանայի Նաղ Ճամիսի անունով մզկիթին դիմացի շարքին վրայ կը գտնուէր :

Ուրբաթ առտու մը, Ղուկային մէջ յանկարծ եռուղեռ մը տեսնուեցաւ, մարդիկ ճամբաներէն քաշուելով պատերուն քով կը շարուէին հապճեպով. բոլոր խանութպանները ոտքի կ'ելլէին. ըսին թէ՝ Մուսղաֆա պէյ մըրդ-կիթ կուգայ՝ աղօթելու համար :

Շուկային մէջ պահ մը երթեւեկութիւնները դադարեցան. խանութներու դործերը կեցած՝ կը սպասէին Պէյին գալստեան :

Քիչ վերջը Պէյը իր չքախումբով եկաւ ու մտաւ մըրդ-կիթ. Ժողովուրդը դետնամած խոնարհութեամբ կը բարեւէր զօրախումբը :

Պահ մը վերջը աղօթքը լրացաւ ու շքախումբը դուրս ելաւ նոյն փառքով :

Մուսղաֆա պէյլին ուշադրութիւնը դրաւեց խանութ մը, ուր կը տեսնուէին մեծ ու պղտիկ որսի հրացաններ . քայլերը ուղղեց դէպի հոն . խանութին առջեւ կանգ առաւ, այդ տեղը Զադադէն Ուստա Ղուկաս Մանկոյեանին խանութն էր :

Պէյլը բարեւեց խանութպանը :

Ղուկաս իր աշակերտներով, աչքերը գետին յառած, ձեռքերը կուրծքին դրած՝ կազմ ու պատրաստ կը կենար Պէյլին դիմացը . խսկոյն մէջքը ծռելով խոնարհեցաւ ու խորին ակնածութեամբ Պէյլին բարեւը առաւ :

Պէյլը կարգ մը հրացաններ աչքէ անցընելէ վերջը՝ հարցուց .

— Վարպէ՛տ, աւերուած հրացաններ ալ կը նորոգէ՞ք :

— Այո՛, տէր իմ, պատասխանեց Ղուկաս, աչքերը միշտ գետին ուղղած :

— Ես ալ կարգ մը նորոգութեան կարօտ գէնքեր ունիմ . վաղը քովս եկուր առ եւ նորոգէ :

— Դիտո՛ւս վրայ, տէ՛ր իմ, ըսաւ Վարպետը՝ դիտիկոր բարեւելով . ու զօրապետը հեռացաւ իր հետեւորդներով :

Ղուկաս հետեւեալ առտուն սովորականին պէս եկաւ խանութ . բայց միտքը կրծող հարց մը կար . Մուսղաֆա պէյլին պիտի երթար, աւրուած գէնքերը պիտի չինէր :

Ղուկաս չէր ուզեր այդպիսի դիւրաբորբոք ու խըստապահանջ մարդու մը հետ զործ ունենալ, ատկէ կրնար վտանգ մը դալ իրեն . բայց ի՞նչ ընէր . ո՛չ չէր կրնար ըսել : Որոշեալ ժամուն ճամբայ ինկաւ . գնաց անոր դղեակը, ուր դռնապահ հայթա մը սենեակին առջեւ պահակ կը սպասէր : Ներս մտնելու համար անկէ արտօնութիւն խընդըրեց :

Պահակը նախ ինքը ներս մտաւ . ապա դուրս ելլելով՝ ներս առաջնորդեց Ղուկասը : Վարպետը նախ մտքէն աղօթք մը յիշեց, չար փորձանքներէ աղատելու համար : Յետոյ կթոտ ոտքերով եւ քիրտը տրոփելով ներս մտաւ :

Մուսղաֆա պէյ, ծալապատիկ նստած էր բաղմոցին վրայ: Երբ Ղուկասը տեսաւ, ոտքի չելաւ, բայց արտաքոյ կարգի սիրալիր յարգանք մը ցոյց տուաւ անոր. նստեցուց քովը՝ քաղցր խօսքերով, մեծարեց ու պատուասիրեց զայն ծխախոտով ու սուրճով:

Ղուկաս իրեն ընծայուած այս սիրալիր վերաբերումէն անակնկալի եկաւ, ու քիչ մը քաջալերուած՝ հանդիստ շունչ մը առաւ: Լսուածին չափ ալ դիւրագործք ու բարկաճայթ չէր ան. ան նոյնիսկ հեղ ու խոնարհ էր:

Մուսղաֆա պէյ, զոյգ մը ատրճանակներ հանեց դարակէն, երկուքն ալ երկիւղ էին. մէկուն ըլթակը կոտորուած էր, միւսին աղեղը, յանձնեց Ղուկասին. իր ուղած ձեռով բացատրեց շինուելու կերպերը:

Վարպետը աչքէ անցուց զոյգ մը աւերուած երկիւղ ատրճանակները. Պէյին բացատրածին պէս հասկցաւ անոնց շինուելիք ձեւերը եւ ըսաւ.

— Տէ՛ր իմ, ուղածիդ պէս կրնամ շինել. բայց առնելազն անոնք շարաթուան մը աշխատանքի կարօտ են:

— Վարպետ, օրը հոգ չէ, ըսաւ Մուսղաֆա պէյ, ուղած ժամանակդ բե՛ր, միայն թէ դործը մաքուր ըլլայ:

— Տէ՛ր իմ, այդ մասին ալ պիտի աշխատիմ քեզ զոհ թողուլ. ու սրահէն դուրս ելաւ Ղուկաս, քիչ մը ինքնավստահ զգացումով:

Ատանայի մէջ իսկապէս վարպետի համբուս ունէր Ղուկաս, եւ իր ամբողջ շնորհը թափեց այդ զոյգ մը երկփող ատրճանակներուն վրայ. ո՛չ միայն անոնց պողպատեայ մեքենական մասը շինեց, այլ անոնց կոթերն ալ բոլորովին նորոգեց՝ ընկուղենիի ընտիր փայտերով, այդ փայտերուն վրայ արծաթ թելերով զանազան դեղակերտ նկարներ շինեց. այդ բարակ զարդանկարներուն մէջտեղ կ'երեւէր օսմանեան դրօշակի պատկերը՝ մահիկն ու աստղը. նորաճաշակ արուեստով:

Ատրճանակներուն փողերը՝ այնքան խնամքով մաքրուած, յղիւած ու սրբուած էին, որ անոնք լուսնի ճաճանչներուն պէս, մութին իսկ՝ կը փայլէին:

Ատրճանակներու նորոգութեան դործը մէկ շարք—
թէն աւելի տեսց. բայց այդ մասին վախ չունէր, քանի
որ Պէյը աղատ ձգեց ու պայմանաժամ չտուաւ իրեն. ա—
տոր համար ինք ալ աւելի ժամանակ ունեցաւ խորհելու,
ու իր արհեստին վրայ նոր հեղինակութիւնով նորութիւն—
ներ աւելցուց դործին վրայ, եւ իրաւ այդ դործն ալ ար—
ուեստական տեսակէտով եղաւ իր դործերուն լաւագոյնը
եւ դլուխ դործոցը:

Ղուկաս տաճկական կարմիր դրօշակի մը մէջ փաթ—
թեց ատրճանակները. ուզեց որ Պէյէն առաջ ուրիշ մէկը
չտեսնէ իր գլուխ դործոց հեղինակութիւնը. իսկ օսման—
եան դրօշակը իբր ծածկոց դործածեց՝ ի յարգանս եւ ի
պատիւ Հայթա Պաշը Մուսղաֆա պէյին, եւ միեւնոյն ա—
տեն ցոյց տալու համար իր հաւատարմութիւնը Օսման—
եան Կայսրութեան հանդէպ:

Ղուկաս քայլերը ուղղելով գնաց զօրանոց. հոն սեն—
եակին առջեւ սպասող պահակին յանձնեց ծրարուած զէն—
քերը. պահակը ներս տարաւ դայն, պահ մը վերջը դուրս
ելաւ եւ թող տուաւ որ Վարպետը ներս մտնէ:

Ղուկաս այս անգամ աներկիւղ քայլերով ներս մտաւ,
մէջքը ծռելով բարեւեց Պէյը, բայց տեսաւ որ անիկա ա—
տըրճանակները կը դիտէր, խոր ուշադրութեամբ կը քնն—
նէր ու կը զննէր զանոնք հիացմամբ ու զարմացական նայ—
ուածքներով:

Ղուկաս բաւական կեցաւ ոտքի վրայ. իր դալը ի—
մաստ տալու համար թեթեւ մը հաղաց. Պէյը գլուխը վեր—
ցուց ու դոհունակ ժպիտով, բայց երկբայական շեշտով
հարցուց.

— Ուստա Ղուկաս, շիտակ ըսէ, իրաւ այս ատրճա—
նակները իմիննե՞րս են:

— Այո՛, տէ՛ր իմ, ձերիններն են, ըսաւ հաստատա—
պէս:

Անմիջապէս իր քովը նստեցուց. նորէն սկսաւ քննել
ատրճանակները, որոնց վրայ գեղարուեստական նուրբ
ճաշակ մը կը փայլէր. քանի զէնքին կայծահանը կը լա—

րէր ու բլթակը կը քաշէր, խուրձ խուրձ կայծեր կը թափէին վառօդամանի ծակտիքին վրայ. դէնքերուն մեքենական մասն ալ անթերի կերպով կատարեալագործուած էր :

Այս նորաշէն դէնքերը այնքան սիրեց որ, դօտինէն հանեց հիները, անոնց տեղ ղետեղեց նորերը, որոնք փայլ մը եւս աւելցուցին իր կուրծքին, յետոյ դառնալով Վարպետին՝ ըսաւ .

— Ուստա՛ Ղուկաս, ես Ատանայի վրայ չնչին դաղափար մը ունէի, չէի երեւակայեր որ այսպէս վարպետներ կը դնուին հոս . մայրաքաղաքին մէջ իսկ հազուադիւս են ձեզի պէս վարպետները, շնորհակալութիւն քեզմէ, ըսէք, ի՞նչ է պարտքս :

— Տէ՛ր իմ, այս չնչին աշխատութիւնս, ձերդ մեծութեան նուէր է իմ կողմէս :

— Ո՛չ, Ղուկա՛ս, ըսէ՛, ի՞նչ է պարտքս, ըսաւ Մուսդաֆա պէյ, հրաբորբ աչքերը ուղղած Վարպետին :

— Ներեցէ՛ք, տէ՛ր իմ, ինչո՞ւ կը մերժէք ծառայիդ խնդրանքը, քանի որ Ձերդ Վսեմութեան նուիրելու համար այդ աշխատութիւնը յանձն առած եմ :

— Իրաւունք ունիս Ղուկաս, ըսաւ Մուսդաֆա պէյ. խօսքին շեշտը մեղմացնելով. այդպէս վարժուած էք դուք նախկին իշխաններէն . բայց հիմա Սուլթան Աստիւլ Մէճլիտ բարեխնամ կայսեր հրամանին վրայ ջնջուած են այդ օրէնքները . ձրի աշխատութիւն չկայ . աշխատողը պիտի վարձատրուի, ու լեցուն քսակ մը նետեց Ղուկասին առջեւ որպէսզի ուղածին չափ առնէ :

Ձարմացաւ Ղուկաս այս տաճիկին վեհանձնութեանը վրայ եւ պզտիկ դումար մը ուղեց . տաճիկը անոր եռապատիկը տուաւ, ըսելով թէ այս տուածս ալ քիչ է, բաղդատմամբ Պոլսոյ դիներուն :

Ղուկաս առանց առարկելու, առաւ դրամը եւ ուրախութեամբ դուրս ելաւ, շնորհակալութիւն յայտնելով :

Ղուկաս բոլորովին իր կարծիքը փոխեց : Անոր հան-

դէպ յարդանքի արժանի նոր սէր մը արթնցաւ իր մէջ : Հայկական շրջանակի մէջ Մուսղաֆա Պէյի մասին սկսաւ դռվեստով արտայայտուիլ ու ըսել :

— Այո, Մուսղաֆա պէյ, թէեւ տաճիկ է, բայց իղճամիտ ու բարի մարդ է :

Նոյնպէս Մուսղաֆա պէյն ալ չափազանց գոհ մնացած էր Ղուկասին արհեստի ու արուեստի մէջ ունեցած խոր հմտութենէն, իր վարձքին համար նուազ պահանջ-կոտ բնաւորութենէն : Ասոր համար իր գոհունակութիւնը կը յայտնէր ու գռվեստով կը խօսէր իր շրջանակի մարդերուն՝ ցոյց տալով անոնց երկիրոյ զոյգ ատրճանակները, որոնց վրայ կը փայլէին տաղանդաւոր արհեստաւորին նրբակերտ հեղինակութիւնները, որոնք գիտողներուն հիացում կը պատճառէին :

Այսպէս արհեստագետի մը ու զօրապետի մը միջեւ, պատահամբ ու անղլալարար բարեկամական կապ մը հաստատուեցաւ :

Այն ժամանակի երկրի սովորութեան համաձայն բոլոր խանութներուն յատակը գետնէն երեք չորս թիւ բարձրութեան վրայ հաստատուած կ'ըլլային, որովհետեւ փողոցները, նոյնիսկ շուկաները թէ՛ նեղ եւ թէ՛ մաքուր սալաշատակ չունէին, ձմեռը ցեխոտ կ'ըլլային . անցնող դարձող ձիաւորներուն, կռքերուն իրենց շուրջը սրսկած ցեխերէն խուսափելու համար, խանութներուն յատակը գետնէն այդչափ բարձր շինելու ստիպուած էին, նոյնիսկ ամառուան փոշիներէն զերծ մնալու նպատակաւ . զետնի հաւասար խանութ չկար եւ այդ խանութներու մէջ բաղմոցներու եւ կամ դռններու վրայ ծալապատիկ նստած կը դործէին, թէ՛ վաճառականները եւ թէ՛ արհեստաւորները . այսպէս էր նաեւ Չաքմադէճը Ուստա Ղուկասին խանութը, ուր վարպետն ու աշակերտները նստած կը դործէին :

խանութին մէջ մի քանի հատ աթոռակներ ալ կ'ուներային, զանոնք հիւրերու եւ կամ յաճախորդներու հա-

մար կը պահէին: Հիւրերը կամ չահաւէտ յաճախորդները կը մեծարուէին սուրճով, զոր խանութին մէջ աչտակերտները կը պատրաստէին. այն ատենները չուկաներու մէջ սրճարաններ դոյութիւն չունէին:

Ուրբաթ օր մը՝ Մուսղաֆա պէյ, իր թիկնապահներով, մզկիթէն ելլելէն վերջը երկրորդ անգամ ըլլալով, Ուստա Ղուկասին խանութը եկաւ, նորաչէն ատրճանակները մէջքին, որոնց կոթերը գօտիէն վեր փառ-փառ կը փայլէին:

Վարպետն ու աշակերտները յոտնկայս ընդունեցին մեծաշուք հիւրերը, որոնք աթոռակներու վրայ բազմեցան: Զօրապետը հրամայեց որ նստին. Ղուկաս եւ իր աշակերտները նստան ծունկերու վրայ, բայց ակնածանօք:

Մուսղաֆա պէյը կրկին ատրճանակներու խօսքը բացաւ՝ իր խորին շնորհակալութիւնները յայտնելով. ըսաւ որ, ոչ միայն ինքը գոհ մնացած է, այլ իր բանակին մէջ գանուղ սպաներն ալ հիացած են այդ զէնքերուն եւ անոնց վրայ դրոշմուած նորահնար, արուեստական հեղինակութիւններուն վրայ:

Ղուկաս իր անկեղծ երախտիքներով գոհունակութիւն յայտնեց Պէյին՝ ըսելով որ վեհանձնօրէն վարձատրուեցաւ ինքն ալ եւ արժանացած է իր գովեստներուն:

Խօսակցութեան միջոցին վարպետը իր ձեռքով սուրճ պատրաստեց եւ սկահակներու մէջ լեցնելով տուաւ իր բարձրատիճան հիւրերուն, որ խմեն:

Սուրճերը ախորժակով խմեցին, բայց Պէյը՝ իր հիացումը յայտնելով ըսաւ:

— Ուստա Ղուկաս, սուրճ պատրաստելու մէջ ալ չքնաղ յատկութիւն մը ունիս: Նստի՛ս մինչեւ հիմա համով հոտով, այսպէս սուրճ մը խմած չեմ. կ'ուզեմ որ ամէն օր առաւօտեան սուրճս հոս խմեմ ու յետոյ երթամ գործիս:

Ղուկաս խոնարհելով, խիոյն բարեւեց իր Տէրը եւ

յօժարութիւն ցուցնելով՝ պատրաստակամութիւն յայտնեց, խնդումներն մեծարանքներով:

Ղուկաս չափազանց դոճ էր վիճակէն եւ մանաւանդ իր մեծանուն հիւրին երկրորդ այցելութենէն, որուն շուքը՝ յետայսու ամէն օր պիտի վայելէր իր խանութին մէջ եւ անոր սետական փառքը հովանի պիտի ըլլար իր վրայ. այս բարեպատեհ հաղնիսլումը, այս բարեկամութիւնը՝ իրեն համար նախախնամութեան մէկ բացառիկ շնորհքը նկատեց, որ այսպէս զիպուածով կրցաւ մտերմանալ աղնուաշուք անձի մը հետ:

Մուսղաֆա Պէյ, որքան խտտապահանջ, այնքան ալ ճշդապահ էր, հետեւեալ առտուն ճիշդ ժամանակին եկաւ, համով-հոտով ու բաց ակորժակով իր սուրճը խմեց ու գնաց. այլեւս իր խոստումին համաձայն ամէն օր առաւօտուն, որոշեալ ժամուն կողար սուրճը կը խմէր ու կ'երթար. միայն կիրակի օրերը բացառութիւն էին, քանի որ հայերը չէին գործեր այն օրը:

Ղուկասին խանութը կարծես զինուորական խանութ մը եղաւ. Հայթաները մեծ մասամբ ընտելացած վարպետին հետ, պարապ պահերուն կուզային, կը նստէին մտերմական խօսակցութիւններով ժամանակ կ'անցնէին. ասոր համար Չաղմաղճը Ուստա Ղուկաս Մանկոյեան, հրապարակի վրայ մեծահամբաւ արհեստաւոր մը եղաւ, ու ամէնուն կողմէ յարգուած անձ մը:

Հայթաներու ամէնօրեայ շփումներէն, Ղուկաս հասկըցաւ, որ Մուսղաֆա Պէյ ամուսնացած չէ, ամուրի մարդ մըն է:

Չարմացաւ երբ լսեց այս բանը. ի՞նչպէս կ'ըլլայ այդ, տաճիկ ըլլալ եւ շամուսնանալ, խորհեցաւ ինքն իրեն:

Յետոյ Հայթաներէն իմացաւ, որ Մուսղաֆա Պէյ զինուորական կէանքին մէջ հանդիստ կէանք մը ունեցած չէ. մասնակցած է Թուրքիոյ ներքին ու արտաքին բաղմաթիւ կռիւներուն, քով կռուող է ու յաղթանակներ չահեր է:

Սուղ ժամանակի մը մէջ, հմուտ ռազմապէտի մը համարաւ շահած է Մուսղաֆա Պէյ. պետութիւնը անոր կարողութենէն օգտուելու համար, ամենադժուար ու վտանգաւոր ճակատներուն դրկած է, եւ ուր որ վայեր է յաղթանակով վերադարձեր է. դտնուած է մեծ ու փոքր կռիւներու մէջ, միշտ պատերազմ. անոր համար ամուսնութեան մասին խորհելու եւ մտածելու ժամանակ ունեցած չէ, աշխատեր է միշտ իր ազդէին ու իր հայրենիքին վրկութեան համար. անոր սիրոյն՝ հանդիստ կեանք մըն ալ ունեցած չէ:

Մուսղաֆա Պէյին ամէնօրեայ այցելութիւնները օրուան խօսակցութեան նիւթ եղան ընդհանուր ժողովուրդին. հայեր ու այլազգներ հասկցան որ Պէյին հաւատարիմ սրտակիցը, հրապարակի վրայ՝ միակ Ուստա Ղուկասն է, որուն տէւէ մէկ առաջարկը եւ կամ խնդրանքը չի մերժուիր. անոնք այնքան սիրով ու սերտ բարեկամութեամբ կ'ապուած են իրարու:

Թուրքերն իսկ, երբեմն իրենց դժուարին դործերուն յաջողութեան համար, Ուստա Ղուկասին բարեխօսութիւնը կը խնդրէին եւ անով կը յաջողէին:

Զինուորական հսկողութեամբ Պոլիս դրկուած Պըդտիկեան Աւետիք Աղան ալ իր երկու ընկերներով վերադարձաւ Ատանա՝ 1840 մեծ Պահլի վերջին Աւագ շաբթուան մէջ. Պոլսոյ դատարանէն անպարտ արձակուած էին անոնք: Անոր համար Սուրբ Զատիկը, այսինքն Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը, աննախընթաց խընդութեամբ տօնեցին հայերը:

ԺԲ.

Այսպէս խաղաղ ու հանդիստ անցան 1840-ի Սուրբ Ծնունդն ու Սուրբ Զատիկը: Եկաւ ամառ. Օգոստոս ամսուան մէջն ենք. օգերը տաք եւ հեղձուցիչ:

Մուսղաֆա Պէյ իր ամէնօրեայ այցելութիւնները անվրէպ կը շարունակէր: Օր մը խօսակցութեան պահուն ան իր բարեկամին հետեւեալ հարցումը տուաւ.

— Ուստա Ղուկաս, այս օրերս չափ յողնած կը դղամ ինքզինքս. դէթ տասնըհինգ օր արձակուրդի պէտք ունիմ. կը չիսփաքիմ որ քաղաքի տաղտուկներէն քիչ մը հեռու ասլրիմ: Բացօդեայ դաշտի մը մէջ, կանանչադարձ առուակի մը եզերքը նստիմ ու որսորդութեամբ դբաղիմ. պահ մը մոռնամ դործի աշխարհը ու կաղդուրուիմ: Անշուշտ դուն աւելի լաւ գիտես այս տեղերը. ո՞ր տեղը որսորդութեան համար աւելի յարմար է:

Ղուկաս՝ պահ մը մտածելէ վերջ պատասխանեց:

— Տէր իմ, քաղաքիս ամէն կողմերը կրնաք որսորդութիւն ընել, բայց ամենէն յարմար տեղը որ կ'ուզէք քիչ մը հեռու է:

— Տեղին հեռաւորութիւնը աւելի լաւ է, բաւական է որ որսի տեղ ըլլայ. ո՞ր կողմն է այն:

— Այդ տեղին անունը «Պող Աղաճ» կ'ըսեն. հոծ եւ կուռ կաղնիներու անտառ է, ձիհան դետին արեւելեան կողմը կը գտնուի. ձիով 6-7 ժամէն կը հասնիք, ուր պիտի դռնէք ամէն տեսակ թռչուններ՝ երամ-երամ, զանազան չորքոտանի անասուններ՝ խումբ-խումբ. որսի սիրահարներ միշտ հոն կ'երթան:

— Լա՛ւ ուրեմն, չարաթ մը վերջը դործերս կը կարգադրեմ, ուրբաթ օրուան աղօթքէն վերջ, ճամբայ կ'ելլենք. պայմանաւ որ դուն ալ պիտի դաս մեզի հետ, մէկ երկու շաբաթ միասին ժամանակ կ'անցնենք:

— Ներեցէք Տէր իմ. այս մասին ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ. թէեւ որսի հրացաններ կը շինեմ եւ այդ արհեստին ալ հմուտ եմ, բայց որսորդութիւն չեմ գիտեր, որսի համար հրացան մը պարպած չեմ. աւելի լաւ է վարպետ որսորդներէն մէկը տանիք ձեզի հետ, որ օգտակար ըլլայ ձեզի:

— Ուստա Ղուկաս, կը հաւատամ անկեղծութեանդ, ըսաւ Պէյը. բայց այդ տեղերը լաւ գիտցող որսորդ առաջնորդի մըն ալ պէտք ունիմ. ձեզի ծանօթ ո՞վ կայ, այդպէս վստահելի ու յարմար մէկը:

— Ամբողջ Ատանայի մէջ հանրածանօթ որսորդ մը
կայ. քաղաքիս մէջ մէկ հատիկ է, որսի ամէն տեղերը
քայլ առ քայլ զիտցող, լաւադոյն տաշնորդ մը եւ քաջ
նշանառու որսորդ մըն է, բայց զժրախտաբար ձեզի
յարմար չէ:

— Ի՞նչ է անունը:

— Անունը Մեւքոն է:

— Ինչո՞ւ յարմար չէ, կեալի՞ւր ըլլալուն համար,
հարցոց Պէյը կատակելով:

— Գաղաքիս շրջակայ դաշտերուն մէջ վայրի խողեր
չառ կան. իսլամ զիւղացիներուն արտերը կը մտնեն,
հունձքերը կ'աղտոտեն ու կը փճացնեն. անոր համար
Մեւքոն իսլամներէն արտօնուած է այդ վայրի խողերը
սպաննելու եւ զիւղացիներուն արմտիքը փրկելու կո-
րուստէ: Խողերուն միտն ալ կը բերէ քաղաք, կը ծախէ
եւ անով ալ կ'ապրի. այս գործով զբաղելուն համար ալ
ան կոչուեցաւ Տօնուզնու Մեւքոն: Այս անունը իսլամնե-
րուն հաճելի չէ. եթէ ոչ ձեր փնտրած մարդն է:

Այսպէս, Վարսկո Ղուկաս, Մեւքոնի մասին լայն
տեղեկութիւններ տուաւ:

— Բարեկամ, մենք խողի հետ գործ չունինք, դուն
աշակերտդ զրկէ, թող դայ հոս՝ տեսնուինք, ըսաւ Պէյը:

— Հիմա հոս չէ, ինչպէս ըսի միշտ զիւղերը կ'եր-
թայ, բայց այսօր վաղը կուգայ:

— Լաւ ուրեմն, երկու օր վերջը թող ըլլայ, հոգ չէ.
բաւական է որ դայ հոս, մէյ մը տեսնուինք, ըսաւ Պէյը
ու սուրճը խմելէ վերջը դնաց:

Օր մը վերջը Ղուկասի խանութին մէջ, Տօնուզնու
Մեւքոն տեսնուեցաւ Մուսղաֆա Պէյին հետ եւ համա-
ձայնեցան որ, ուրրաթ օրուան աղօթքէն վերջ, ճամբայ
պիտի ելլեն դէպի Պող Աղաճ: Տակաւին ուրրաթին երեք
օր կար:

— Ուստա Ղուկաս, համաձայնեցանք Մեւքոնին
հետ. հասկցանք որ դուն որսորդութիւն չես զիտեր,
բայց որսերը՝ եփելու ընդունակութիւն ունիս եղեր:

անոր համար դուն ալ պիտի դաս, պիտի ընկերանաս մեզի, ըսաւ Մուսդաֆա Պէյ:

Ղուկաս այս առաջարկը չկրցաւ մերժել. կամայ կամայ ընդունեց. խանութը աշակերտներուն եւ իր օգնական վարպետին ձեռք, ուրրաթ օրը կէսօրէն առաջ ճամբայ ելան. այն օրը Օդոստոսի վերջին ուրրաթն էր:

Խումբը հետեւեալներէ կը բաղկանար. Մուսթաֆա Պէյ եւ իր չորս Հայթաները, Ղուկաս եւ Մեւքոն Խօթը հողի. ամբողջը՝ ձիաւոր, միայն Մեւքոնը հետիոտն. անիկա ձի նստիլ չէր սիրեր: Երեկոյեան դէմ հասան որոշուած վայրը, բայց խումբէն շատ առաջ կառքով մը՝ կառապանի մը հետ միասին իրենց պէտք եղած դոյքերը դրկած էին:

Կառապանը գոյքերը վար առած էր կառքէն. երկու խոշոր զինուորական վրաններ լարեցին, միւս առարկաներն ալ զետեղեցին մէջը եւ օթեւանեցին Ճիհան գետին եզերքը:

Ճիհան գետին ջուրը՝ ամառը տաք կ'ըլլայ. հաճելի չէ: Հողէ շինուած խոշոր կուժեր բերին. իրիկուընէ դանոնք կը լեցնեն ջուրով. հետեւեալ աւտուն աղբիւրի ջուրին պէս հաճելի կ'ըլլայ. ասկէ դատ իրենց շուրջը ձմերուկի եւ սեխի արտեր կային, որոնց տեղական բարբառով պոստամ անունը կը տրուէր, այդ տեղերէն առատ ձմերուկ ու սեխ կը վայելէին:

* * *

Հետեւեալ աւտուն սկսան գործի: Որսորդները իրենց հրացանները առին՝ բաժնուեցան անտառին մէջ. աջէն ձախէն, առջեւէն, հետեւէն, հիւսիսէն, հարաւէն՝ հրացանները թան...թուն գոռալ սկսան. կ'որսային կաքաւ, դուռէճ, հաւ փալ, անտառի սօխակ, լորամարդի եւն. եւն.: Երկու երեք ժամ վերջը Մուսդաֆա պէյ եկաւ իր ընկերներով, տեսաւ որ Մեւքոն աւելի կանուխէն վերագարձեր է եւ իրենց բերած որսերուն կրկինը բերած է:

Մուսղաֆա պէյ ապշահար մնաց Մեքքոնին այս յաջողութենէն. անոր համար Ղուկասին դառնալով ըսաւ.

— Ուստա՛ Ղուկաս, Մեքքոնին համար ինչ որ ըսիր ինծի, ճիշդը ըսիր եւ դուցէ աւելի կ'արժէ. այսքան արագաշարժ, ամէն դործի մէջ ճարպիկ, քալելու մէջ յոգնիլ. չդիտցող, անվրէպ նշանառու մէկը տեսած չէի: Հիմա տեսայ որ իսկապէս ան դործունեայ մարդ է եւ դովնետնեւորու արժանի:

— Այո՛, տէր իմ, ըսաւ Ղուկաս, որքան դործունեաւ, այնքան ալ հաւատարիմ է:

— Կը հաւատամ որ այդպէս է, աւելցուց Մուսղաֆա պէյ:

Հայթաներուն մէկը խոհարար էր, սկսաւ տեսակ տեսակ համադամ կերակուրներ պատրաստել, դարնուած թռչուններու միսերով. այսպէս տասնեւհինգ օր երջանիկ կեանք մը ապրեցան ու յետոյ վերադարձան քաղաք. պահ մը մոռցան կեանքին տաղտուկները:

Մեքքոն ինչպէս իր քաղաքացիներուն մէջ, նոյնպէս ալ ղինուորական շրջանակին մէջ, ուշադրաւ համբաւ մը շահեցաւ:

Մուսղաֆա պէյ երկու սրտակից մտերիմներ ունէր արհեստաւոր հայերու մէջ. մէկը ղինադործութեան մէջ նշանաւոր Ուստա Ղուկասը, իսկ միւսը՝ որսորդութեան մէջ հռչակաւոր Տոնուղճու Մեքքոնը:

Մուսղաֆա պէյ որսի սիրահար մարդ մըն էր. երբ պատեհութիւն ունենար որսի երթալու, քաղաքիս մօտիկ շրջաններուն մէջ. անպայման միասին կը տանէր Մեքքոնը, առանց անոր որսի չէր երթար. որսորդութեան պահուն Մեքքոնը Պէյի յառաջապահ ղինուորն էր, որովհետեւ ղիտէր թռչուններուն բնակավայրը եւ անոնց բոլոր թաքըտոցները: Մեքքոն մէկ հատիկ էր, իր աչքին լոյսն էր:

Ղուկաս ըստ սովորութեան ամէն օր առաւօտուն կ'ընդունէր այցելութիւնը իր մեծաչուք Հիւրին, եւ կը մեծարէր զայն պատուական սուրճով:

Այսպէս օրեր, ամիսներ ետեւէ ետեւ ղլտորելով՝ վեր-

ջացաւ խաղաղ կերպով 1840 տարին եւ Դեկտեմբեր 31-ի օրը արեւն ալ մարը մտաւ :

Իրիկուն է :

Հայեր իրենց տուններու մէջ խրախճանքի մէջ են . հին տարին լմնցաւ , նորը կը սկսի . անոր համար հայրեր , մայրեր ճոխ սեղաններ կը պատրաստեն համադամ կերակուրներով , հոն կը շարունին զանազան տեսակ պտուղներ , անուշեղէններ եւ աղանդերներ . իրենց զաւակներուն հետ կ'ուտեն , կը խմեն , ուրախութիւն կ'ընեն՝ նոր տարին ողջունելով մինչեւ ուշ գիշեր : Կէս գիշերէն վերջ ձայները կը լռեն , մաղթելով աշխարհիս խաղաղութիւն . մարդիկ կը պատրաստուին հանդստանալ :

ԺԳ

Հետեւեալ օրը , 1841 Յունուար մէկ է . այն օրը արեւադալին կանուխէն Հայաստանեայց Եկեղեցւոյ կոչնակները սկսան աւելի եռանդօրէն հնչել , աւետելով աշխարհիս ծագող նոր օրը եւ նոր արեւը : Եկեղեցիին աղօթքի կը հրաւիրէ իր զաւակները՝ մաղթելու համար անոնց Մնորհաւոր Նոր Տարի եւ Բարի Կաղանդ :

Նոյնպէս ուրախութեամբ անցաւ Սուրբ Ծնունդը . ձմրան բուք ու փոթորիկներն ալ անյայտացած՝ առանց ցաւի ու առանց վշտի . եկաւ անուշ դարունը :

Գարնան , Ատանայի դաշտերը չուտով իրենց դորչադոյն հազուատները փոխելով , կը պճնուին կանաչազարդ խոտերով ու երփներանդ բոյսերով :

Քաղաքին հարաւային արեւմտեան կողմը , հազիւ հինգ վեց մղոն հեռաւորութեան վրայ , Աղսլա անունով ընդարձակ դաշտ մը կայ , որ նշանաւոր արօտաւայր մըն է . հոն առատ կանաչներ կան , մարդուս լանջահաս բարձրութեամբ :

Սովորութիւն է որ Մարտ ամիսէն վերջ , ախոռներէն կը հանեն ձիերը , Աղսլա կը զրկեն , հոն բաց դաշտին մէջ արածուելու համար . ամիս մը վերջը ձիերը կը վերա-

դառնան՝ պարարտացած, անճանաչելի երեւոյթով, աւելի կայտառ ու աւելի աշխոյժ:

Այս տարի Բամաղան ամիսը դարնան հանդիպեցաւ. տաճիկները այս ամիսը ծոմապահութեամբ կ'անցընեն ու դործելէ ալ կը դադրին: Ծոմ բռնող բոլոր տաճիկները ջղային վիճակ մը կ'ունենան. այդ օրերը բարկացոտ կ'ըլլան. հայերը չեն կրնար խօսիլ ու վիճիլ տաճիկներու հետ, պզտիկ բաներէ կը կատուին, որով կրնան աղէտալի հետեւեալները առաջ դալ. Բամաղանի ամիսը՝ փորձանքի ամիս է հայոց համար:

Մուսղաֆա պէյ Բամաղանի առթիւ իր այցելութիւնները դադրեցուց, Ղուկասին քով չէր դար:

Բամաղանն ալ անցաւ առանց արկածի: Վերջին օրը Արիֆէ էր, հետեւեալ օրը Պայրամ պիտի ըլլայ. այս վերջին օրը Մուսղաֆա պէյը եկաւ իր հետեւորդներով. անոնք նոտան աթուակներու վրայ, իւրաքանչիւրին ձեռքը մէյ մէկ երկայն համրիչներ՝ ժամանակ կ'անցընէին. ո՛չ կը ծխէին, ո՛չ կը խմէին, ոչ ալ կ'ուտէին:

— Ուստա՛ Ղուկաս, ըսաւ Պէյը, աշակերտդ զրկէ, որ Մեւքոնը հոս կանչէ, կարեւոր լաւիք մը ունիմ անոր:

Աշակերտը անմիջապէս զնաց եւ քիչ յետոյ վերադարձաւ Մեւքոնին հետ:

— Մեւքոն, ըսաւ Պէյը, վաղը Պայրամ է. այսօր երեկոյեան դէմ դուն Այպա զնա՛. բանտէի ձիերը Աղսայի արօտավայրը զրկած եմ. հոն ձիերուն նայող հայթաներ ունիմ. անոնք հոն թ.՛ղ մնան, իսկ անոնց վրայ հսկող հարկաւարները պաշտօնեալ հոս զրկէ. վաղը Ուլու ճամբի մէջ Պայրամի աղօթքը միասին պիտի ընենք. հարկաւարներս պաշտօնը դուն կատարէ վաղը. երեկոյեան դէմ պաշտօնեան իր տեղը կուգայ, դուն ալ կը վերադառնաս:

Մեւքոն սիրով ընդունեց այդ պարտականութիւնը եւ խոստացաւ անմիջապէս կատարել. այս խոստումին վրայ Մուսղաֆա պէյ, անհող ու վստահ՝ զնաց իր դործին:

Օրը իրիկուն եղաւ, զիշերն ալ խաղաղ անցաւ. հե-

տեւեալ օրը տաճիկները ցնծութեամբ բարեւեցին ծագող արեւը: Պայրամը եկած էր:

Քաղաքը եռուզեռի մէջ, թուրք մեծերը շտապ քայլերով խումբ խումբ մղկիթ կ'երթային աղօթելու. իսկ պըղտիկները նոր շորեր հագած, շուկայէ շուկայ, թաղէ թաղ վազելով վազվզելով ման կուգային քաղաքին մէջ, ուրախութեան ճիչեր արձակելով: Հայ արհեստաւորներն ու վաճառականները մեծ մասամբ կը զբաղէին իրենց առեւտուրով. քաղմութիւնը կը վխտար ամէնուրեք:

Այն օրը՝ սկստական մարդիկ Ուլու Ճամիի մէջ (Մեծ մղկիթ) կը կատարէին իրենց պայրամի աղօթքը, որ իրենց լեզուով «պայրամ նամաղը» կը կոչուի:

Յանկարծ Պայրամին դալուստը ողջունող թնդանօթի ձայները գոռալ սկսան. նշան էր որ աղօթքը վերջացած է. մղկիթէն կ'ելլէին:

Ղուկաս սովորականին սլէս, իր խանութը նստած կ'աշխատէր. փողոցին մէջ մէկէն երթեւեկութիւնը դադրեցաւ, մարդիկ շտապով մայթերու վրայ կ'ելլէին տեղ տալու համար...: Ըսին թէ Մուսղաֆա սէյր կուգայ:

Ղուկաս անմիջապէս ոտքի ելաւ դիմաւորելու համար. տեսաւ թէ Պէյը հեռուէն կուգայ, բայց այլակերպ վիճակով, քայլերը շտապ, ձեռքը ատրճանակի կոթին վրայ, պատրաստ կրակելու: Կարծես բարկութեան կրակ մը անոր ներսը հրդեհներ էր եւ բորբոքած բոցերը աչքերէն ու դէմքերէն դուրս կը ժայթքէին:

Պէյին այս արտառոց երեւոյթը որոշ էր ամէնուն, գուշակեցին թէ անպայման մարդ մը պիտի սպանէ այսօր. բայց զո՞վ, ոչ ոք գիտէր:

Մուսղաֆա Պէյ կեցաւ խանութին առջեւ.

— Ո՞ւր է Մեղքոն կեավուրը, հարցուց ցասումով:

Ղուկաս առաջին անգամն է որ անոր բերնէն կեանքի թաղը կը լսէր:

— Տէ՛ր իմ, Ձեր հրամանին համաձայն Աղլա դնաց, ըսաւ Ղուկաս, ահ ու դողի մատնուած:

— Ո՛հ: Աղսլա դադած է՛: հարիւրապետս չեկաւ եւ Պայրամի սուրբ աղօթքներէն զրկուեցաւ իմ պաշտօնեաս, ըսաւ Պէյը բորբոքած ցասումով եւ հրամայեց իր ղինակիր երկու Հայթաներուն, որ երթան րեբեն, իսլամական կրօնքի թշնամի այդ պիղծ կեալուրը:

Հայթաները անմիջապէս դացին: Մուսղաֆա Պէյին ցասումը հետզհետէ կը փոթորկէր. ատրճանակը դօտին քիչ մը դուրս քաշեց, ձեռքը տնոր կոթին վրայ. բարկութենէն շրթունքները կ'երերային ու մատները կը դողդողային եւ այսպէս կը սպասէր, ձեռքը վէճքին վրայ, կրակելու կազմ ու պատրաստ վիճակի մէջ:

Ղուկաս ալ հասկեցաւ որ Մեւքոն իր աչքին տոջեւ, անպայման պիտի սպանուի. անոր Աղսլա չերթալուն պատճառը անծանօթ է իրեն համար. սարսափ մը պատեց զինքը. հողեկան խռովք ու սարսուռներու մէջ ինկաւ. փրկութեան ճար մը կը խորհէր. յանպատրաստից բան մը յղացաւ, զնաց Պէյին ոտքը իյնալով պաղատաւից ձայնով ըսաւ:

— Տէ՛ր իմ, արդար եղէք, առանց դատելու մի՛ դատապարտէք. Մեւքոն անպայման Ձեր հրամանը կը կատարէր: Կիներ յղի էր. անոր ծննդաբերութեան օրերը շատ մօտ էին. գուցէ կնկան երկունքը սկսաւ ու այդ պատճառով չկրցաւ երթալ. ողորմեցէք ձեր ծառային, Տէր իմ. զթացէք անոր անմեղ դաւախներուն:

Ղուկաս կրկին եւ կրկին իր աղաչանքը կրկնեց անդերսարկու ձայնով մը:

— Իրաւ յղի՞ էր կինը, հարցուց Պէյը, իր ցասումներու մէջէն քիչ մը մեղմացած շեշտով:

— Կնոջ յղի ըլլալը քաջ գիտեմ. բայց չեմ գիտեր որ հիմա երկունքի մէջ՞ է, թէ ոչ:

Մուսղաֆա Պէյ քչիկ մը մտածեց ու յետոյ, խռատփողէն կոշտ ձայն մը հանելով հ. . . ը. . . մ մը ըրաւ, մռնչող վազրի մը պէս, ու ատրճանակը տեղը դետեղեց:

Հիմա երկրորդ վախ մը պատեց Ղուկասը. կինը յղի

չէր, սուտ խօսեցաւ. հարցաքննութեան պահուն երբ հասկնայ իրողութիւնը, ի՞նչ պիտի ըլլայ իր վիճակը. այս մտածումներու մէջ, երբ կ'ալեկոծէր իր հոգին, տեսաւ թէ երկու սուինաւորներուն մէջտեղ կուգայ Մելքոնը:

Մելքոնը մօտեցաւ թէ չէ, առանց հարցաքննելու, Պէյը սկսաւ իր երկայնաբազուկ թեւերով, հարուած հարուածի վրայ իջեցնել անընդհատ, դլխոյն, երեսին, քիթին, բերնին եւ ութգին հարուածներ:

Մեր առիւծասիրտ Մելքոնը, ահէն՝ գառնուկի մը երեւոյթը առաւ եւ Պէյին անակնկալ հարուածներու սաստկութենէն թուլցած, անմիջապէս գետին ինկաւ:

Մելքոնին մարմինը արդէն մերկ էր, սպիտակ կտաւէ կարճիկ մէկ վարտիկ, եւ կոնակին վրայ ալ բաց կուրծքով մէկ շապիկ ունի:

Մելքոն գետին իյնալէ վերջը, պէյը իր բարկութիւնը չկրցաւ առնել, սկսաւ բիւր սաստկութեամբ ոտքի հարուածներով զարնել. կատաղի պառչտութենով կ'ըսէր. — Թշնամի՛ անօրէն քեզի... կեաւուր, անօրէն կեաւուր... անհաւատ դարչնլի աղտոտ խող քեզի, խընդըր կեաւուր, կ'ըսէր ու անխնայ կը զարնէր ոտքի ահուելի հարուածներով:

Իւրաքանչիւր հարուածին, կօշիկի կրունկին գամուած պայտի պէս երկաթ խթանները կը մխուէին զոհի մարմնոյն մէջ, շերտ շերտ կը պատռէին մորթը, ուրկէ արիւնը դուրս կուգար. հարուածները անդուկ կ'իջնէին կուրծքին, կոնակին, վերստին կոնակին, նորէն կուրծքին, լողքարի պէս գլտորելով փողոցին մէջ անոր մարմինը, արիւնաթաթախ վիճակի մէջ իսկ, անգթօրէն հարուած հարուածի վրայ կ'իջնէր, իւրաքանչիւր հարուածը նորանոր վէրքեր կը բանար՝ զոհին մարմնոյն վրայ:

Ղուկաս տեսաւ թէ Մելքոնը հոգեվարքի մէջ էր, արիւնաշաղախ վիճակի մը մէջ ու տակաւին Պէյը կը չա-

րունակէր դարնել, դուլ ու դադար չունէր, կ'ուղէր այս ձեւով արիւնքու հրէշը մեռցնել խեղճ Մեւքոնը:

Ղուկաս յուսահատած ճիգով մը, վերստին համարձակեցաւ դադանին ոտքը իյնալ ու խնդրել, որ ներէ ալեւս:

Կատղած դադանը յանկարծ չառաչին աստակ մըն ալ իջեցուց Ղուկասի երեսին ըսելով:

— Կորսուէ՛, աղտոտ կեամբուր, դուն ալ այս անօրէնին ցեղէն չե՞ս:

Սեղճ Ղուկասը նիհար կաղմով մարդ մըն էր. մէկ հարուածէն դետին ինկաւ խելայեղ կերպով. հարուածի սաստկութենէն սկսաւ ականջէն արիւն հոսիլ:

Ղուկասին անկումէն վերջը կատղած դադանը, իր երկու դոհերը արիւնաթաթախ վիճակի մը մէջ ձգւելով հեռացաւ դնաց:

Այս սարսափաղդու դէպքէն հայերը զարհուրած էին. անոնք բեղապատառ փախան տուն, խանութները դոցեւով. հիմա դոհերուն քով հայ մը չկար, իսկ թուրքերը գոհունակ դէմքով հեռուէն կը դիտէին այս տխուր տեսարանը: Այս պայրամը ջարդի նման մահարոյր հոտ մը տարածեց հայերուն մէջ:

Ղուկաս դժուարաւ ելաւ ոտքի. իսկ Մեւքոն կը տառապէր, չէր կրնար ելլել, կուրծքին ու կռնակին ոսկորներն ալ վնասուած էին. ուշ ատեն բարեկամներ եկան հիւանդները տարին իրենց տուները: Ղուկաս ութը օր անկողին մնաց, խանութ չկրցաւ երթալ, իսկ Մեւքոն վեց ամիսէն աւելի սլառկեցաւ:

Ղուկաս իրեն հիւանդտեսի եկող բարեկամներուն կ'ըսէր սրտի ցաւով.

— Մեղք որ մեր նախահայրերու խօսքերէն չենք խըրատուեր. անոնց փորձառութենէն չենք օգտուեր. անոնք կ'ըսէին մեզի.

— Շան պոչը, որքան ալ մամուլի մէջ պահես, ծուռ է նորէն, ծուռ է, չի շտկուիր. տաճիկն ալ որքան յար-

դես, պատուես, նորէն տաճիկը տաճիկ է, հայուն ռիս-
րիմն է: Ո՛չ սոխին անուշը եւ ո՛չ ալ տաճիկին լաւը կ'ըլ-
լայ, կ'ըսէին. տաճիկները՝ տղրուկներու պէս հայոց ա-
րիւնով սնած ու մեծցած են. մեր հացով, մեր արիւնով
կը յագենան, մեր շինած դէնքերով ալ մեր վրայ կ'իջխեն
այնպէս. վայ մեղի կ'ըսէր ան իրեն այցելութեան եկող
հայերուն:

Ղուկաս շաբաթ մը վերջը հաղիւ ինքզինքը դտաւ ու
դնաց խանութ. ձրիակեր Մուսղաֆա պէյը չերեւցաւ
այլեւս. յարաբերութիւնը բոլորովին խղած էր. այլեւս
այդ շուկայէն ալ չէր անցներ եւ ոչ ալ Նաղ ճամին կու-
ղար ուրբաթ օրուան աղօթքներուն համար. վրէժխնդիր
էր ան. տակաւին բարկութիւնը իջած չէր. կը վախցուէր
անոր թշնամութենէն. Ղուկաս մտահոգ էր:

Ղուկաս Մեղքոնին այցելութեան դնաց, վիճակը ծա-
նըր էր. խեղճը չէր կրնար հանդիստ շունչ առնել. կուրծ-
քի ու կռնակի ոսկորները վնասուած էին. հարուածներուն
տեղերէն վէրքեր բացուած եւ ամբողջ մարմնոյն մօրթը
երաշխէպ եղած էր: Ոսկրաբոյժ մը՝ վնասուած ոսկոր-
ները, իսկ վիրաբոյժ մը բացուած արիւնոտ խոցերը բու-
ժելու համար կանչուած էին, որոնք մեծ խնամքով, պէտք
եղած դեղ ու դարմանները կ'ընէին:

Բայց Մեղքոն այն օրը ինչո՞ւ դացած չէ Աղսլա. պատ-
ճառը հասկցուեցաւ:

Աղսլան Մեղքոնին համար շատ շատ մէկ ժամուան
ճամբայ էր. ուղեր է որ դիշերը հանդիստ տունը մնայ.
Իսկ առտուն շատ կանուխէն երթայ Աղսլայի արօտավայ-
րը, եւ հարիւրապետը ղրկէ քաղաք. անիկա ձիով պիտի
դար, արեւածագին կը հասնէր եւ կրնար հանդիստ հան-
դիստ Պայրամի աղօթքին ներկայ ըլլալ. բայց դժբախտա-
բար քունը տարեր է եւ չէ կրցած արթննալ. անհոգու-
թեամբ դիշեր մը հանդստութեան համար, այս աղէտալի
դէպքին տեղի տուաւ: Մեղքոն յանցաւոր էր:

Մուսղաֆա պէյ, հրապարակի վրայ ա'լ չի տեսնը-
ւիր, ո՛չ ալ ուրբաթ օրերը Նաղ ճամիի մզկիթը կուղայ,

ինչպէս որ երբեմն կուգար. բայց անոր հայթաները նորէն Ղուկասին խանութը կ'երթան ու կուգան. Ղուկաս աւակամայ կը մեծարէ զանոնք, որպէսզի անոնցմէ չարիք մը չհասնի իրեն. թէեւ անոնք դործեր ալ կը բերէին, դոհացուցիչ վճարումներ ալ կ'ընէին, բայց Ղուկաս կը զդուէր անոնցմէ. մեր վարպետը անոնց մասին յաճախ տխուր կերպով կ'արտայայտուէր ու կ'ըսէր. — Ո՛չ Շամին չաքարը եւ ո՛չ ալ արապին երեսը, առածին պէս. ո՛չ հայթաներուն երեսը եւ ո՛չ ալ անոնց արդիւնաւէտ չահը:

Մուսղաֆա պէյ, Ատանայի մէջ մօտաւորապէս չորս տարի պաշտօնավարելէ յետոյ, կառավարութիւնը դնահատեց անոր թանկադին ծառայութիւնները եւ Սուլթան Ապտիւլ Մէճիտ Ա. փաշայութեան տիրոջ տուաւ անոր եւ այդ պաշտօնով փոխադրուեցաւ Դամասկոս:

Ղուկաս հանդիստ շունչ մը առաւ. ոչ եւս է իր ոխերիմը. անոր համար երկու եկեղեցիներուն մէջ զոյգ զոյգ մօմեր վառեց, աղքատաց սնտուկին նուէր տուաւ, փառք տալով Աստուծոյ, որ այդ հրէշը վերցուց Ատանայէն եւ փրկեց իրենց կեանքը գալիք չարիքներէն:

Բայց այդ հրէշին մնացորդ հայթաները տակաւին կուգային Ղուկասին քով, եւ առասպելական պատմութիւններ կ'ընէին Մուսղաֆա պէյին հերոսական քաջագործութիւններու մասին. հիացումով կը խօսէին, թէ Մուսղաֆա պէյ շատ մը պատերազմներու մէջ մտած եւ մեծամեծ յաղթանակներ չահած է, եւ հետզհետէ արժանացած է աստիճանի բարձրացումներու եւ եղած է Օսմանեան բանակին աջ թեւը. այսօր Դամասկոսի փաշա, քիչ ատենէն ալ Պոլսոյ մէջ Վէզիր մը պիտի ըլլայ կ'ըսէին:

Անցան ետեւէ ետեւ դէտորուող տարիներ, անյայտացան բաղձաթիւ հայթաներ, Ատանա եկան ու զայցին աղաներ, պէյեր, փաշաներ եւ ուրիշ զանազան բարձրաստիճան պաշտօնեաներ, բայց երկնակամարին վրայ փայլող ասուպներու պէս կորսուեցան:

Անոնց հետ կորսուեցան կեանքի զանազան դժուարութիւններ, դէպքեր, հոգեր, աղէտներ. իրար յաջոր-

դեցին պատահական բարիքներ, չարիքներ եւ բոլորովին մոռցուեցաւ երբեմնի Ատանայի Հայթա Պաշը Մուսղաֆա պէյը, եւ Դամասկոսի Մուսղաֆա փաշան. տասը տարուան շրջանին մէջ անոր անունն ալ ջնջուեցաւ մարդոց մտքերու յիշողութենէն:

Միայն Ուստա Ղուկասը երբեմն կը յիշէր այդ վայրենի բարբարոսը ու սոսկում մը կը զգար իր վրայ. որովհետեւ իր մորթին վրայ զգացած էր անոր վայրագ ցասուումը եւ հրէշային արարքը:

ԺԴ

Ինչպէս ըսինք, կառավարութեան շրջանակին մէջ, րազմաթիւ պաշտօնեաներ եկան ու դացին, բայց Սարաֆ Մկրտիչ Գասպարեանը մնաց իր պաշտօնին մէջ, որպէս պետութեան դանձապետը. նոյն դործը ան այժմ ալ կը շարունակէր ամենայն հաւատարմութեամբ:

Սարաֆ Մկրտիչը Ուստա Ղուկասին սերտ բարեկամն էր, միշտ ընտանեկան յարաբերութիւններ ունէին, մանաւանդ դիշերներ՝ շատ անգամ իրար կ'այցելէին ընտանեօք եւ սիրալիւ ժամանցներ կ'ունենային. երբեմն կիրակի ցերեկներն իսկ իրարմէ չէին բաժնուեր:

Սարաֆ Մկրտիչը մտաւորական դասակարգին կը պատկանէր, դերթէ եղական դէմք մըն էր ան. Պոլսէն հայերէն թերթ կը ստանար. երբ թերթին մէջ հետաքրքիր լուրեր կարդար, կամ Ուստա Ղուկասը իր քով կանչել կուտար եւ կամ ինքը կ'երթար անոր տունը, լուրը իմացնելու համար, որովհետեւ Ղուկասը դրել կարդալ չէր դիտեր, եւ ո՛չ ալ հայերէն լեզուն:

Այսպէս խաղաղ ու հանգիստ օրեր կ'անցընէին, բայց կարճ է հայուն ցերեկը, հայոց հանգիստը վերստին վերդովուեցաւ, դարձեալ վախ մը, երկիւղ ու ջարդի սարսափներ. նորէն սկսաւ վառօդին հոտը դալ. պատերազմի շուրջներ ծայր տուին. կեաւուր Ռուսիան եւ կամ այլ անունով Քիօր Մասկոփը անհանգիստ կ'ընէր Թուրքիան,

անոր համար տաճիկները սկսան խեղճ նայիլ հայերուն :

Քրիստոնեայ պետութիւններուն դոյութիւնը հայոց կործանումի պատճառ կ'ըլլար, որովհետեւ տաճիկին քով հայն ու ռուսը, Անգլիան ու Ֆրանսան մէկ են, միեւնոյն կեանքներն են. այսպէս, քրիստոնեաները չարունակ տուժած են եւրոպացիներու կռիւներէն եւ չարաչար տուժած :

Վերջապէս, Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ պատերազմը պայթեցաւ. Խորիմի պատերազմն է : Զարդը անխուսափելի պիտի ըլլար, եթէ վերջին հասնող լուրերը նպաստաւոր չըլլային :

Լուեցաւ որ Անգլիան եւ Ֆրանսան ալ տաճիկին հետ միացած՝ Ռուսիոյ դէմ կը կռուին. այս լուրը տիրող սարսափը փարատեց ու ջարդին առջեւ առաւ :

Մեր բարեպաշտ ազգը մէկ կողմէն կ'ուրախանար իր փրկութեանը վրայ, միւս կողմէն դարմանքով ցաւ կը յայտնէր թէ՝ ի՞նչպէս կ'ըլլայ որ քրիստոնեայ պետութիւնները, անօրէնին հետ միանալով, խաչապաշտ ազգի մը դէմ պատերազմ կը յայտարարեն :

Այս ցաւը, այս դարմանքը մինչեւ հիմա կը տիրէ մեր ժողովուրդին մէջ :

Այն ատենները փոսթայի երթեւեկութիւնները թէ դանդաղ էին եւ թէ ոչ-կանոնաւոր. Պոլսէն թերթերը հազիւ երեք չորս շաբաթէն կը հասնէին :

Սարաֆ Մկրտիչ եւ Ուստա Ղուկաս պատերազմական լուրերուն համար աւելի յաճախ տեսակցութիւններ կ'ունենային. շաբաթը դէթ երեք չորս դիշերներ միասին կ'անցընէին. այսպէս շարունակեցին անոնք հինգ վեց ամիսներ. պատերազմը կը զրաւեցնէր ժողովուրդին միտքը :

Զմեռ էր, ցուրտ ու բուք : Կէս դիշերին յանկարծ Ուստա Ղուկասին դուռը թակեցին : Ղուկաս ընդոստ արթնցաւ, պատուհանը բացաւ, բայց մութ էր, փողոցի դուռը թակող մարդը չճանչցաւ ու հարցուց :

— Ո՞վ էք :

— Ես եմ, Սարաֆ Մկրտիչ աղային սպասաւորը.
Աղաս հիմա քեզ կ'ուզէ:

— Բարրի ըլլայ. ի՞նչ կայ արդեօք, հարցունց Ղուկաս.
անհանգիստ է...

— Ոչ. փառք Աստուծոյ հանգիստ է. քովը հիւր մը
ունի հիմա:

— Ո՞վ է այդ հիւրը:

— Ձեմ գիտեր, ինծի ծանօթ չէ. նոր եկած է. կամ
տէրտէր է, կամ վարդապետ:

Լաւ, հիմա կուգամ ըսաւ Ղուկաս ու պատուհանը
դոցեց, հայճեալով հազաւ հագուստը ու գնաց՝ կար-
ծելով թէ պատերազմէն նոր լուր մը կայ:

Այն ատեն քարիւղ չկար, աղքատները ընդհանրապէս
կտաւատի իւղէ ճրագներ կը դործածէին. իսկ հարուստ
դասակարգը աշտանակներու վրայ մոմեր կը վառէր. երբ
մեծարելի հիւր մը ունենային մէկէ աւելի աշտանակներ
կը լուսաւորէին սենեակը:

Ղուկաս փողոցի դուռէն ներս մտաւ ու ելաւ հիւրա-
սենեակին յարկը. դուռը անշուկ կերպով, կամաց մը
հրեց, որուն կիսաբաց ճեղքէն ներս նայեցաւ. հինգ աշ-
տանակներ կը վառէին, անոնց պայծառ լոյսին մէջ տե-
սաւ նորեկ հիւրը՝ որ քահանայի մը հագուստը ունէր եւ
կը նստէր տանտիրոջ քով: Ղուկաս այս քահանայի տես-
քէն յանկարծ ցնցուելով ետ ետ քաշուեցաւ:

Մկրտիչին քով նստող նորեկ կղերին երեսը զար-
հուրելի մարդու մը դիմագիծը կը կրէր. աչքերը չփե-
լով կրկին նայեցաւ. այո՛, ճիշդ անոր կը նմանէր, բայց
քիչ մը աւելի նիհար ու ալեխառն մազով. նոյն սոսկու-
մով դարձեալ ետ քաշուեցաւ ան եւ չհամարձակեցաւ
ներս մտնել. ջերմեռանդ սրտով խաչ մը հանեց երեսին
ու զարմացական մտածումով մը ըսաւ ինքնիրեն:

— Աստուած իմ, ի՞նչ անիմանալի ստեղծագործու-
թիւններ ունիս. անորէն տաճիկ մը կը ստեղծես, նոյն
դիմագիծով ալ հայ քրիստոնեայ մը եւ քահանայ մը...:

Ղուկաս երկիւղալի տարակուսանքով ներս մտաւ.

առանց ձայնի, ձեռքի շարժումով մը բարեւեց նստողները. չկրցաւ հոգեւորականներու յատուկ— Օրհնեա՛ Տէ՛ր եւ կամ Աստուած օգնական բաւերով ողջունել նստող կղերականը, եւ ո՛չ ալ համարձակեցաւ անոր աջը առնել, ինչ որ այն ատենուան աշխարհականներու համար օրինաւոր պարտք մըն էր, եւ կամացուկ մը նստաւ անոնց քովի բազմոցի վրայ:

Նստողներն ալ առանց ձայնի, ձեռքի շարժումով մը միայն առին Ղուկասին բարեւը: Սենեակին մէջ նստող երեք անձերը մարմարէ շինուած արձաններու պէս, անշարժ կը կենային. բայց յայտնի էր որ անոնց մտքերը՝ փոթորկալի ծովու մը պէս, մտածումներու մէջ կ'ալեկոծէին եւ ոչ մէկը կը համարձակէր նախարան մը պատրաստել՝ խօսելու համար:

Հիւրասրահին մէջ կը տիրէր խորհրդաւոր լռութիւն մը. եւ այս լռութիւնը յամառօրէն շարունակուեցաւ կէս ժամէն աւելի:

Վերջապէս նորեկ հիւրը լռութիւնը խղեց ու իր խօսքը Ղուկասին ուղղելով ըսաւ.

— Ուստա՛ Ղուկաս, հերիք որքան լռեցինք. օտարի պէս ներս մտար ու անծանօթի պէս վարմունք ունեցար մեզի դէմ. արդեօք չճանչցա՞ր զիս:

— Ո՛չ, չճանչցայ:

— Լա՛ւ նայէ. կեանքիդ մէջ ինծի պէս մարդու մը չե՞ս հանդիպած, չե՞ս տեսած:

— Ո՛չ, Տէր հայր, չեմ տեսած:

— Ներողութիւն. ո՛չ տէրտէր եմ ես եւ ո՛չ ալ վարդապետ. ուշադրութեամբ նայէ ինծի, անպայման պիտի յիշես զիս:

Ղուկաս երկար մտածեց ու չկրցաւ իր գիտցածին պէս արտայայտուիլ. մարդ մարդու գուցէ կը նմանի մտածումով. դարձեալ կրկնեց իր նախկին խօսքը եւ ըսաւ.

— Ո՛չ, եղբայր չեմ յիշեր:

Ինծի նայէ՛ Ղուկաս, քու դիտցած, քեզի ծանօթ եւ հիմա քու մտքէդ անցած, քու խորհած մարդդ իսկապէս ես եմ :

Իպրահիմ փաշային զօրքերը հալածելով, Ատանան դրաւոյ Օսմանեան բանակին զօրապետը ես ինքս եմ :

Ատանայի մէջ դողերուն ու աւազակներուն սարսափ ազդու չալթա սլաշը Մուսղաֆա Պէյը նորէն ես եմ :

Քու խանութիդ առջեւ Մելքոնը սպաննելու աստիճան, վայրագօրէն ծեծող, անդուծ տաճիկը դարձեալ ես եմ :

Այո կը յիշեմ, մէկ ապտակով քեզ մայթի վրայ, խելակորոյս դլտորող դաղան թուրքը վերստին ես եմ :

Աստիճանի բարձրացումով, Ատանայէն Դամասկոս դացող Մուսղաֆա Փաշան ալ, ճիշդ ու ճիշդ ես եմ. ալ մի կասկածիր... Յետոյ ծռնկի եկաւ. բաղկատարած ձեռքերով աչքերը երկինք համբարձած Աստուծոյ փառք տալէ վերջը, բարեպաշտ զգացումով երեսը խաչակնքեց ու ըսաւ .

— Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Եղբայր, այսօր Հայ Քրիստոնեայ եմ եւ անունս ալ Մահտեսի Պօղոս :

Այս բառերը արտասանած սլահուն, կուլար Մահտեսի Պօղոս, հեծկլտանօք կ'արտասուէր եւ ճիշտ իր Տէրը ուրացող Պետրոսի նման, զղջման դառն արցունքներով կ'ողողէր իր թառամած այտերը :

— Ներէ՛ ինծի, Ղուկա՛ս, ներէ՛, ինչպէս ներեց մեր Տէրը՝ զինքը չարչարող աւազակներուն. ներէ՛ ինծի, Եղբայր, ներէ՛, ինչպէս ներեց Սուրբ Ստեփաննոս զինքը քարկոծող անօրէններուն. այսօր մեղայի եկած՝ քեզմէ ներողութիւն կը խնդրեմ, ըսաւ ան ու փաթթուեցաւ Ղուկասի պարանոցին. կը համբուրէր անոր դէմքերը կրկին ու կրկին եւ իր արցունքներով կը թրջէր անոր այտերը :

Ղուկաս իռկոյն հոգեփոխուեցաւ. այս անակնկալ

դէպքը յուզեց ղինքն ալ եւ անոր սլէս ինքն ալ սկսաւ լալ . Ղուկասի սրտին մէջ առաջ եկած Մուսթաֆա Պէյին հանդէպ ատեւութեան բոցը մէկէն մարեցաւ . Մահտեսի Պօղոսի թափած հեղեղահոս արցունքներէն :

Կուլային երկու բարեկամները՝ իրարու վրին փաթթուած , համբոյր համբոյրի վրայ զրոշմելով . այս շատ յուղիչ տեսարանէն աղղուելով , Սարաֆ Մկրտիչն ալ սկսաւ լալ ու արտասուել . այս արտասուքները ուրախութեան արցունքներ էին :

Իրարու փաթթուած երկու բարեկամներ , պահ մը վերջը զատուեցան . Ղուկաս իր խօսքը Մահտեսի Պօղոսին ուղղելով ըսաւ :

— Մի՛ մտահոգուիր եղբայր , ամբողջնիս ալ մեղաւորներ ենք . առանց մեղքի մարդ չկայ . ամէնուն մեղքը ներող միայն Աստուած է . աղօթենք որ Տէրն Աստուած իր հայրական զթութեամբ ներէ մեր ամէնուն ալ մեղքերը . մենք հիմա մեր Հայաստանայց եկեղեցիին հայ զաւակներն ենք . ուրեմն հարողատ եղբայրներ ենք . խնդրեմ պատմէ մեզի թէ՛ ի՞նչպէս տեղի ունեցաւ այս հրաշալի փոփոխութիւնը :

Մահտեսի Պօղոս պատմեց հետեւեալը , որ իր թէ՛ պատմութիւնն էր եւ թէ՛ կենսադրականը :

— Վանայ հայ գիւղացիի մը զաւակն եմ . հայրս յայրս Հայաստանայց եկեղեցւոյ հարազատ զաւակներն էին , եւ անոնց սուրբ ամուսնութենէն աշխարհ եկած միակ որդին ես էի եւ անունս ալ Պօղոս էր . հայրս կանուխէն մեռաւ եւ ես որբ մնացի . մեր գիւղի քահանայն շատ կը սիրէր զիս եւ եկեղեցիին ալ փոքրիկ դպիրն էի :

«Երբ տասը տասներկու տարեկան եղայ իմ հասակակիցներուս հետ սկսայ դժուարութիւլ , ինչ որ մանուկներուն նախասիրած խաղն էր . այս ճիւղին մէջ համբաւ չահեցայ գիւղիս մէջ , ոչ մէկը իմ կռնակս կըրցաւ դետին բերել . քիչ ժամանակէն մատով ցոյց կուտային զիս իմ հայրենակիցներս եւ կ'ըսէին .

Պօղոսը մեր գիւղին ախոյեանն է, ապագայ խոստացող դաւակ մը:

Այս սին դովեւտները զիս փառասիրութեան մղեցին, եւ այդ դործիս մէջ յառաջանալով համարաւ տաճարացի շրջակայ գիւղերու մէջ եւս. այնպէս որ հասակակիցներս այլեւս ինծի հետ չափուելու քաջութիւնը չէին ունենար. սկսայ մենամարտիլ չափահաս երիտասարդներուն հետ ալ:

Երբ տասնըհինգ տարեկան եղայ մարմնական կազմով յաղթանդամ երիտասարդի մը երեւոյթը առի. շատ անգամ քսան-քսանըհինգ տարեկան երիտասարդներու հետ կը չափուէի. մարմնական ուժս տեղն էր, բայց կը զգայի թէ աչքերուս ուժը աւելի հզօր էր, բաւական էր որ ըմբիշի մը հետ գիրկընդխառն կռուի բռնուէի. հակառակորդիս աչքը երբ վայրկեան մը աչքիս հանդիպէր, ալ անմիջապէս կը զգեստնէի զինքը:

Օր մը մեր շրջանակին մէջ համարաւ առած տաճիկ ըմբիշ մը, չեմ գիտեր ուսկից ուր, ասպարէզ կարդաց ինծի: Այն ատեն հազիւ տասնըվեց տարեկան էի, սիրով ընդունեցի հրաւերը:

Հայ, տաճիկ ահագին բազմութեան մը առջեւ, սկըսանք մենամարտիլ այդ ըմբիշին հետ. քառորդ ժամ չտեւեց եւ, ըմբիշին կուրծքին վրայ նստած էի ես. պարտուած էր տաճիկը:

Իսկոյն թուրքերը բիրերով, քարերով վրաս խուժեցին. ժողովուրդին մէջ իրարանցում մը, կռիւ մը սկսաւ. հայ երիտասարդները զիս պաշտպանելու համար տաճիկներու հետ կը կռուէին. կեանքս մաղապուր աղատեցի, մեծ մասամբ հայոց օգնութեամբ եկայ գիւղս:

Գիւղիս մեծերը ըլլայ այր, կին, վրաս խուժեցին, սկսան յանդիմանել զիս եւ չողեցին որ ուրիշ անդամ մենամարտիմ ունէ մէկուն հետ. այդ զգուշացումը գիւղը վտանգներէ զերծ պահելու համար էր:

Յաղթանակներ չահելու մարմաջը, ունայն փառա-

սիրութիւնը այնքան սաստկացան իմ մէջս, որ անդոսնեցի բոլոր մեծերուս խրատներն ու սաստերը. փախայ երկրէս, եկայ Սերաստիա: Մոռցայ զիւզս, մոռցայ մայրս ու ամբողջ հայրենակիցներս. ուրացայ աղղս ու կրօնքս, տաճկեայ եւ կոչուեցայ Մուսղաֆա. քիչ յետոյ միջոցը դտայ, տաճկական բանակին մէջ արձանագրուելով դառնալու Հայքա Մուսղաֆա:

Այս ասպարէզը, փափաքիս համաձայն, փառքէ փառք տարաւ զիս ըլլայ ըմբռամարտութեան մէջ, ըլլայ պատերազմներու մէջ, յաղթանակէ յաղթանակ կը քալէի ու համբաւս կը տարածուէր ամէն կողմ:

Թուրքիոյ մէջ տեղի ունեցած ներքին ու արտաքին, մեծ ու պղտիկ կռիւներու մէջ դտնուած եմ՝ ճակատէ ճակատ վազելով, հերոսական քաջութիւններով յաղթանակներ չահած եմ, ու եղած եմ բանակիս բարձրաստիճան մէկ սպան: Ու այդ պաշտօնով ալ եկած եմ Աստանա:

Այս տեղի դործունէութիւնս ծանօթ է ձեզի. ամբողջ կեանքիս մէջ, իմ ազգիս ուէէ մէկ անհատին չարիք մը ըրած չեմ. թէեւ ուղղակի չեմ կրցած ծառայել, թայց անուղղակի կերպով միշտ օգտակար եղած եմ:

Ձեմ զիտեր այն օրը, ո՞րպիսի չար վայրկեաններու հանդիպեցայ, եւ կամ ո՞ր սատանան մտաւ ներսս եւ դրդեց զիս, որ այնքան մոլեգին կատաղութեամբ յարձակեցայ ձեր վրայ եւ այդ դժբախտութեան մատնեցի ձեզ:

Ոճիրէս պահ մը վերջը, գինովութենէ արթնցող մարդու մը պէս սթափեցայ, ըրած չարիքիս մեծութիւնը հասկցայ. բայց ճար չկար, դարմանը անկարելի էր. ալ խղճահար հղայ եւ այդ խղճահարութիւնը մինչեւ հիմա կը տանջէ զիս:

Թէեւ Փաշա եղայ եւ այդ պաշտօնով Դամասկոս ուղեորուեցայ, նորէն խղճիս խայթը կը կրծէր միտքս: Տխուր էի, ճամբաներու այդ գեղեցիկ տեսարանները,

ընկերական հաճոյալի դուարձութիւնները չկրցան փա-
րատել իմ հոգեկան տխրութիւնս եւ չկրցան անհետացը-
նել սրտիս կսկիծները որոնք կը տանջէին զիս :

Այս հոգեւտանջ վիճակով նժոյգիս վրայ նստած կը
ճամբորդէի . յանկարծ ընկերներս ուրախալի բացաւան-
չութիւններով ըսին ինծի .

— Փաշա', Փաշա', աչքդ լոյս, մօտեցանք, ահա'
Դամասկոսը կը տեսնուի :

Հաղիւ ականարկ մը նետեցի, տեսայ մզկիթներուն
ամպեր ձեղճող աշտարակները, մէկէն ձիւս վար գլտո-
րեցայ ու սկսայ փղձկալ ու լալ :

Ընկերներս զարմանքով անմիջապէս ձիերէն վար
իջան, շրջապատեցին զիս ու սկսան տեղատարափ հար-
ցումներ ուղղել :

— Փաշա ի՞նչ եղար, Փաշա ի՞նչ ունիս, Փաշա ո՞ր
տեղդ կը ցաւի, Փաշա, Փաշա... Եւն. :

Այդ հարցումներուն չէի կրնար պատասխանել հեծ-
կըլտութենէս, որոնք խեղդելու աստիճան կը տանջէին
կոկորդս . եթէ կարենայի իսկ չէի կրնար բուն պատճառ
ըսել :

Ջուր բերին, ձեռքերս, Լեւոններս լուացի, ինքզինքս
զսպեցի՝ լացը դադրեցնելու համար եւ յետոյ այդ հար-
ցումներուն կտրուկ պատասխան մը տուի :

— Ստամբուլիս մէջ մէկէն սաստիկ ցաւ մը ունե-
ցայ :

— Պաղատութիւն է, փաշա', մի' վախնար ըսին . անմի-
ջապէս սուրճ մը պատրաստեցին, տաք տաք խմեցի, որ-
պէս թէ քիչ մը հանգստացայ :

Բուն ցաւս խղճի ցաւս էր, որ չէի կրնար անոնց բա-
ցատրել :

Մանկութեան օրերուս յիշատակները արթնցան հո-
գիիս մէջ . միտքս ինկան մեր գիւղը, մեր գիւղի ծերուկ
քահանան եւ անոր քարոզը, որ կ'ըսէր .

— Սուրբ Ստեփաննոսի սպանման կամակից եղող

Պօղոս, քրիստոնեաները հալածելու համար բարձր սլաշ-տօնով Դամասկոս գնաց. երբ քաղաքը մտաւ, յանկարծ լոյս մը փայլատակեց եւ այդ փայլակի մէջէն լսեց ձայն մը.

— Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս :

Ճիշդ էս ալ նոյն պաշտօնով հոն կ'երթայի, եւ իմ ա-նունս ալ Պօղոս էր. առաջին անգամից կարծեցի որ նոյն լոյսը փայլատակեց ինձ համար ալ, ու ձիւն վար ձգեց զիս, այնպէս իմացայ որ նոյն ձայնը զիս ալ կը յանդի-մանէր ու կ'ըսէր.

— Պօղոս, Պօղոս, մինչեւ ե՞րբ սկիտի հալածես զիս :

Վայրկենապէս միտքս ինկաւ որ, Մեղքոնն ու Ղու-կասը հալածեցի, վայրկենական զղջում մը եկաւ վրաս ու չկրցի յուզումէս ինքզինքս դսպել ու սկսայ դառնա-սէս լալ:

Ալ նուրկանք զգացի այդ ասպարէզէն, զինուորական փառքեր ու պատիւներ այլեւս միտքս ու հոգիս այրող, տանջող աղդակներ եղան ինծի: Այդ սին փառքերէն պըժ-դացող Պօղոսին պէս, էս ալ զղջումով դարձի եկայ. այդ վայրկեանին որոշեցի վերջնականապէս հեռանալ այդ դժոխային կեանքէն. կեանք մը՝ որ այնքան փառքերով չկրցաւ զիս երջանկացնել:

Որպէս հիւանդ դացի Դամասկոս, փախուստի ճամ-բայ կը փնտռէի. այդ ուղղութեամբ յղացած ծրագիրս պատրաստեցի մէկ ամսուան մէջ:

Ծրագրիս վերջին դիշերն էր. սենեակիս մէջ առան-ձին էի:

Վրէժի բարկութեամբ ջարդ ու փշուր կոտորեցի այն թանկագին ատրճանակներս, որոնք իմ ցեղիս համար յդոռացին:

Ատելութեան բոցով, այդ յաղթանակներ չահող սուրս ջախջախեցի, որ իմ աղգիս համար չփայլեցաւ:

Նախանձի կիրքով, զինուորական ոսկեճամուկ ըզ-

գեստներս, սուր մկրատի մը բերնին տալով, մանր մունր բրդեցի ու նետեցի հնոցի մը մէջ, որոնք իմ տոհմիս փառքին համար չչողացին:

Հազայ մուրացիկի մը քուրջեր, այլակերպեցայ բոլորովին. ցուպ մը ձեռքս գիշերանց ելայ քաղաքէն, եւ քայլերս ուղղեցի դէպի Երուսաղէմ:

Հասայ Երուսաղէմ, որպէս աղքատ հայ ուխտաւոր, մտայ Սուրբ Յակոբայ վանքը. հոն առաջին անգամ էր որ, երեսներս մեր տաճարին սրբատաշ քարերուն քանդու, համբուրելու արժանի եղայ. հոգեւոյս ծնողներուս պէս երկրպագելով աղօթեցի ջերմեռանդօրէն. առաջին անգամ է որ յուզումով ունկնդրեցի ժամերգութեան երգեցողութիւնները, որոնցմէ զրկուած էի պատանի տաւրեքս ի վեր:

Մնացի Երուսաղէմ, ծառայեցի միաբանութեան որպէս աւելածու սպասաւոր, եւ երբեմն ալ որպէս խոհանոցի օգնական. հազայ միաբանական հագուստը եւ ապրեցայ վանքին անշուք մէկ խուցին մէջ, կարծր անկողինի մը վրայ: Բայց խկապէս ուրախ եւ երջանիկ էի. այնպէս որ հոյակապ պալատներու եւ քնքուշ անկողիններու մէջ խիկ չզգացի այդ երջանկութիւնը:

Ինը տարի ապրեցայ այսպէս, տասներորդը կը մօտենար, ապաշխարութեան օրերս լմնցուցի, պատրաստուեցայ խոստովանիլ ու հաղորդուիլ:

Մինչեւ այն ատեն ոչ ոք դիտցաւ թէ ես ո՞վ եմ. միայն այն օրը խոստովանահօրս պատմեցի մեղքերս ու դործերս: Խոստովանահայրս զգուշացուց զիս հաղորդուելէ, եւ պատուիրեց որ, ուր որ քրիստոնեաներուն չարութիւն ըրած եմ, նախ հոն պիտի երթամ, անոնցմէ ներողութիւն պիտի խնդրեմ եւ հրապարակաւ քրիստոնեայ ըլլալս պիտի յայտնեմ, եւ յետոյ պիտի կրնամ Սուրբ Հաղորդութեան արժանի ըլլալ:

Ահա՛, Ղուկա՛ս, այս սուրբ նպատակին համար հոս եկայ՝ ձեզմէ ներողութիւն խնդրելու. վաղը առաւօտ

Մեկընդ Քու խանութդ կը կանչես . ես ալ հոն պիտի դամ ,
անոր ոտքերը համբուրելով ներողութիւն պիտի խնդրեմ :
որովհետեւ դուք քառութեան նոխադ եղաք իմ հոգևոյ
փրկութեան համար . երախտապարտ եմ ձեզի :

— Ո՛չ , եղբայր , չըլլայ որ դաս խանութս . աւելի լաւ
է , որ տան մը մէջ տեսնուինք , որովհետեւ տաճիկները
քեզ անմիջապէս կը սպաննեն , ըսէ անոր :

Մահտեսի Պօղոս , անդրդուելի մնաց իր որոշումին
մէջ . առաքելական շունչով լեցուած հոգի մըն էր ան .
նահատակուիլը իրեն համար անմահ փառք մը նկատեց
եւ այդ որոշումին ակամայ համակերպեցան ընկերներն
ալ :

* * *

Արեւը ծագած էր . Ղուկաս աճապարեց տուն , դործի
դեկատները հաղնելէ յետոյ դնաց խանութ . ծրագրի հա-
մաձայն Մեկընդ կանչուած էր :

Ղուկաս վախ մը ունէր . կը կարծէր թէ տաճիկները
կտոր կտոր պիտի ընեն Մահտեսի Պօղոսը . երկաթի կտոր
մը մամուլին տուած՝ շտապ շտապ կը խարտոցէր , որպէս
թէ բանի մը վրայ կը դործէր . մարմինը կը դողար երկիւ-
ղէն , կը սպասէր փոթորկալից վայրկեանին եւ կ'աղօթէր
որ Աստուած չար փորձանքներէ պաշտպանէր զիրենք :

Հեռուէն փողոցի վերի ծայրէն տեսնուեցաւ Մահտե-
սի Պօղոսը հպարտ ու գլուխը ցից . վեհ քալուածքով ,
առաջուան պէս իր շուրջը դիտելով կուգար , աներկիւղ եւ
անվախ , երկայն մօրուքը առիւծի բաշի պէս լայն կուրծ-
քին վրայ տարածուած , ալիք ալիք տատանելով կը մօտե-
նար՝ միաբանական այքանչուք տարադով :

Կը հասնի խանութ , Մեկընդ անմիջապէս ոտքի կ'ելլէ ,
սիրալիք կարօտով կ'ողջագործուին Մահտեսի Պօղոսին .
հետ արտասուածութեամբ աչքերով կը համբուրուին , եւ իս-
կապէս վանականը կը խոնարհի Մեկընդի բոպիկ ոտքե-
րուն , Յիսուսի ոտքերն ալ բոպիկ էին ըսելով՝ կը փնայ
համբուրել զանոնք : Մեկընդ տեղի չի տար այդ բանին՝

ներողութիւն խնդրելով: Այսպէս վերջացաւ յուղումնալից արարողութիւնը:

Երբեմնի մեր վսեմաշուք հիւրը կը նստի աթոռակի վրայ, վանականի մը խեղճուկ հագուստով. Ղուկաս ըստ սովորութեան սուրճը կը պատրաստէ. ախորժակով կը խմէ Մահտեսի Պօղոս, որ այն դժբախտ օրէն ի վեր չէր խմած այդ համով հոտով պատրաստուած սուրճը:

Բայց այս պահուս, շուկայէն անցնող դարձող տաճիկներ եւ դիմացի Եաղ ձամիի հոճանները, մոլլաները, սօֆտանները իրարանցումի մը մէջ էին. հետաքրքիր բազմութիւն մը հեռուէն կը դիտէր Ղուկասին խանութը: Պիշ պիշ նայուածքներ, փսփսուքներ այլեւս լսելի կ'ըլլային, — այո՛, ան է... Ո՛չ, ան չէ... անոր կը նմանի. ո՛չ, ի՛նքն է. այսպէս ըսողներուն թիւը կը շատնար եւ այսպէս մեծ բազմութիւն մը կը լեցուէր շուկային մէջ:

Այս միջոցին Պօղոս ոտքի ելաւ. մազնիսական աչքերով նայուածք մը ուղղեց վերէն վար բոլոր ներկաներուն, ապա բարեւեց այդ բազմութիւնը եւ ըսաւ.

— Այո՛ ես եմ, Երբեմնի Հայթա Պաշը Մուսղաֆա պէյը, բայց հիմա հայ քրիստոնեայ եմ եւ անունս Հաճի Պօղոս է:

Յնցուեցաւ ժողովուրդը եւ սկսաւ ալիք ալիք ետ քաշուիլ:

Հրաշք մը տեղի ունեցաւ. այդ վայրագ ամբոխը ամօթահար, պապանձեցաւ, ու մէկիկ մէկիկ ամէնքը ցըրուեցան՝ առանց բառ մը ըսելու. Մահտեսի Պօղոսին առջեւէն անյայտացաւ գիշատիչ վոհմակը, լոյսին առջեւէն փախչող խաւարին պէս:

Մահտեսի Պօղոս, ամէն օր աներկիւղ կը պտտէր քաղաքին ամէն կողմերը եւ առտու լրիկուն եկիղեցիէն պակաս չէր ըլլար:

Ղուկաս քանի մը անդամներ ճաշի եւ ընթրիքի հրաւիրեց Մահտեսի Պօղոսը, միեւնոյն սեղանին սեղանակից եղած եւ միասին ընթրած էր Ղուկասի որդին՝ Յովհան—

նէսը, որ այն ատեն տասնեւեօթը տարեկան պատանի մըն էր:

Մահտեսի Պօղոս ամիս մը վերջը հրաժեշտ առաւ իր բարեկամներէն՝ երթալու համար Երուսաղէմ: Մեկնեցաւ առաքելաշնորհ վանականը՝ սրբոց կեանքը ապրելու համար վանքին անշուք խուցերէն մէկուն մէջ:

Այդ թուականին թուրքիոյ մէջ քրիստոնեաները կըրնային դիւրութեամբ թրքանալ, կամ իսլամանալ. վնաս մը չկար անոնց կեանքին, ընդհակառակը, կը յարգուէին:

Բայց թուրք մը, կամ իսլամ մը անկարելի էր որ քրիստոնեայ ըլլար. անմիջապէս մահուամբ կը պատժուէր:

Ատանայի մէջ նախկին Մուսղաֆա փաշան, Մահտեսի Պօղոս անունով պտըտիլը, ողջ-առողջ եւ անվնաս հոս-հոն երթալը, իսկապէս աստուածային հրաշք մըն էր որ տեղի ունեցաւ նոյն քաղաքին մէջ:

Իրապէս հրաշքի հաւասար դէպք մըն էր պատահածը, աննախընթաց դէպք մը, ինչ որ ինքնուրուշ տաճիկները չկրցան սպաննել իսլամական կրօնքը հրապարակով եւ քաջութեամբ ուրացող Հայթա Մուսղաֆան:

ԺԵ

Չաղմաղճը Ուստա Ղուկաս Մանկոյեանի որդին՝ Յովհաննէսը իմ հայրիկս է եւ աւանատես անձը Մահտեսի Պօղոսին, որուն հետ մի քանի անգամ միասին ճաշեր է մէկ սեղանին շուրջ:

Հողերոյս հայրս՝ Յովհաննէս, ուսմունք չունէր, հայերէն ալ չէր գիտեր, բայց իր պատմութիւնները գեղեցիկացնելու ձեւերը շատ լաւ գիտէր, ունկնդիրներու ուշադրութիւնը շուտով կ'առինքնէր եւ անոնց հետաքրքրութիւնը կ'արթնցնէր:

Հայթա Մուսղաֆային անգիր մատենէն սորված այս պատմութիւնը իր գլուխ գործոցներէն մէկն էր:

Երբ սկսէր դայն պատմել, ուշադրութեամբ կ'ունկընդդէի, որքան լսէի այնքան աւելի լսելու փափաքս կ'աւել-

նար մէջս. այս պատմութիւնը մտիկ ընելէ չէի ձանձրա-
նար, աչքերս պիշ պիշ հայրիկիս շրթունքներուն վրայ կը
գամէի՝ այնտեղէն թափուած բառերը անյադ ախորժա-
կով լափել կ'ուզէի, ոսկեբերան շրթունքներէն բխած քա-
րողի նման:


Հայթա Մուսղաֆային նկարագրութիւնը կը հետա-
քըքրէր ամբողջ էութիւնս. սիրտս թունդ կ'ելլէր ու կը
սկսէր տրոփել. անոր գործունէութեան շրջանները տե-
ղին համեմատ այնպիսի ձեւերով կը բացատրէր, որ պա-
տանեկան սիրտս կը սկսէր շարժիլ՝ ալեկոծ ծովու վրայ
տատանող մակոյկի մը պէս:

Երբ անոր հայավնաս ընթացքի մասին խօսէր, մա-
նուկ սիրտս գեհնի մը կը վերածուէր, որուն մէջ կ'այ-
րէր, կը մրրկէր հոգիս. խարոյկներու վրայ ողջակիզուող
զոհներուն պէս, յուզումէս աչքերս կը լեցուէին արցուն-
քով:

Բայց քիչ յետոյ այդ տխրութիւնը ուրախութեան կը
փոխուէր, երբ անոր վերադարձը նկարագրէր, իսկոյն
կ'այլափոխուէի, այս անգամ սիրտս լուսազարդ տաճար-
ներու նման մեհեանի մը կը վերածուէր. զգացումներս
ալ ճենճերող անուշարոյր խունկերու, իսկ մանկական հո-
գիս ալ՝ խնկարկող հրեշտակ մը կ'ըլլար. խնկարկելով
կ'երգէր ու կ'օրհնէր Մահտեսի Պօղոսին, այդ առաքելա-
շնորհ վանականին անյայտ գերեզմանը եւ անոր անծանօթ
յիշատակները, որոնց արժանի է ան այժմ եւ միշտ յաւիտե-
ական:

Վ Ե Ր Զ

Լառնաֆա



ԳԱՍ Հիմնադրար Գիտ. Գրադ.



FL0548892

[22]

ЦЕНА

644
—
582

Արամ
Բաժնի
— Գրքարան

